

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՓՈՒԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ — Ականջալուր ըլլանք Սրբոց Ղեկնդեանց ու Վարդանանց պատգամին	1
--	---

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՊԱՄՆԵՐ

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ — (Ս. Ծննդեան Պատգամ) Դառնանք՝ մահեն դեպի կեանք առաջնորդող Զրիստոսին	4
ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ — (Նոր Տարուան Պատգամ) Համախմբուիք ազգի ու հայրենիքի գերագոյն շահերուն շուրջ	7
ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ — 2023 Սփիւռքի Տարի (Բ.) Ինքնաքննութենէ վերակազմակերպում	9

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ — Աստուծոյ դառնալ (Turning to God)	22
---	----

ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ

ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ — Մեկնութիւն Մատթեոս Աւետարանի (2.4-11)	27
---	----

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ԴՈԿՏ. ՍԱՐԳԻՍ Ա. ԶԷՅԵԱԵԱՆ — Կանտի բարոյագիտութեան Նորարարութիւնը	35
--	----

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ՀՈՒՐԻ ԱԶԷԶԵԱՆ — «Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետական 25-ամեայ գահակալութիւն (1995-2020) Արժեւորում եւ Վկայութիւններ»	40
---	----

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ	46
--------------------------	----

ՀՈՎՈՒՊԵՏԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ	51
--	----

ՀԱՅ ԴԱՏ	59
----------------------	----

ՏՕՆԱԿԱՆ	64
----------------------	----

ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ	71
-----------------------------	----

ԴՊՐԵՎԱՆՔ	81
-----------------------	----


ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ	84
--------------------------	----

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ	86
--------------------------	----

ՄԱՅԱԳՐՈՒԹԻՒՆ	94
---------------------------	----

ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԷՆ	97
-------------------------------------	----

ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԶԱՐՈՉ Ս. ԱԹՈՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ	106
---	-----



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿՄԱԿԻՐ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՅ
ՄԵԾԻ ՏԱՆ ԿԻԿԿԻՈՅ

ՂԲ. ՏԱՐԻ 2023

ՅՈՒՆՈՒԱՐ - ՓԵՏՐՈՒԱՐ

ԹԻԻ 1-2

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

**ԱԿԱՆՋԱԼՈՒՐ ԸԼԼԱՆՔ
ՍՐԲՈՅ ՂԵՒՈՆՂԵԱՆՑ ՈՒ ՎԱՐՂԱՆԱՆՑ
ՊԱՏԳԱՄԻՆ***

Ազգի մը պատմութեան կարեւոր դէպքերը ու դէմքերը անցեալի փոշիներուն տակ պէտք չէ մնան. անոնք պատգամ ունին փոխանցելիք՝ յատկապէս ազգի կեանքին տագնապալից օրերուն: Անոնք ցուցանիչ են ու յուշարար յստակ ու ճիշդ ուղղութիւն տուող՝ յատկապէս անորոշութեամբ տիրապետուած կեանքի անել պայմաններուն մէջ: Վա՛յ այն ազգին, երբ կը կորսնցնէ իր հաւաքական յիշողութիւնը: Վա՛յ այն ազգին, երբ իր պատմութիւնը կը վերածէ թանգարանի: Հարկ է հաղորդ դառնալ անցեալի ուրախ ու մռայլ երեւոյթներուն եւ ականջալուր՝ հերոսներու ու մեծերու կեանքէն ու գործէն եկող յիշեցումներուն:

Յաջորդաբար նշեցինք Սրբոց Ղեւոնդեանց քահանայից եւ Սրբոց Վարդանանց զօրավարաց տօները: Անոնք սովորական դէպքերու ու անձերու յիշատակումներ չեն: Իրենց վճռորոշ կեցուածքով ու արեան

* Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին պատգամը Սրբոց Ղեւոնդեանց ու Վարդանանց տօներուն առիթով, 16 Փետրուար 2023-ին:

վկայութեամբ այս հերոսները ու սուրբերը Ե. դարուն հայրենիքին անկախութիւնը ու ազգին ազատութիւնը երաշխաւորեցին: Հետեւաբար, անոնք ըսելիք ունին մեզի՝ այսօր ու մի՛շտ: Հարկ է ականջալուր ըլլալ անոնց պատգամին, այսօր մանաւանդ, երբ մեր ազգը կը գտնուի իր ժամանակակից պատմութեան ճակատագրական խաչմերուկին:

- Ղեւոնդեանք ու Վարդանանք Աւարայր ուղղուեցան՝ ի խնդիր հաւատքի պաշտպանութեան: Երբ թշնամին իր սուրը ուղղած էր քրիստոնէական հաւատքին, զայն իր կեանքին հետ շաղախած հայ ժողովուրդը միակամ ըսաւ՝ այս հաւատքէն մեզ ո՛չ մէկ ուժ կրնայ հեռացնել: Այսօր մենք ի՞նչ կ'ընենք, երբ զանազան հանդերձանքով ծրպտուած մամոնայի ու փառքի վաշխառուները կը մօտենան հայ կեանքին Հայաստանի ու Սփիւռքի մէջ, մեզ հեռացնելու հոգեւոր ու բարոյական արժէքներէն, մեր հարազատ ինքնութենէն:

- Ղեւոնդեանք ու Վարդանանք հայրենիքի անկախութեան պահպանումը ու անոր համար արիւն թափելու նախանձախնդրութիւնը իրենց սրբազան կոչումը նկատեցին: Հայրենիքը մեր ժողովուրդին գոյութեան բերդը ու իր ինքնութեան առանցքն է: Այսօր մենք ի՞նչ կ'ընենք՝ երբ Արցախի ինքնորոշման իրաւունքը ու հայրենիքի սահմանները վտանգուած են, երբ նոյնիսկ հայրենիքի գոյութիւնը հարցականի տակ է:

- Իրարու հակադրուած եւ ներքին թէ արտաքին տարբեր քաղաքական ուղղութիւններու հետեւող նախարարական տուները ի տես հայրենիքի անկախութիւնը կորսնցնելու վտանգին դիմաց համախըմբուեցան՝ հայրենիքի անկախութիւնը գերիվեր նկատելով իրենց քաղաքական տարբերութիւններէն: Մենք ի՞նչ կ'ընենք այսօր, երբ նոյն կացութեան մէջ կը գտնուի Հայաստանը:

- Աւարայրի դաշտին վրայ խաչին ու սուրին միացումը սրբագործուեցաւ. եւ այսպէս մնաց մեր ողջ պատմութեան ընթացքին: Աւարայրը դարձաւ ուղենիշ ու հոմանիշ «վասն հաւատոյ ու վասն հայրենեաց» մեր պայքարին: Եկեղեցի ու հայրենիք զիրար ամբողջացուցին, միասին եղան, միասին կռուեցան բոլոր ժամանակներու Աւարայրներուն մինչեւ Արցախ ու նաեւ Սփիւռքի մէջ մեր ժողովուրդին սպառնացող վտանգներուն դիմաց: Մենք ի՞նչ կ'ընենք այսօր, երբ հայրենիքին մէջ խաչ ու սուր հեռու են իրարմէ:

- Գրիգոր Լուսաւորիչ, Մեսրոպ Մաշտոց, Սահակ Պարթեւ եւ ողջ Թարգմանչաց սերունդը, այլ խօսքով հայ մշակոյթը, գիրի ու դպրութեան մշակներու ճամբով ներկայ էր Աւարայրի դաշտին վրայ, Հայրենիքի ու հաւատքի պաշտպանութիւնը հայ մշակոյթին պաշտպանութիւնն էր եւ՝ փոխադարձաբար: Մշակոյթ ու հաւատք հայու ինքնու-

թեան հիմքը ու գոյութեան առանցքը դարձած էին Լուսաւորիչի հոգիի եւ Մաշտոցի միտքի յեղափոխութեամբ: Այսօր, ո՞ր եւն հայ մշակոյթի ծաղկման ու հայ միտքի լուսաւորութեան կոչուած դպրութեան սպասաւորները՝ ի տես հոգեւոր, բարոյական ու մշակութային արժէքներու նահանջին:

Աւարայրը մեր ազգին, այլ խօսքով՝ հաւատքին, մշակոյթին, հայրենիքին լինելութեան ճակատամարտն էր: Մեր պատմութեան ամենէն ճակատագրական պահերուն, երբ նոր Աւարայրներ պարտադրեցին մեր ազգին, դարձանք սրբոց Ղեւոնդեանց եւ Վարդանանց, անոնց հաւատքով գօտեպնդուելու, կամքով զօրանալու եւ տեսլականով ներշնչուելու: Եւ մենք յաղթեցինք մեր պատմութեան բոլոր Աւարայրներուն՝ մեր նահատակներու արիւնով, հայրենիքին ու հաւատքին համար կռուելու մեր վճռակամութեամբ, թշնամիներու դէմ հաւաքական ամուր կեցուածք ճշդելու մեր իմաստութեամբ ու քաջութեամբ: Միթէ այսօր նոր Աւարայրի մէջ չե՞նք՝ երբ Արցախը շրջափակուած է ու իր ինքնորոշման իրաւունքը վտանգուած, երբ Հայաստանը ենթակայ է յարձակումներու ու սպառնալիքներու, երբ Սփիւռքը հայօրէն մաշումի մէջ է, եւ ամենէն ահաւորը՝ երբ մեզի կը պակսին մեր ազգին գերագոյն շահերը ու հայրենիքը վտանգող տագնապներն ու վտանգները միասնաբար դիմագրաւելու կամքն ու յանձնառութիւնը:

Սրբոց Ղեւոնդեանց ու Վարդանանց տօներու նշումը կը կորսնցնէ իր իմաստը, երբ ականջալուր չենք ազգին ու հայրենիքին համար իրենց արիւնը թափած մեր հերոսներու պատգամին, երբ պատրաստակամ չենք դասեր քաղելու անոնց իմաստութենէն, քաջութենէն ու տեսլականէն:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

16 Փետրուար 2023
Անթիլիաս, Լիբանան

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄՆԵՐ



ԴԱՌՆԱՆՔ՝ ՄԱՀԷՆ ԴԷՊԻ ԿԵԱՆՔ ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՔՐԻՍՏՈՍԻՆ*

Աստուած մարդը «վերստին կեանքի կոչեց Քրիստոսով» (Եփ 2.5): Այսպէ՛ս կը վկայէ՝ իր կեանքին օրինակով, Քրիստոսը հալածած եւ ապա անոր մեծագոյն քարոզիչը դարձած Պօղոս Առաքեալ:

Աստուծոյ նկատմամբ անհնազանդութիւնը մարդը մղած էր մեղքով ու չարիքով տիրապետուած մարդակեդրոն կեանքի:

Աստուծոյ նկատմամբ անհաւատարմութիւնը մարդը առաջնորդած էր չարաշահելու, փոխանակ խնամելու իր հոգատարութեան յանձնուած աշխարհը, եւ դառնալու սեփականատէրը, փոխանակ ըլլալու Աստուծոյ կողմէ նշանակուած խնամատարը երկրին:

Արդ, իր աստուածատուր կոչումին նկատմամբ անհնազանդ ու անհաւատարիմ գտնուած մարդը հեռացած էր Աստուծմէ, եղծած էր իր աստուածային պատկերը, այլ խօսքով՝ այն արժեքներն ու արժանիքները, երկնային շնորհքներն ու պարգէւները, որոնք տիեզերքի արարածներուն դէմ մարդուն կու տան իւրայատուկ ինքնութիւն ու նուիրական կոչում: Արդարեւ, Աստուծմէ հեռու կեանքը կը կորսնցնէ իր գոյութեան իմաստը ու նպատակը: Աստուծմէ հեռու մարդը կը դառնայ

* Մոյն գրութիւնը խտացումն է Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի պատգամին՝ խօսուած 6 Յունուար 2023-ին, Քրիստոսի հրաշափառ Ս. Ծննդեան տօնին առիթով, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ:

կենդանի մեռեալ, կ'ըսէ Պօղոս Առաքեալը (Եփ 2.5): Աստուծոյ Որդին մարդեղացաւ, որպէսզի անոր հաւատացողը մահէն կեանքի անցնի (Յհ 3.16, 5.24), կը հաստատէ Յովհաննէս Աւետարանիչ:

Աստուածաշունչը կը վկայէ, թէ Աստուծոյ Որդին մարդեղացաւ որպէսզի՝

անառակ որդին վերադարձնէ իր հօր.

մեղքի տիղմին մէջ խրած մարդը վերականգնէ.

խաւարին մէջ կորսուած մարդը Աստուծոյ լոյսին առաջնորդէ.

երկրի ապականութեամբ տիրապետուած մարդուն առջեւ բանայ երկինքի բարիքները.

իր կոչումին դաւաճանած մարդը հաշտեցնէ Աստուծոյ հետ.

մահուան դատապարտուած մարդուն պարգեւէ յաւիտենական կեանք:

Աստուծոյ Որդին մարդացաւ «*մեզի հանդէպ ունեցած մեծ սիրոյն համար*» (Յհ 3.16, Եփ 2.4-5): Այլ խօսքով, մարդուն հանդէպ իր ունեցած անհուն սէրէն մղուած, երկինքը՝ ապականութեան տիղմին մէջ խրած երկրին մօտեցաւ եւ Աստուած՝ մեղքի գերին դարձած մարդուն:

Ահա խորհո՛ւրդը Բեթղեհեմին:

Բեթղեհեմի մէջ ծնած Յիսուս մանուկը կամուրջ մըն է Աստուծմէ մարդուն ձգուած, երկինքէն երկիր նետուած: Քրիստոս Աստուծոյ էջքն է մարդուն եւ մարդուն բարձրացումը առ Աստուած: Քրիստոսի մէջ Աստուած եւ մարդ միացան անքակտելի, անշփոթ ու անխառն միութեամբ՝ Աստուծոյ Որդւոյն կողմէ մարդկային բնութեան իւրացումով:

Բեթղեհեմի ճամբով երկիր իջնելով ու մարդանալով, Աստուծոյ Որդին յաւիտենական պատգամ մը տուաւ մարդուն.—

– Ե՛ս եմ կեանքի կենսատու հացը (Յհ 6.48). հարկ է ճաշակել զայն:

– Ե՛ս եմ կեանքի ճշմարիտ ճամբան (Յհ 14.6). հարկ է քալել այս ճամբէն:

– Ե՛ս եմ կեանքի իրաւ ճշմարտութիւնը (Յհ 14.5). հարկ է դաւանիլ զայն:

– Ե՛ս եմ յաւիտենական կեանքը (Յհ 3.16). հարկ է ապրիլ զայն:

Ահա պատգա՛մը Բեթղեհեմին:

Արդ, Աստուծոյ Որդւոյն աշխարհ գալուստով մահէն կեանք անցանք, որովհետեւ՝

հաւատացիւք թէ Բեթղեհեմի մէջ ծնած Յիսուս Քրիստոս Փրկիչն է համայն մարդկութեան (Յհ 5.24, Եփ 2.8):

խոստացանք բարի գործերով լեցնել մեր կեանքը (Եփ 2.10):

հաշտուեցանք Աստուծոյ հետ (Բ.Կր 5.18):

հեռացանք մարդը դեպի մահ առաջնորդող մեղքի ու չարի աշխարհին:

Քրիստոսի ծնունդով մարդը վերականգնեց իր աստուածային պատկերը ու վերամարդացաւ, դառնալով նոր արարած. *«ոեւէ մէկը որ Քրիստոսի միացած է նոր արարած է»* (Բ.Կր 5.17):

Բեթղեհեմը սոսկ դեպք մը չէ, այլ նաեւ երկնային հրաւեր մը՝ ինչպէս երեկ, նաեւ այսօր ու միշտ, դառնալու մարդը դեպի Աստուած առաջնորդող Քրիստոսին: Պատրա՞ստ ենք ընդունելու Բեթղեհեմէն աշխարհին եղած երկնային հրաւերը: Քրիստոսի ճամբէն քալելու առաջին քայլը առած հայ ժողովուրդի սիրելի՛ զաւակներ, եկե՛ք վերանորոգ հաւատքով՝

դառնանք աշխարհի խաւարէն մեզ լոյսին տանող լոյս-Քրիստոսին.

դառնանք մեղքի տիրապետութենէն մեզ ազատագրող ազատարար-Քրիստոսին.

դառնանք ատելութեան ճիրաններէն մեզ սիրոյ աղբիւր առաջնորդող սեր-Քրիստոսին.

դառնանք ցաւի ու տառապանքի վիհէն մեզ վերականգնող բժշկարար-Քրիստոսին.

դառնանք մահէն մեզ կեանք տանող կեանք-Քրիստոսին.

դառնանք Բեթղեհեմի մէջ ծնած Աստուծոյ Միածին Որդւոյն, Փրկիչը համայն մարդկութեան:

Ահա հրաւերը Բեթղեհեմին:

Նոր Տարուան եւ Աստուածայայտնութեան տօներուն առիթով, եղբայրական սիրով կ'ողջունենք Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, մաղթելով քաջամողջութիւն եւ աստուածահաճոյ ծառայութիւններով լեցուն երկար գահակալութիւն: Քրիստոնէական սիրով կ'ողջունենք Երուսաղէմի Հայոց Պատրիարք Նորին Ամենապատուութիւն Տէր Նուրհան Արք. Մանուկեանը եւ Թուրքիոյ Հայոց Պատրիարք Նորին Ամենապատուութիւն Տէր Սահակ Արք. Մաշալեանը, մաղթելով արդիւնաշատ ծառայութիւն մեր սուրբ եկեղեցւոյ ու ժողովուրդին:

Հայրական սիրով եւ հայրապետական օրհնութեամբ կ'ողջունենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմերու առաջնորդները, հոգեւորական դասը ու ազգային իշխանութիւնները, հայ կեանքէն ներս գործող բոլոր միութիւններն ու կազմակերպութիւնները, ինչպէս նաեւ մեր ժողովուրդի սիրելի զաւակները, աղօթելով, որ մասն միշտ Քրիստոսի ճամբուն հաւատարիմ ուղեւորները:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**



ՀԱՄԱԽՄԲՈՒԻՆՔ ԱԶԳԻ ՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՇԱՀԵՐՈՒՆ ՇՈՒՐԶ*

Տազնապալից պայմաններու մեջ կ'ողջունենք Նոր Տարին: Յուսահատութեամբ ու անորոշութեամբ լեցուն է հայ կեանքը: Ահաւոր վտանգներով շրջապատուած են Հայաստանն ու Արցախը:

Իրատես հայեացքով դիտենք հայ կեանքը: Պատմութիւնը ինքզինք կը կրկնէ. Հայաստանը դարձեալ դարձած է կռուախնձոր մեծ ուժերու միջեւ: Թշնամին պաշարումի ենթարկած է Արցախը: Ան կը գտնուի նաեւ ինքնիշխան Հայաստանի սահմաններէն ներս՝ վտանգելով Հայաստանի հողային ամբողջականութիւնը: Նոյն թշնամին կը սպառնայ նման կացութիւններ ստեղծել որքէն ժամանակ՝ անտեսելով միջազգային օրէնքներն ու մարդասիրական սկզբունքները: Եւ անելին, Հայաստանը կը մնայ միշտ ենթակայ աշխարհաքաղաքական շահերու բախումին, ինչպէս նաեւ ռազմական միջոցներով քաղաքական շահեր հետապնդելու ճնշումներուն:

Փաստօրէն չունինք իրաւ բարեկամներ: Առանձին ենք: Չունինք ազգային ռազմավարութիւն: Չունինք միացեալ ճակատ՝ ազգին տագնապները միա՛սնաբար դիմագրաւելու: Միայն զիրար կ'ամբաստանենք ու կը մեղադրենք: Յաղթական Արցախը կորսնցուցած է իր ազատագրեալ հողերուն մեծ մասը ու կը դիմագրաւէ գոյութեանական խընդիր: Հայաստանը եւս ենթակայ է կորսնցնելու իր գերիշխանութիւնը:

Այս անել կացութեան դիմաց ի՞նչ ընել, որո՞ւ վստահիլ: Պատասխանը յստակ է՝ մեր դարաւոր պատմութեան հարուստ փորձառութեամբ հաստատուած ու մեր բիւրաւոր նահատակներու արիւնով թրծուած. —

* Սոյն գրութիւնը խտացումն է Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի պատգամին՝ խօսուած 1 Յունուար 2023-ին, Նոր Տարուան առիթով, Վեհարանի Դահլիճէն ներս:

վստահիլ մեր սեփական ուժին: Հո՛ւ է մեր հզորության կռուանը, մեր փրկության միակ ճամբան: Այլ ընտրանք չունինք:

5-րդ դարուն, մեր պատմության ճակատագրական մեկ հանգրուանին, մեր պատմահայրը, Մովսես Խորենացին դարերէն եկող ու դարերուն գացող յիշեցում մը կատարեց ուղղուած մեր ազգին, ինչպէս նաեւ Հայաստանը շրջապատող կայսրութիւններուն, յայտարարելով՝ թէեւ փոքր ազգ ենք, սակայն «արութեան գործեր»ով լեցուն է մեր կեանքը: Արդարեւ, մեր ազգը «արութեան գործեր»ով, այլ խօսքով՝ խոր հաւատքով եւ ազգին ու հայրենիքին համար արին թափելու ամուր վճռակամութեամբ հզօրացած հայրենիք կերտեց ու պաշտպանեց՝ հակառակ պարտադրուած բաժանումներուն, հալածանքներուն ու ցեղասպանութեան: Վկայ՝ մեր դարաւոր պատմութիւնը:

Հետեւաբար, արթնանք այլեւս ժողովուրդ հայոց, պատմական Հայաստանէն մնացած կտոր մը հողը եւս կրնայ մեր ձեռքէն երթալ:

Ներկայ ճակատագրական պայմաններուն մէջ, առաւել քան երբեք, հրամայական է ու անմիջական՝ համահայկական իտեալներու ու գերագոյն արժեքներու շուրջ մեր ազգին համախմբումը եւ անոր ազգային յանձնառութեան ամրացումը՝ քաղաքական հեռատեսութեամբ ու մարտունակ դիւանագիտութեամբ շաղախուած:

Այս պահը ազգային ուխտի վերանորոգման նուիրական պահ է:

Լսենք մեր սուրբերուն աղօթքը ու մեր հայրերուն պատգամը, եւ հաւատարիմ մեր անցեալի ու ներկայի նահատակներու սրբազան կտակին, համախմբուինք. համախմբուինք Հայաստան, Արցախ եւ Սփիւռք, որպէս մեկ ազգ, ի խնդիր Արցախի փրկութեան ու Հայաստանի անկախութեան պաշտպանութեան:

Այսօր մեր ազգին «արութեան գործ»ը պէտք է ըլլայ միասնականութիւն ամէն բանէ վե՛ր, մեր ողջ ներուժին ու մարդուժին համախմբումով ու հայոց բանակին վերակազմակերպումով:

Նոր Տարուան սեմին, իր երակներուն մէջ հայու արին ունեցող հայը ուրիշ մաղթանք չի կրնար կատարել:

Թող Աստուած անսասան պահէ մեր ազգը ու հզօր՝ Հայաստանն ու Արցախը:

Թող Աստուած մեր ժողովուրդին առջեւ բանայ սիրոյ ու համերաշխութեան, արդարութեան ու խաղաղութեան ճամբան:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**



2023
ՍՓԻՒՌԻ ՏԱՐԻ
(Բ.)
ԻՆՔՆԱՔՆՆՈՒԹԵՆԷ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան
Թեմակալ Առաջնորդներուն,
հոգեւոր դասուն,
Ազգային Իշխանութեանց, եւ
մեր ժողովուրդի գաւակներուն

2023 տարուան սեմին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն քրիստոնեական սիրով ու հայրապետական օրհնութեամբ կ'ողջունենք Ազգ. Ընդհանուր Ժողովը, Ազգ. Կեդրոնական Վարչութեան Կրօնական ու Քաղաքական ժողովները, Միաբանութիւնը, Թեմակալ Առաջնորդներն ու Ազգ. Իշխանութիւնները, մեր կեանքէն ներս գործող քաղաքական, կրթական, մշակութային, բարեսիրական եւ համայնքային միութիւններն ու կազմակերպութիւնները, ինչպէս նաեւ մեր ժողովուրդի սիրելի գաւակները: Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ բացուող Նոր Տարին մեր անհատական, ընտանեկան եւ ազգային կեանքին մէջ լեցուի առողջութեան, յաջողութեան եւ երջանկութեան երկնային բարիքներով:

*

* *

Ինչպես ծանօթ է մեր ժողովուրդի զաւակներուն, անցնող տարին, 2022-ը, Հայրապետական Հռչակագրով յայտարարեցինք **«Սփիւռքի Տարի»**: Անդրադառնալով Սփիւռքի պարզած ներկայ վիճակին, եւ այն հիմնական դրդապատճառներուն, որոնք Մեզ մղեցին 2022 տարին հռչակելու Սփիւռքի Տարի, Հռչակագրին մէջ հետեւեալ հաստատումը կատարեցինք.–

«Հայօրէն մաշունի ենթակայ Սփիւռքը՝ տեղ մը անորոշութեան ալիքներու մէջ կ'օրօրուի, այլ տեղ՝ փոթորիկներու դէմ կը պայքարի. տեղ մը՝ նոր ինքնութեան փնտռտուքի մէջ է, այլ տեղ՝ տեղայնացումի արագ ընթացքին մէջ է: Հետեւաբար, այս կացութեան դիմաց Սփիւռքի վերակազմակերպումը ու վերակենսաւորումը հրամայական անհրաժեշտութիւն է: Այս բազմատարած ու բազմերես ծրագիրը իր գործնական ընթացքը կրնայ առնել նախ Սփիւռքի ինքնաքննութեամբ, ինքնարժեւորումով եւ ազգի համայնական կեանքին մէջ անոր իւրայատուկ տեղին ու դերին յստակեցումով: Այս հսկայածաւալ աշխատանքին հարկ է լծուիլ այսօր. վաղը կրնայ ո՛րէ ըլլալ՝ աշխարհի արմատական ու արագ փոփոխութիւններու յորձանուտին մէջ ապրող Սփիւռքին համար»: Ապա, մեկնելով Սփիւռքի պարզած անորոշ ու մտահոգիչ կացութենէն, շեշտեցինք թէ՛ «անորոշութիւններով ու տազնապներով լեցուն Սփիւռքի ներկայ իրավիճակը, մեր եկեղեցին, մեր դեկավար մարմինները ու մտաւորականները պէտք է մղէ՝ իրապաշտ ոգիով, պատասխանատու մօտեցումով ու համապարփակ տեսլականով տազնապելու, մտածելու, քննելու, խորհրդակցելու եւ մանաւանդ՝ Սփիւռքի ներկան վերակազմակերպելու ու անոր ապագան հունաւորող ճիշդ ճամբաներ եւ ազդու միջոցներ որոնելու»:

Արդարեւ, անցնող տարուան ընթացքին, Սփիւռքի ներկայ գոյավիճակին ու դիմագրաւած մարտահրաւերներուն շուրջ՝ յօդուածներու, ուսումնասիրութիւններու, դասախօսութիւններու ու սեմինարներու ճամբով արտայայտուած մտահոգութիւնները, ներկայացուած մատնանըշումները ու կատարուած վերլուծումները փաստօրէն վերաշեշտեցին՝ Հայրապետական Հռչակագրով Մեր կատարած ընդգծումները եւ յատկապէս՝ Սփիւռքը իր ներկայ վիճակէն դուրս բերելու եւ վերակազմակերպման առաջնորդելու անյետաձգելի հրամայականը:

Հետեւաբար, մէկ կողմէն նկատի ունենալով սկսուած քննարկումներու շարունակման կարեւորութիւնը, եւ միւս կողմէն, քննարկումներէ անդին՝ գործադրութեան հեռանկարներուն եւ միջոցներուն յստակեցման անհրաժեշտութիւնը, յատկապէս թեմերու շրջագծէն ներս, ներկայ Հայրապետական Գիրով 2023 տարին դարձեալ կը հռչակենք

ՍՓԻՒՐՔԻ ՏԱՐԻ (Բ.)

(Ինքնաքննութենէ՝ վերակազմակերպում)

շեշտաւորումով: Մեր սպասումն է որ առանց անտեսելու ինքնաքննութեան յոյժ կարեւորութիւնը, ներկայ տարուան ընթացքին գործնական քայլեր առնուին եւ ծրագիրներ մշակուին՝ մասնաւորաբար թեմական շրջագծէն ներս:

Ի՞ՆՉ ԿԱՏԱՐՈՒԹՅԱՒ ՍՓԻՒՔԻ ՏԱՐՈՒԱՆ ԸՆԹԱՅՔԻՆ

Խոր գոհունակութեամբ կ'ուզենք հաստատել, թէ՛ Սփիւռքի Տարուան հռչակումը լայն արծագանգ գտաւ ակադեմական, մտաւորական, մամուլի եւ երիտասարդական շրջանակներէն ներս: Անցնող տարուան ընթացքին, յաջորդաբար հինգ առիթներով առցանց հանդիպումներ տեղի ունեցան Սփիւռքի հարցերուն ծանօթ մասնագետներու, մտաւորականներու, տեղեկատուական մարզի մասնագետներու եւ երիտասարդներու հետ: Այս հանդիպումներու ընթացքին արծարծուեցան ու քննարկուեցան շարք մը այժմեական խնդիրներ եւ կատարուեցան առաջարկներ: Կաթողիկոսարանի նախաձեռնութեամբ կայացած յիշեալ հանդիպումներու ընթացքին եղած քննարկումներուն ներկայացուցած կարեւորութիւնը նկատի առնելով, շահեկան կը նկատենք ընդհանուր գծերով անդրադառնալ անոնցմէ իւրաքանչիւրին.–

Ա) Առաջին հանդիպումին, բացման Մեր խօսքին մէջ, պարզելէ ետք Սփիւռքի Տարի հռչակելու շարժառիթները, ընդհանուր գծերով անդրադարձանք Նոր ձեւաւորուող եւ յարափոփոխ սփիւռքեան միջավայրերու իրավիճակներու իւրայատկութիւններուն եւ տարբեր բնագաւառներու մէջ գործող աւանդական կառոյցներու դիմագրաւած դըժուարութիւններուն: Յատկապէս շեշտեցինք ինքնութեան վերաբերող հիմնահարցերը: Ապա մասնակիցները ներկայացուցին հետեւեալ խընդիրները.–

- Համեմատական սփիւռքագիտութեան օգտագործումը:
- Ինքնութեան խնդիրներու քննարկման տարբեր միջոցներու որդեգրումը:
- Մեր կառոյցներէն հեռու սփիւռքեան գոյավիճակներու հասանելիութեան միջոցներու որոնումը:
- Սփիւռքեան հարցերու ոլորտային մասնագիտական քննարկումներու ձեւաչափերուն ճշդումը:
- Ըստ միջավայրի եւ իւրայատկութիւններու նկատառումներով ներգրաւման տարբեր ռազմավարութիւններու մշակումը:
- Ցանցային դրուածքի լիարժէք օգտագործման կարելիութիւններու ուսումնասիրութիւնը:

- Համացանցային տարածքներու վրայ համախմբումներու յառաջացումը:

- Սփիւռքի մարդուժի եւ կարողականութեան ցանկագրումի եւ հաւաքագրումի աշխատանքին կարելորութիւնը:

- Երիտասարդութեան ուղղութեամբ թիրախային ծրագիրներ մշակելու հրամայականը:

- Հայաստան, Արցախ եւ Սփիւռք կապերու ամրապնդման նոր հայեցակարգերու պատրաստութիւնը:

Վերոյիշեալ խնդիրներուն իրապաշտ, համապարփակ ու խորքային քննարկումը նկատուեցաւ որպէս անհրաժեշտ մեկնակէտ՝ Սփիւռքի վերակազմակերպման գործընթացին:

Բ) Խորհրդակցութիւններու երկրորդ հանդիպումի բացման Մեր խօսքով ընդգծեցինք հետեւեալ կէտերը.-

- Արդեօք Սփիւռքը պատրա՞ստ է վերակազմակերպուելու:

- Իրապաշտ արժեւորումի անհրաժեշտութիւնը, իբրեւ մեկնակէտ հարցերու դիմագրաւման եւ լուծման եղանակներու ճշդումին:

- Սփիւռքի վերակազմակերպման աշխատանքներու ծրագրաւորումի գործընթացին մշակումը: Այս ծիրէն ներս յոյժ կարելոր նկատուեցաւ եկեղեցւոյ եւ իր շուրջ գործող մարմիններուն, միութիւններուն եւ աւանդական կառոյցներուն դերը:

- Նոր օրակարգերու ճշդումի հրատապութիւնը, ի հարկին, կառոյց, համակարգ, մեթոտաբանութիւն եւ կանոնադրութիւններ բարեփոխելու սկզբունքը:

Ապա, քննարկումը կեդրոնացաւ երեք հիմնահարցերու վրայ, որպէս ուղենիշ հետագայ աշխատանքներուն.- հաւաքական արժեքներ, ինքնութիւն եւ մասնակցութիւն:

Գ) Խորհրդակցութիւններու երրորդ հանդիպումին իրենց մասնակցութիւնը բերին խումբ մը երիտասարդներ, որոնք գործօն դերակատարութիւն ունին իրենց գաղութներու կեանքին մէջ:

Առաջին հերթին Մենք դրուատեցինք երիտասարդներուն դրական ներգրաւուածութիւնը իրենց գաղութներու կեանքին մէջ եւ նախանձախնդրութիւնը՝ գաղութներու վերանորոգման, ընդգծելով, որ ընկերութիւն մը չի կրնար յառաջդիմել առանց երիտասարդութեան, որովհետեւ երիտասարդութիւնը ընկերութեան աւիշն է ու ներկան՝ ո՛չ միայն ապագան: Պարզեցինք Սփիւռքին դիմագրաւած մարտահրաւերները եւ շեշտեցինք վերարժեւորման ու վերակազմակերպման աշխատանքներուն հրամայականը՝ երիտասարդներուն գործօն մասնակցութեամբ:

Նկատի ունենալով, որ Սփիւռքը թե՛ հայոց ցեղասպանութեան հետեւանքով յառաջացած է եւ թէ Հայաստանի տնտեսական տագնապէն մղուած արտագաղթած հայորդիներէ բաղկացած, յիշեցուցինք թէ Սփիւռքը մնայուն շարժումի մէջ է: Հետեւաբար, ճիշդ չէ ընդհանրական մօտեցումներով քննել եւ արժեւորել Սփիւռքը, միաժամանակ շեշտելով թե՛ գաղութներուն միջեւ հասարակաց գիծը հայկական ինքնութիւնն ու պատկանելիութիւնն է: Քաջալերեցինք, որ երիտասարդութիւնը հետեւողի կրաւորական դերէն դուրս գայ ու ինքզինք տեսնէ մասնակցող գործօն դերին մէջ: Վերջապէս, յիշեցուցինք, որ առցանց այս խորհրդրդակցութեան նպատակն է լսել երիտասարդները, իմանալ անոնց դժուարութիւնները, ակնկալութիւնները, եւ մանաւանդ անոնց տեսակետները՝ համաշխարհայնացած աշխարհին ու անցանկապատ ընկերութեան մէջ մեր ինքնութիւնը առողջ պահելու միջոցներուն մասին:

Ապա, յաջորդաբար երիտասարդները անդրադարձան զիրենք յուզող հարցերուն: Անոնք դրին մայրենի լեզուին օգտագործման նուազումին եւ օտար լեզուամտածողութեան հարցը, ուղղագրութեան անբաւարար իմացութեան պատճառով առցանց հաղորդակցութեան մէջ լատինատառ գրելու հակումը, ընկերային ցանցերու վրայ Հայաստան-Սփիւռք յաճախ զիրար չհասկնալու պատճառով զիրար հակասելու երեւոյթը, օտար վարժարան յաճախելու անպատեհութիւնները, արհեստագիտութեան անբաւարար օգտագործումը, երիտասարդութեան մօտ ինքնաճանաչման վերաշեշտումը, Արցախեան վերջին պատերազմի պատճառով երիտասարդութեան մօտ յուսալքման հոգեվիճակը, ղեկավարութիւն-երիտասարդութիւն յարաբերութիւններու առնչուած խընդիրները եւ տնտեսական իրավիճակի հետեւանքով գաղութը լքելու հարցը: Յիշեալ նիւթերու քննարկումներու լոյսին տակ երիտասարդները նաեւ պարզեցին իրենց առաջարկները՝ կրթական, կազմակերպչական, արհեստագիտական եւ եկեղեցական մարզերու կապուած: Լսելէ ետք մեր երիտասարդները, մենք բարձր գնահատեցինք անոնց շինիչ ներդրումը եւ շեշտեցինք, որ այսօր չենք կրնար խուսափիլ համաշխարհայնացման մշակոյթէն. սակայն այս իրողութեան դիմաց հարկ է կառչիլ մեր ինքնութեան, որ հիմնուած պէտք է ըլլայ արժէքներու եւ խարսխուած՝ իտեալներու վրայ: Անհրաժեշտ է մտածել այնպիսի հաւաքական արժէքներու համակարգ մը յառաջացնելու մասին, որ ո՛չ հեռացնէ մեզ ներկայ ընկերութենէն եւ ոչ ալ կղզիացնէ, այլ զիրար հարստացնող ներքին յարակցութիւն մը ստեղծէ երկուքին միջեւ:

Դ) Չորրորդ հանդիպումը յատկացուած էր տեղեկատուական մարզին: Ընդհանուր գծերով պարզելէ ետք տեղեկատուական մարզի կա-

րեւորութիւնը Սփիւռքի վերակազմակերպման աշխատանքներուն մէջ, մասնակիցներէն իւրաքանչիւրը ներկայացուց մասնագիտական զեկոյց մը եւ ապա տեղի ունեցաւ լայն քննարկում: Լուսարձակի տակ առնուեցան մասնաւորաբար հետեւեալ կէտերը.–

– Տուեալներու հաւաքագրումը խիստ կենսական է Սփիւռքի գոյքագրման եւ մասնագիտական մարդուժի ցուցակագրման աշխատանքին համար:

– «Չիփեր»ու այսօրուան արտադրութեան ճարտարագիտութիւնը հիմնուած է ծաւալի փոքրացման, բազմապատկուած տուեալներու ներառման եւ արագութեան բազմապատկութեան սկզբունքներուն վրայ: Հայկական տեղեկագիտական գործօնը այս նոր ուղղութիւնը նկատի պէտք է ունենայ իր ցանցային աշխատանքները կազմակերպելու ընթացքին:

– Այսօրուան աշխարհակարգը կ'աշխատի ապակեդրոն, ապամեկուսացուող եւ անվերջ նորացուող դրութիւններով: Մեր աշխատանքներուն մէջ հարկ է այս աշխատակարգը ու գործելաոճը նկատի ունենալ՝ յատկապէս մեր դասական կառոյցներէն դուրս գտնուող զանգուածներուն հետ կապ հաստատելու համար:

Ե) Հինգերորդ հանդիպման նպատակն էր ամփոփել ցարդ կատարուած քննարկումներուն հիմնական մտքերը եւ գործնական մօտեցումով ճշդել յառաջիկայ քայլերը: Մեր թելադրութեամբ նկատի առնուեցան առանցքային երեք ուղղութիւններ.– ախտաճանաչում, հակազդեցութիւն ու գործընթաց: Ապա պարզեցինք այն յատկանշական երեւոյթները ու կատարուած առաջարկները՝ քաղուած թէ՛ առցանց հանդիպումներէն եւ թէ՛ ընդհանրապէս Սփիւռքի տարուան առիթով գրուած յօդուածներէն: Յիշեցուցինք, որ Սփիւռքը ներկայ գոյավիճակէն դուրս բերելու հրամայականը դարձած է հաւաքական մտահոգութիւն ու գոյութենական խնդիր: Յստակօրէն նշմարելի է երիտասարդութեան մօտեցումը, որ անյետաձգելի կը նկատէ Սփիւռքի վերակազմակերպումը, այլապէս, կրնայ աւելի խորանալ անջրպետը երիտասարդութեան եւ սփիւռքահայ կեանքին միջեւ: Ընդգծեցինք նաեւ, որ Սփիւռքի տարուան նպատակը ակադեմական ուսումնասիրութիւն մը պատրաստելը չէ, այլ՝ տարբեր մարզերու վերարժեւորումի ու վերանորոգումի աշխատանքներուն համար շօշափելի տուեալներու վրայ հիմնուած ծրագիր մշակել ու գործընթաց ճշդել է:

2) Ազգ. Ընդհ. Ժողովին ուղղած Մեր պատգամին, ինչպէս նաեւ Ազգ. Կեդրոնական Վարչութեան Կրօնական ու Քաղաքական Ժողովներու տեղեկագիրներուն մէջ լայն տեղ յատկացուած էր Սփիւռքի

վերակազմակերպման: Ժողովը իր կարգին առանձին նիստով ու լայն քննարկումով շեշտեց Սփիւռքի վերակազմակերպման յոյժ կարեւորութիւնը եւ այդ գործընթացին սկիզբ տալու անհրաժեշտութիւնը՝ մասնաւորաբար թեմերուն կողմէ:

Արդարեւ, Սփիւռքի տարուան առիթով տեղի ունեցած քննարկումները, գրաւոր թէ առցանց, պարզեցին հասարակաց նո՛յն մտահոգութիւնները՝ թէ Սփիւռքը հայօրէն արագ մաշումի ընթացքի մէջ է, մեր կառոյցները սկսած են կորսնցնել իրենց այժմեականութիւնը, եւ հետեւաբար, անհրաժեշտ է Սփիւռքի վերակենսաւորումը մեր կեանքը շրջապատող ներկայ պայմաններուն ու իրականութիւններուն լոյսին տակ: Արդարեւ, յատկապէս անցնող տարուան ընթացքին այս բոլորին ականատես ու ականջալուր ըլլալէ ետք, եկանք այն համոզման, թէ Սփիւռքի գծով արտայայտուած հաւաքական մտահոգութիւնը այնքան խոր է, եւ կատարուելիք աշխատանքին ծաւալը այնքան մեծ ու անոր յստակեցումը՝ այնքան էական, որ կարելի չէ այս բոլորը խտացնել մէկ տարուան ժամանակամիջոցին մէջ: Հետեւաբար, անհրաժեշտ է այս ուղղութեամբ կատարուող քննարկումները շարունակել, մասնակցութեամբ թեմական ու համայնքային ներկայացուցիչներու, մտաւորականներու, կառոյցներու, պատասխանատուներու ու զանազան մարզերու մասնագէտներու՝ քննարկումներէ դէպի վերակազմակերպում ուղղուելու հեռանկարով:

ԻՆՉՊԷՍ ԿԱՐԵԼԻ Է ԻՆՔՆԱՔՆՆՈՒԹԵՆԷ ՈՒՂՂՈՒԻԼ ԴԵՊԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Սփիւռքի վերակազմակերպման պահանջը փաստօրէն դարձած է անյետաձգելի մտահոգութիւն: Սփիւռքի ներկայ վիճակին երկարաձգումը կը նշանակէ Սփիւռքի գունաթափումը, կազմալուծումը ու մաշումը: Անհրաժեշտ է հաւաքական ճիգով Սփիւռքին նոր կենսունակութիւն ներարկել՝ զայն դարձնելով համահունչ ներկայ աշխարհի իրականութիւններուն ու մարտահրաւերներուն: Բնականաբար սա դիւրին ու հեզասահ աշխատանք մը չէ: Այսօր Սփիւռքը կը ներկայացնէ զանազանութիւններու, հակասութիւններու ու անորոշութիւններու խայտաբղետ պատկեր մը: Հետեւաբար, Սփիւռքին նկատմամբ կարելի չէ միաձել ու միանուագ մօտեցումներ որդեգրել: Գաղութները կ'ապրին տարբեր միջավայրերու մէջ. իրենց ներքին դրուածքները տարբեր են. կազմակերպչական տարբեր դրութիւններով կը ղեկավարուին ու տարբեր ազդեցութիւններու ենթակայ են: Այլ խօսքով, մեր հաւաքական մտահոգութիւնը, նախանձախնդրութիւնը ու յանձնառութիւնը չեն են-

թաղրեր անպայման հաւաքական գործընթացքի եւ օրակարգի ճշդում: Հարկ է նկատի ունենալ իւրաքանչիւր գաղութ կամ թեմ իր իւրա-
յատկութիւններով, կարիքներով ու առաջնահերթութիւններով, բնա-
կանաբար, մեկնելով հաւաքական սկզբունքներէ ու նպատակներէ:
Մեր հայեցակետով, յատկապէս հետեւեալ սկզբունքները ու նպատա-
կները պէտք է դառնան առաջնորդող ուղեգիծը ու մղիչ ուժը Սփիւռքի
վերակազմակերպման.-

- Վերարժեւորման ենթարկել Սփիւռքի մէջ ապրող հայու ինքնա-
ճանաչումը՝ համաշխարհայնացած մշակոյթի լոյսին տակ:

- Հայ կեանքէն ներս առանցքային դերակատարութիւն ունեցող
եկեղեցւոյ բարեկարգումը նկատել առաջնային՝ զայն պատշաճեցնե-
լով ներկայ ժամանակներու ու որոշ չափով միջավայրի իւրայատկու-
թիւններուն ու պայմաններուն:

- Մեր համայնքներէն ներս գործող կազմակերպութիւններու ինք-
նաքննութիւնը եւ գործունեութեան վերարժեւորումը կատարել նոր
հրամայականներու լոյսին տակ:

- Մեր կառոյցներէն եւ ընդհանրապէս հայ կեանքէն հետզհետէ հե-
ռացող երիտասարդութեան հայ կեանքէն ներս ներգրաւումը ապահո-
վել երկխօսութեան ճամբով:

- Հայ կեանքի բոլոր բնագաւառներէն ներս ու բոլոր մակարդակ-
ներու վրայ կնոջ աւելի լայն ու գործօն դերակատարութիւնը երաշխա-
ւորել:

- Համայնքի կեանքի զանազան մարզերէ ներս մասնագետներուն
ներդրումը դարձնել աւելի աշխոյժ ու հետեւողական:

ԹԵՄԵՐՈՒ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Սփիւռքի վերակազմակերպման մէջ կեդրոնական տեղ կը գրաւեն
թեմերը: 2022 Սփիւռքի տարուան Մեր Հռչակագրին մէջ անդրադառ-
նալով թեմերու վերակազմակերպման, ըսինք՝ «Աւանդական Սփիւռքի
կեանքը կազմակերպուած է եկեղեցւոյ շուրջ: Իւրաքանչիւր գաղութ եկե-
ղեցին նկատած է իր հաւաքական կեանքին կեդրոնը եւ անոր շուրջ հիմ-
նած զանազան մարզերու առնչուած իր հաստատութիւնները: Փաստօ-
րէն եկեղեցին չէ կրցած քայլ պահել կեանքի յարափոփոխ պայման-
ներուն հետ: Եկեղեցւոյ բարեկարգումը հրամայական է: Եկեղեցի-ժողո-
վուրդ յարաբերութիւնը նոր որակ ու ոճ պէտք է ստանայ ու եկեղեցին
դառնայ ծառայական ներկայութիւն ժողովուրդի կեանքէն ներս: Ուստի,
նկատի ունենալով եկեղեցւոյ առանցքային դերը գաղութի մը կեանքին

մէջ, գաղութի վերակազմակերպումը հարկ է որ սկսի թեմական կեանքէն»:

Այս համոզումէն մեկնած, կը թելադրենք որդեգրել հետեւեալ մօտեցումը ու գործընթացը.–

1) Նպատակ: Կատարուելիք աշխատանքը հարկ է ըմբռնել վարչակազմակերպչական վերակազմակերպումէ անդին՝ որպէս վերանորոգում ու վերաշխուժացում եկեղեցւոյ կեանքին ու վկայութեան, ծառայութեան ու առաքելութեան նոր հրամայականներու լոյսին տակ:

2) Մօտեցում: Անհրաժեշտ է մէկ կողմէն նկատի ունենալ մեր եկեղեցւոյ աւանդութիւններն ու ուսուցումները, եւ միւս կողմէ՝ տեղական իւրայատուկ պայմանները: Թեմական նեղ սահմաններուն մէջ պէտք չէ կատարուի յիշեալ աշխատանքը, այլ՝ համագաղութային մաշտապով, նկատի ունենալով նաեւ քոյր կազմակերպութիւններուն տեսակետը եւ սպասումը: Պատրաստուելիք ծրագիրը պէտք է ըլլայ իրապաշտ, հեռու՝ տեսական, պատահական ու ժամանակավրէպ մօտեցումներէ:

3) Մասնակիցներ: Առաջնորդ Սրբազանին նախագահութեամբ սպասելի է որ ներկայ աշխատանքին գործնապէս մասնակից դառնան Ազգ. Վարչութիւնը, յարակից մարմինները, հոգեւոր դասը, մասնագետներ, երիտասարդներ, զանազան կառոյցներու պատասխանատուներ: Բնականաբար իւրաքանչիւր թեմ իր հայեցողութեամբ կը ճշդէ աշխատանքին ընթացքը ու մեթօտը:

4) Գործադրութիւն: Իւրաքանչիւր թեմի կողմէ պատրաստուելիք ծրագիրը հարկ է մշակել որպէս գործադրելի ուղեգիծ եւ ոչ թէ որպէս սոսկ ուսումնասիրութիւն: Ծրագրին գործադրութիւնը հարկ է որ կատարուի հանգրուանային ընթացքով:

5) Վերակազմակերպման ենթակայ կառոյցներ ու միաւորներ.–

ա.– **Ծուխ:** Ծուխը հիմքը կը կազմէ եկեղեցւոյ կեանքին ու առաքելութեան եւ այս պարագային՝ թեմին: Թեմը կազմակերպել կը նշանակէ նախ ծուխը կազմակերպել: Ծուխը պէտք է դառնայ աշխատանքներուն կիզակետը: Այս նպատակը իրագործելու համար.–

Առաջին, յատուկ կարեւորութիւն պէտք է տրուի **հոգեւոր հովիւին:** Արդարեւ, հոգեմտաւոր զարգացում ու կոչումի գիտակցութիւն ունեցող եւ իր հօտին հետ մնայուն կապ պահող հոգեւոր հովիւը առանցքային դեր կրնայ ունենալ ծուխի վերակազմակերպման, ծաւալման ու աշխուժացման մէջ: Հոգեւոր հովիւին քարոզները պէտք է ըլլան ամփոփ ու այժմեական: Հոգեւոր հովիւը կոչուած է ճիշդ կերպով ու առաւելագոյն չափով օգտագործել ընկերային ցանցը, ժողովուրդին հետ կեն-

դանի կապ պահելու համար: Այս ծիրեն ներս Սուրբ Գրային խորհրդածութիւնները, սուրբերու եւ տօներու մասին ամփոփ տեղեկութիւններու, ինչպէս նաեւ Ազգ. Առաջնորդարանին ու մեր Սուրբ Աթոռին առնչուած գլխաւոր լուրերու փոխանցումը ծուխի ժողովուրդին կը նկատենք անհրաժեշտ: Տնօրինեքը, զանազան առիթներով ընտանիքներուն այցելութիւնը, եկեղեցւոյ սրահէն ներս կազմակերպուելիք հաւաքները եւս մեծապէս կը նպաստեն եկեղեցի-ժողովուրդ առաւել մերձեցման: Հոգեւոր հովիւը յատուկ ուշադրութիւն պէտք է դարձնէ դըպրաց դասի կազմակերպման ու ընդհանրապէս ծիսակատարման: Անհրաժեշտ է որ Առաջնորդ Սրբազանը մօտէն հետամուտ ըլլայ հոգեւոր հովիւի գործունեութեան: Հոգեւոր դասի յատուկ հաւաքներու կազմակերպումը, հոգեւոր հովիւներու աշխատանքին յատուկ ուղեգիծի ճշդումը, պարբերաբար հովիւներու այլ ծուխեր տեղափոխութիւնը կըրնան դրական դեր ունենալ ծուխերու եւ ընդհանրապէս թեմի կեանքին ու առաքելութեան աշխուժացման մէջ:

Երկրորդ, հոգեւոր հովիւի կողքին, **հոգաբարձութիւնը** եւս կարեւոր դեր ունի կատարելիք ծուխի հզօրացման մէջ: Հետեւողական ճիգ պէտք է թափել երիտասարդացնելու հոգաբարձական կազմերը՝ նուիրեալ ու աշխատունակ անձեր պաշտօնի կոչելով: Հոգաբարձական կազմերէն ներս տիկիներու ներկայութիւնը կենսական է: Հոգաբարձութիւնը, Առաջնորդ Սրբազանին հետ խորհրդակցաբար, պէտք է մօտէն հետեւի հոգեւոր հովիւի աշխատանքներուն: Հոգեւոր հովիւը հարկ է որ նախագահէ հոգաբարձութեան ժողովներուն ու մասնակից դառնայ ճշդուած ծրագիրներու իրագործման:

Երրորդ, **ներդաշնակ ու սերտ գործակցութիւնը ծուխին եւ Ազգ. Առաջնորդարանին միջեւ հրամայական է:** Թեմը ծուխերու ամբողջութիւնն է: Ծուխը համարատու է Առաջնորդ Սրբազանին ու Ազգ. Վարչութեան: Այս շրջագծէն ներս, անհրաժեշտ է մէկ կողմէն՝ ամուր պահել համարատուութիւնը Ազգ. Առաջնորդարանին նկատմամբ, եւ միւս կողմէն՝ յարգել որոշ սահմաններէն ներս ծուխի ներքին ազատութիւնը, նկատի ունենալով երբեմն ծուխերուն ունեցած աշխարհագրական հեռաւորութիւնը եւ տարբեր պայմանները:

6) Վերաշխուժացման կարօտ մարզեր.–

ա.– **Քրիստոնէական դաստիարակութիւն:** Յատուկ կարեւորութիւն հարկ է որ տրուի քրիստոնէական դաստիարակութեան, թէ՛ թեմական եւ թէ՛ ծխային մակարդակներու վրայ: Բնականաբար, ծրագրումի ու աշխատանքի կեդրոնը հարկ է ըլլայ Ազգ. Առաջնորդարանը: Սակայն ներդաշնակութիւն մը պէտք է ստեղծուի Ազգ. Առաջնորդա-

րանին ու ծուխին միջեւ՝ բնականաբար միշտ նկատի ունենալով տեղական պայմանները: Ժողովրդային հրատարակությունները (աղօթք, սուրբերու կեանք, աստուածաշնչական խորհրդածություն, ելև.) կը նկատենք կարելոր: Սուրբ Գրոց սերտողությունը անհրաժեշտ է նոր մեթոտներով կատարել, ինչպես նաեւ յատուկ տեղ տալ մեր եկեղեցւոյ սուրբերուն, աւանդություններուն, դաւանական ու բարոյական ուսուցումներուն եւ ներկայ ընկերութեան հետ աղերս ունեցող ընկերաբարոյական հարցերուն: Կիրակնօրեայ վարժարաններու վերակազմակերպումը ու անոնց գործունեութեան ծաւալումը, մեր վարժարաններէն ներս կրօնագիտական նիւթերու դասաւանդումը ու բարոյախօսական պահերու հաստատումը կը նկատենք խիստ հրամայական՝ մեր նոր սերունդներու քրիստոնեական ու հայեցի կազմաւորման իմաստով:

բ.– **Ընկերային ծառայութիւն:** Ընկերային ծառայութիւնը մեր եկեղեցւոյ առաքելութեան կարելոր տարածքներէն մէկն է: Այս աշխատանքը առաւելաբար ուղղուած կրնայ ըլլալ մարդասիրական բնոյթ ունեցող պարագաներու, հիւանդներու, բանտարկեալներու եւ կամ նոր հաստատուած ընտանիքներու: Եկեղեցին պէտք է միշտ պատրաստ ըլլայ իր խնամքին յանձնուած հօտի ընկերային զանազան կարիքներու առաւելագոյն չափով օգտակար ըլլալու: Այս շրջագծէն ներս, հոգելոր հայրերու կողմէ հիւանդանոցներու ու ծերանոցներու հետեւողական այցելութիւնը կենսական է:

գ.– **Երիտասարդութիւն:** Երիտասարդութիւնը մեր եկեղեցւոյ շուրջ համախմբելը առաջնահերթութիւն է: Այս ուղղութեամբ յատուկ ծրագիրներ հարկ է որ պատրաստուին եւ Ազգ. Առաջնորդարանի եւ ծուխերուն կողմէ համադրուած կերպով իրականացուին՝ երիտասարդներուն մասնակցութեամբ: Երիտասարդ տարրեր հարկ է նշանակել թեմական բոլոր մարմիններէն ներս: Պէտք է երկխօսութիւն ստեղծել երիտասարդութեան հետ ու վստահիլ անոնց՝ փոխանակ զանոնք հեռու պահելու մեր կառոյցներէն ու ընդհանրապէս մեր հաւաքական կեանքէն:

դ.– **Միջ-եկեղեցական եւ միջ-կրօնական յարաբերութիւն:** Ներկայ աշխարհին մէջ միջ-եկեղեցական եւ միջ-կրօնական յարաբերութիւնը դարձած է անհրաժեշտութիւն: Գրեթէ բոլոր թեմերէն ներս կը գտնուին քրիստոնեայ եւ այլ կրօններու պատկանող համայնքներ ու կազմակերպութիւններ: Հետեւաբար, կարելոր կը նկատենք անոնց հետ թեմին յարաբերութիւնը: Փոխադարձ այցելութիւնները ու կարելոր ձեռնարկներու մասնակցութիւնը մեծապէս կը նպաստեն յարաբերութեան ամրապնդման:

7) Գործակցութիւն Յայ Կաթողիկէ եւ Յայ Աւետարանական եկեղեցիներուն հետ: Մեր Սուրբ Աթոռը միշտ դրական գործակցութիւն ունեցած է մեր ազգին անբաժան մասը նկատուող եւ մեր համայնական կեանքին մէջ գործող ու ծառայող Յայ Կաթողիկէ եւ Յայ Աւետարանական եկեղեցիներուն հետ: Նոյն ոգիով գործակցութիւնը ներդաշնակ ու համադրուած կերպով անհրաժեշտ է որ շարունակուի ծխային թէ թեմական ծիրէն ներս՝ մասնաւորաբար համահայկական ու ներգաղութային ընդհանրական խնդիրներուն շուրջ:

8) Գործակցութիւն քոյր կազմակերպութիւններուն հետ: Թեմերէն ներս գործող կազմակերպութիւններուն հետ գործակցութիւնը հրամայական է: Թեմը գաղութէն անկախ միաւոր մը չէ. թեմը ժողովուրդն է: Հետեւաբար, ժողովուրդի կեանքին մէջ ծառայող կազմակերպութիւններուն հետ Ազգ. Առաջնորդարանին՝ թեմական մակարդակի վրայ, եւ ծուխին՝ ծխային մակարդակի վրայ, սերտ գործակցութիւնը մեծապէս կրնայ նպաստել գաղութին վերակազմակերպման: Այս հեռանկարով թելադրելի է, որ թեմի վերակազմակերպչական աշխատանքներուն մասնակից դառնան նաեւ քոյր կազմակերպութիւնները:

9) Վարչակազմակերպչական: Շրջաններու պայմաններուն համաձայն հաստատել նոր ծուխեր եւ անհրաժեշտութեան պարագային մեծ ծուխերը ներքին բաժանումներու ենթարկել: Ի հարկին ստեղծել Առաջնորդական Փոխանորդութիւններ թէ՛ հեռաւոր շրջաններու յատուկ եւ թէ Առաջնորդարանէն ներս՝ յատուկ առաքելութիւն յանձնելով Փոխանորդին: Ազգ. Վարչութիւնը իր կողքին պէտք է ունենայ կրթական, տնտեսական ու կալուածական եւ ի պահանջել հարկին այլ մասնագիտական յանձնախումբեր, որպէսզի իր աշխատանքը ըլլայ անելի կազմակերպ ու համապարփակ:

10) Կանոնագրային: Հակառակ այն իրողութեան, որ թեմերու կանոնագրութիւնները ենթակայ են մնայուն բարեփոխութեան, այդուհանդերձ անոնք կարիքը ունին իրապաշտ մօտեցումով վերանայման, նկատի ունենալով թէ՛ թեմերէն եւ թէ շրջապատէն ներս տեղի ունեցող արագ փոփոխութիւնները:

Ահաւասիկ ընդհանուր գծերով Մեր պատկերացումը թեմերէն ներս կատարուելիք վերակազմակերպչական աշխատանքներու գծով: Ներկայ տարուան ընթացքին յաջորդաբար պիտի այցելենք մեր թեմերը, եւ նախապէս ճշդուած օրակարգի համաձայն աշխատանքային հանդիպումներ պիտի ունենանք Առաջնորդ Սրբազաններուն, հոգեւոր դասուն ու Ազգ. Իշխանութեանց հետ: Յաջորդող տարին թեմերու պա-

տասխանատու մարմինները պիտի այցելեն Անթիլիասի Մայրավանք եւ իրենց աշխատանքներուն մասին պիտի զեկուցեն մեզի ու Ազգ. Կեդրոնական Վարչութեան խառն ժողովին: Քննարկումի, խորհրդակցութեան ու ծրագրումի աշխատանքներուն պիտի յաջորդէ գործարումի գործընթացը: Նշեալ ծրագրին իրականացումը մեր Սուրբ Աթոռի ժամանակակից պատմութեան մէջ մեծ իրագործում մը պիտի ըլլայ, ինչպէս նաեւ ազդանշանը ու ուղենիշը պիտի դառնայ ողջ Սփիւռքի վերակազմակերպման: Արդ, մեր դիմաց կը գտնուի իրագործելի հսկայ ու անյետաձգելի աշխատանք մը, որուն, Աստուծոյ օրհնութեամբ, մեր թեմերը կոչուած են լծուելու հաւաքական ճիգով եւ պատասխանատու ոգիով ու բարձրագոյն աստիճանի նուիրումով՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ամբողջական զօրակցութեամբ:


Ձեզի կը մաղթենք յաջողութիւն:

Հայրական ջերմ սիրով,

Աղօթարար՝

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

1 Յունուար, 2023
Անթիլիաս, Լիբանան



ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

ԱՍՏՈՒԾՈՅ ԴԱՌՆԱԼ (Turning to God)

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ուրբաթ, 15 Մայիս 2020

Քովիտ-19 համաճարակը համաշխարհային արգելափակում պատճառեց եւ անդամալուծեց բազմաթիւ երկիրներ: Վստահաբար ան ցնցիչ տեսարաններ, մեծ վախեր եւ յուզիչ պատկերներ պիտի ձգէ իր ետին, որոնք անմոռանալի պիտի մնան, մասնաւորապէս անոնց համար, որոնք այս կամ այն ձեւով ապրեցան այդ տագնապը եւ որոնք գալիք սերունդներուն համար կենդանի վկայութիւններ պիտի հանդիսանան: Օրուան լուրերը լեցուն են մեռնողներու եւ վարակուածներու թիւերով, աղիտալի տեսարաններով եւ սրտաճմլիկ տեղեկութիւններով: Վստահ եմ, որ միլիոնաւոր մարդիկ յուզումնալի պահեր կ'ապրին: Այս ողբալի կացութիւնը հետեւեալ վախճանաբանական պատկերներով, յուզիչ նկարներով եւ ականատեսի տեղեկագրութիւններով կրնանք ամփոփել:—

Վախճանաբանական պատկերներ

- Աշխարհը վերածուած է շտապ օգնութեան սենեակի մը. հիւանդանոցները, առողջապահական կեդրոնները եւ շարժական հիւանդանոցները լեցուն են հիւանդներով:
- Հիւանդանոցներ կարիքը ունին բժշկական սարքերու եւ դեղորայքի:
- Մարգասրահներն ու սառցադահլիճները դիարաններու վերածուած են, մեռելներու կուտակման պատճառով:
- Հիւանդանոցի շտապ օգնութեան սենեակները չեն կրնար յաւելեալ հիւանդներ ընդունիլ, եւ հիւանդները լքուած են միջանցքներուն մէջ:
- Մեռելատունները լեցուած են, հաւաքական գերեզմանները բնական կը դառնան:
- Դիակներ քաղաքի փողոցներուն մէջ լքուած կը մնան:
- Խճողուած քաղաքները անմարդաբնակ ու անշնչացած քաղաքներու վերածուած են:

– Խաւարարտէ դագաղներ կը գործածուին հասնելու համար շատցող մեռելներուն թաղման կարիքին:

– Տասնեակներով դիակներ բեռնատար մեքենաներու մէջ լեցուած՝ իրենց կարգին կը սպասեն մեռելատուններու կամ գերեզմանատուններու առջեւ:

Յուզիչ նկարներ

– Եղբայր ու քույր «o solo mio»-ն կը նուագեն Միլանոյի ամայացած ճամբաներուն մէջ:

– Փարիզի շրջաններէն մէկուն մէջ մարդիկ իրենց պատշգամներէն ազգային քայլերգը կ'երգեն:

– «Ասիկա համերգ չէ, այլ աղօթք է», ըսաւ Անտրէա Պոչելլի, մինչ Միլանոյի դատարկ Մայր Տաճարին մէջ «Ave Maria»-ն կ'երգէր:

– Փոքր քաղաքի մը կառավարիչը իր ընտանիքի անդամներուն հետ սնունդամթերք կը բաժնէր ինքնամեկուսացած ընտանիքներուն:

Խուճապի մատնող իրողութիւններ

– «Յառաջիկայ քանի մը շաբաթներուն մեռելներուն թիւը հարիւր հազարը կը գերազանցէ» (հանրածանօթ վիրուսագէտ մը):

– Օրը օրին աշխարհի գլխաւոր քաղաքներուն մէջ վարակուածներու թիւը կը բարձրանայ:

– Միայն վերջին 24 ժամուան ընթացքին, 743 մահ արձանագրուած է մէկ քաղաքի մէջ:

– Հիւանդանոցները պատերազմական գօտիներու վերածուած են:

– Գնացքի կառքերը իբրեւ շարժական հիւանդանոցներ կը գործածուին:

Ականատեսի վկայութիւններ

– «Մեր ըրածը անձնասպանական առաքելութիւն է» (հիւանդապահուհի մը):

– «Մենք պատերազմական գօտիի մէջ ենք՝ առանց զինամթերքի» (բժիշկ մը):

– «Ծայրայեղօրէն սրտաճմլիկ կացութիւններու փորձառութիւնը կ'ապրինք» (հիւանդապահուհի մը):

– «Հիւանդանոցները այլեւս չեն հաշուեր մեռելներուն թիւը» (բժիշկ մը):

– «Մենք պարզապէս կորսուած ենք, չենք գիտեր թէ ինչպէս պիտի յաղթենք այս թշնամիին» (բժիշկ մը):

– «Այնպէս կը թուի, որ մենք "Վախճանը" հիմա կ'ապրինք» (թղթակից):

– «Հաւատքի կենսական կարեւորութեան գիտակցութիւնը ունեցայ» (հիւանդ մը):

Համաճարակի առաջին օրերուն, լուրերուն մէջ մեռնողներուն եւ վարակուածներուն ցուցակը կարդալը ամենօրեայ սովորութիւն եղաւ ինծի: Մինչ կը լսէի այդքան շատ մարդոց ականատեսի վկայութիւնները, Սաղմոսերգուի բառերով աղօթեցի իւրաքանչիւրին փոխարէն, ըսելով. «Մի՛ լճեր զիս, Տէ՛ր, ո՛վ Աստուածս, հեռու մի՛ մնար ինձմէ: Շուտով օգնութեան հասիր ինծի, ո՛վ Տէր, իմ փրկութի՛ւնս» (Սղ 38.21-22): Երբ աղօթքը հաւատքով եւ յոյսով կը կատարուի, կենդանի յարաբերութիւն մը կը ստեղծէ մարդ էակին եւ Աստուծոյ միջեւ: Աղօթքը նաեւ ընկերութիւն կը ստեղծէ: Փորձութեան այս ժամանակներուն, եկէք նախքան քնանալը, ամէն գիշեր աղօթենք քորոնա վիրուսէն վարակուածներուն համար, նաեւ անոնց՝ որոնք այս մահացու վիրուսին դէմ կը պայքարին:

Երկուշաբթի, 18 Մայիս 2020

Համաճարակը յիշեցուց ինծի միջ-եկեղեցական քննարկում մը՝ պատասխանատու ընկերութիւն թեմային շուրջ: Միջավայրի եւ ընկերատնտեսութեան մասին որեւէ լուրջ քննարկում պէտք է ըստ արժանուոյն նկատի ունենայ ընկերութեան ինքնըմբռնումը եւ անոր գերակատարութիւնը ստեղծուած իրավիճակին մէջ:

Պատասխանատու ընկերութիւն հասկացութիւնը առաջին անգամ քննարկուեցաւ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի առաջին համաժողովին (1948): Համաժողովը ընկերատնտեսութեան արդարութիւնը, ազատութիւնը, ժողովրդավարութիւնն ու հաշուետուութիւնը նկատեց պատասխանատու ընկերութեան մը էական յատկանիշերը: Յաջորդող տասնամեակներուն, «պատասխանատու ընկերութիւն» հասկացութիւնը ընկերա-բարոյագիտական շատ աւելի լայն տարածք ստանալով կոշուեցաւ «արդար, մասնակցական եւ կայուն ընկերութիւն»: Այս ծիրէն ներս՝ արդարութիւնը, մասնակցութիւնն ու կայունութիւնը կորիզը հանդիսացան եկեղեցիներու եւ ամբողջ միջ-եկեղեցական շարժումին խոր քննարկումներուն: Վեցերորդ Համաժողովին (1983), «Արդարութիւն, Խաղաղութիւն եւ Ստեղծագործութեան Արժանապատուութիւն» թեմայով սկիզբ առած գործընթացով եւ Սէուլի Համաշխարհային Ժողովի (1990) աստուածաբանական 10 հաստատումներուն որդեգրումով ընկերատնտեսական արդարութեան եւ կենսոլորտի պահպանման միջեւ սերտ կապակցութիւն մը յառաջացաւ, ներառելով կեանքի սրբութիւնն ու ամբողջականութիւնը: Համաժողովին կողմէ հրապարակուած յայտարարութեան մէջ, ի շարս այլոց կատարուած են հետեւեալ գլխաւոր հաստատումները.՝ Բոլոր պետութիւնները հաշուետու են Աստուծոյ: Աստուած կը գերադասէ աղքատ-

ները, բոլոր ազգերը եւ ցեղերը հաւասար են, այր թէ կին ստեղծուած են Աստուծոյ պատկերով, երկրագունդին պահպանումը: Միջ-եկեղեցական այս կարեւոր թեմաներուն եւ անոնց քննարկումներուն մէջ շեշտուեցաւ անյետաձգելի պահանջը պատասխանատու ընկերութեան մը ստեղծման:

Բազմաթիւ ընկերութիւններու մէջ կը տիրապետեն ապականութիւնը, ընկերատնտեսական անարդարութիւնը եւ բարոյական քայքայումը: Ընկերութիւններու կենսատճը նկատելի կերպով փոխուած է սպառողական մշակոյթի, նոր կենցաղակերպերու, նոր վարքային շափանիշերով եւ նոր արժեզփայտութեան ազդեցութեան ներքեւ: Բարոյական արժէքները լուսանցքայնացած են, մինչ շուկայի տնտեսութիւնը եւ անսահման աճը դարձած են յառաջդիմութեան շափանիշեր: Եկեղեցին չի՛ կրնար թերանալ Աստուծոյ Արքայութեան յուսացող ժողովուրդ մը պատրաստելու իր քրիստոսակեդրոն առաքելութեան մէջ: Ժողովուրդ մը, որ հաշուետու է Աստուծոյ, հաւատարիմ է անոր կամքին եւ Քրիստոսով իրագործուած նպատակին: Յետակ է, որ առանց բարոյագիտական հիմքի, ունէ ընկերութիւն ուշ կամ կանուխ պիտի խորտակուի. «Ականջ ունեցողը թող լսէ» (Մտ 11.15):

Ես միշտ շեշտած եմ այն վճռորոշ դերը, զոր կրօններ կրնան ստանձնել բարոյապէս առողջ, հոգեւորապէս աշխոյժ, տնտեսապէս ընդունելի եւ բնապահպանութեան հետամուտ ընկերութեան մը կառուցման մէջ:

Արդարեւ, լուսարձակի տակ բերելով, սպառողական մշակոյթի ժխտական հետեւանքները, համաձայնաբար պատասխանատու ընկերութիւն մը յառաջացնելու անհրաժեշտութիւնը զգացուց:

Երեւոյթի, 19 Մայիս 2020

Քրիստոնէական աստուածաբանութիւնը կարեւորութեամբ նկատի կ'առնէ հոգեկան եւ ֆիզիքական առողջութեան սերտ առնչութիւնը: Ասիկա լոկ մեթոտաբանական հարց մը չէ, այլ՝ էաբանական, եւ էական հաւատքին համար: Պատմութեան մէջ, յստակ է Աստուծոյ միջամտութիւնը բուժման, եւ մասնաւորաբար Քրիստոսի մարդեղացման եւ անոր փրկագործական առաքելութեան մէջ: Ուստի, հոգեկան եւ ֆիզիքական առողջութեան կապը ո՛չ միայն եկեղեցւոյ հովուական առաքելութեան կ'առնչուի, այլ՝ անոր էութիւնն իսկ է:

2006-ին, Միացեալ Նահանգներու մէջ Ինտիանա եւ Նոթրը Տէյմ Համալսարաններու կողմէ կազմակերպուած միջազգային գիտաժողովի մը ընթացքին դասախօսութիւն մը տուի «Հաւատքի դերը բժշկութեան մէջ» նիւթին շուրջ, ուր խօսեցայ բժշկութեան աստուածաշնչական հասկացողութեան մասին, իբրեւ ամբողջական աշխատանք, որ կ'ընդգրկէ մարդու մը կեանքին բոլոր երեւոյթները: Այլ խօսքով, բուժումը վերականգնումն է մարմինին, միտքին եւ հոգիին ամբողջականութեան: Սուրբ պատարագի ընթացքին, պատարագիչը

կը խնդրէ Աստուծմէ, որ սրբացնէ մեր հոգիները, մտքերն ու մարմինները: Մարմինին առողջութիւնը կարելոր է, որովհետեւ անոր միջոցաւ Աստուծոյ շնորհքը կը ստանանք: Ֆիզիքական բուժումը, հոգեւոր բուժումն ու մտաւոր բուժումը իրարու սերտօրէն առնչուած են, եւ՝ իրարմով կ'ամրապնդուին:

Բժշկելը միայն մարմնական հիւանդութեան մը դարման չէ. ան նաեւ կը վերականգնէ կեանքի որակը՝ Աստուծոյ նմանութեամբ ստեղծուած: Ինչպէս որ կեանքը Աստուծոյ կողմէ տրուած է, կեանքի բուժումն ալ նոյնպէս Աստուծոյ կողմէ է. Ան է բժշկութեան գերագոյն աղբիւրը. Աստուծոյ Որդւոյն մարդեղացումը կը վերականգնէ ապականած, աղաւաղուած եւ խորտակուած կեանքը՝ իր ամբողջութեանը մէջ. «Նս եկայ որպէսզի կեանք ունենան, եւ լեցուն կեանք ունենան» (ՅՅ 10.10): Աւետարանները կը հաստատեն, որ Քրիստոսի կատարած մարմնական բժշկումը քայլ մըն է դէպի հոգեւոր բժշկութիւն, այլ խօսքով՝ հոգիի փրկութիւն:

Ի՞նչ կը պատահի, երբ մեր գիտական կարողութիւնները անբաւարար ըլլան: Երէկ, համաճարակին դիմաց ահազանգի մատնուած քաղաքի մը մէջ գործող բժիշկ մը հաստատեց, որ մինչ իր կարելին կ'ընէր պաշարելու վիրուսի աղէտին դէմ, հասած է այն եզրակացութեան, թէ իր բժշկական կարողութիւնները սահմանափակ են: Ուրիշ բժիշկ մը խոստովանեցաւ, թէ նախքան տագնապը, ինք անաստուած մըն էր, բայց հիւանդներուն բժշկական խնամք տալէ ետք, հաւատացեալ դարձաւ: Բժշկուհի մը խոստովանեցաւ, որ երբ չկարողացաւ աւելին կատարել՝ ինքզինք անկարող զգաց, եւ միայն «Օգնէ՛ ինծի, Աստուած» բառերուն մէջ գտաւ իր նեցուկը: Նաշվիլի մէջ, Վէնտրպիլթ Համալսարանի Բժշկական Կեդրոնի հիւանդապահուհիներ հիւանդանոցի տանիքը կը հաւաքուին՝ աղօթելու համար:

Բժշկութեան նկատմամբ ամբողջական մօտեցում մը՝ համադրելու բժշկական եւ հոգեւոր, գիտական եւ հովուական տարածքները, հրամայական պահանջ է: Ասիկա համաճարակէն քաղուած դասերէն մէկն է: Արդի բժշկութիւնը մեր առջեւ կը դնէ բարոյական եւ հովուական բազմաթիւ հարցականներ, որոնք կրօններուն կողմէ խոր քննարկումի եւ հետախուզութեան կարիքը ունին:

Անգլերէնէ թարգմանեց՝
ՄԱԿԱՐ ԵՊՍ. ԱՇԳԱՐԵԱՆ

(Շար. 10)

ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷՈՍ ԱԲԵՏԱՐԱՆԻ (2.4-11)

«Կանչեց ժողովուրդի բոլոր աւագ ֆահանմաներն ու Օրէնքի ուսուցիչները եւ հարցուց անոնց, թէ ո՛ւր պիտի ծնէր Քրիստոսը» (Մտ 2.4):

1) Հերովդէս քահանաներուն եւ Օրէնքի ուսուցիչներուն հարցուց Յիսուսի ծննդատեղիին մասին, որովհետեւ կ'ակնկալէր որ անոնք պատասխան ունենային Քրիստոսի անձին մասին: Արդարեւ, Աստուծոյ խօսքին քարոզիչը պէտք է յստակ պատասխան ունենայ իրեն ուղղուած աստուածաշնչական ոեւէ հարցի գծով (Մղ 3.7):

2) Հերովդէս լսեց Քրիստոսի մասին եւ կանչել տուաւ աւագ քահանաներն ու Օրէնքի ուսուցիչները, որպէսզի անոնցմէ գիտնար անոր ծննդեան տեղը եւ կարգադրէր անոր մահը: Մենք որո՞ւ կը դիմենք երբ լսենք Քրիստոսի մասին. այնպիսի մարդոց՝ որոնք կրնան օգնել մեզի մօտենալո՞ւ անոր, թէ այնպիսի մարդոց՝ որոնք կ'ուզեն Յիսուսի անունը ջնջել մեր միջավայրէն:

3) «Ժողովուրդի... ֆահանմաները»: Ասոնք ժողովուրդի ծառայութեան համար կանչուած էին քահանայութեան, բայց իրենց անձնական շահին համար աւելի Հերովդէսին կը ծառայէին քան ժողովուրդին: Այսօր որքա՞ն եկեղեցականներ կան, հայ թէ օտար, որոնք Աստուծոյ ու ժողովուրդին ծառայութեան կոչուած են, բայց անոնց ծառայելու փոխարէն՝ աշխարհային կազմակերպութեանց կը ծառայեն. Քրիստոսի ծառայելու փոխարէն՝ նոր օրերու Հերովդէսներու կը ծառայեն. աղքատներուն ծառայելու փոխարէն՝ զանոնք ճգմող հարուստներուն կը ծառայեն:

4) «Ո՛ւր պիտի ծնէր Քրիստոսը»: Հերովդէս ուզեց գիտնալ Քրիստոսի ծննդեան տեղը, ո՛չ թէ որպէսզի երթար ու պաշտէր զայն, այլ՝ որպէսզի մարդ դրկէր ու սպաննել տար զայն: Այսօր որքա՞ն մարդիկ կան, որոնք իրենք զիրենք Քրիստոսի երկրպագու կը կոչեն, եւ սակայն Քրիստոսասպան կեանք կ'ապրին:

«Անոնք պատասխանեցին. "Հրէաստանի Բեթլեհէմ ֆաղափին մէջ, որովհետեւ Միքիա մարգարէն այսպէս գրած է"» (Մտ 2.5):

1) Քահանաներն ու Օրէնքի ուսուցիչները որոնք խոստացեալ Մեսիային ծնունդը աւետող առաջին մարդիկը պէտք էր ըլլային՝ երբեք չխանդավառուեցան եւ չուրախացան երբ լսեցին անոր ծնունդին մասին: Այսօր ալ կան մարդիկ, որոնք կը լսեն Յիսուսի ծնունդին ու սիրոյն մասին, բայց չեն ուրախանար ու չեն խանդավառուիր. մարդիկ՝ որոնք անցեալի քահանաներուն եւ Օրէնքի ուսուցիչներուն նման կոչուած են Մեսիային աւետաբերները դառնալու, բայց անոր աւետաբերները դառնալու փոխարէն՝ անոր մատնիչները դարձած են ու կը դառնան:

2) Քահանաներն ու Օրէնքի ուսուցիչները գիտէին թէ ո՛ւր պիտի ծնէր Մեսիան, բայց իրենք անձնապէս չէին հետաքրքրուած Մեսիայով եւ փափաք չունէին հետեւելու անոր. փաստօրէն, անոնք ո՛չ ընկերացան մոգերուն եւ ո՛չ ալ զանոնք առաջնորդեցին: Այսօր ալ շատ մարդիկ կան, որոնք շատ բան գիտեն Քրիստոսի մասին, բայց երբեք սէր ու հետաքրքրութիւն չունին անոր հանդէպ:

3) Քահանաներն ու Օրէնքի ուսուցիչները Մեսիային ծննդատեղին գիտցան Աստուածաշունչին միջոցաւ: Այսօր ալ Աստուածաշունչն է որ ցոյց կու տայ մեզի Յիսուսի տեղը, զայն գտնելու կերպը, անոր հասնելու ճամբան:

4) Քահանաները կեանքի Հացի ճամբան ցոյց տուին մոգերուն, բայց իրենք չզացին ճաշակելու այդ Հացէն: Այսօր որքա՛ն մարդիկ կան որոնք կեանքի Հացին մասին կը խօսին, կը քարոզեն, կը պատգամեն, կը վկայեն, բայց իրենք անձնապէս այդ Հացէն չեն ճաշակած եւ փափաք ալ չունին ճաշակելու:

5) Քահանաները գիտէին որ Հերովդէս արիւնահեղ մարդ էր. ուստի Մեսիային ծննդեան տեղը անոր յայտնելը՝ Մեսիային դէմ դաւաճանութիւն էր: Աշխարհը արիւնահեղ Հերովդէսի նման է. ով որ իր եղբայրը կը մատնէ աշխարհի ձեռքը՝ դաւաճան է:

«Դո՛ւն, Բեթլեհէ՛մ, Յուդայի ֆաղափ, հոչակով նուազ չես Յուդայի միւս ֆաղափներէն. որովհետեւ Բեզմէ պիտի ելլէ իշխան մը, որ պիտի հովուէ իմ ժողովուրդս՝ Իսրայէլը» (Մտ 2.6):

1) Բեթլեհէ՛մ կը նշանակէ՝ «հացի տուն»: Բեթլեհէ՛մը նախապէս կը կոչուէր՝ «Եփրաթ» տեղւոյն պարարտութեան եւ պտղաբերութեան պատճառով. «Եփրաթ» բառը արդէն կը նշանակէ՝ «պարարտութիւն, պտղաբերութիւն»: Այս գիւղը կառուցող մարդուն անունը նաեւ Եփրաթ էր, իսկ անոր որդիին անունը՝ Բեթլեհէ՛մ էր (Ա.Մն 4.4): Յիսուս ծնաւ Բեթլեհէ՛մի մէջ, այլ խօսքով՝ «հացի տուն»ին մէջ, պարզելու համար թէ ի՛նքն է երկինքէն իջնող կենդանի հացը (Յհ 6.51), որ կեանք կը շնորհէ՝ կեանքի ծարաւ հոգիներուն:

2) «Դ՛ն՛մ, Բեթլեհէ՛մ, Յուդայի ֆաղաֆ»: Բեթլեհէ՛մը կը կոչուի «Յուդայի ֆաղաֆ», որովհետեւ կը գտնուէր Յուդայի երկրին մէջ, այլ խօսքով՝ Յուդայի ցեղին յատկացուած քաղաքներուն շարքին:

3) Ասկէ առաջ ըսինք թէ Աստուածաշունչին մէջ յիշուած են երկու Բեթլեհէ՛մներ, մին Յուդայի քաղաքին մէջ (Միք 5.2), իսկ միւսը՝ Չաբուղոնի մէջ (Յես 19.15): Յուդայի Բեթլեհէ՛մ քաղաքը դարձաւ նշանաւոր, որովհետեւ դարձաւ ծննդավայրը Յիսուսի, մինչդեռ Չաբուղոնի Բեթլեհէ՛մ քաղաքը կորսուեցաւ պատմութեան փոշիին մէջ: Ով որ իր սիրտը չի դարձնէր ծննդավայրը Յիսուսի, դատապարտուած է կորսուելու պատմութեան փոշիին մէջ:

4) «Հոչակով նուազ չես Յուդայի միւս ֆաղաֆներէն»: Անհոչակ Բեթլեհէ՛մ քաղաքը պիտի դառնար հոչակաւոր, որովհետեւ հո՛ն էր որ առաջին անգամ մարդեղացեալ Աստուծոյ փառքը պիտի հոչակուէր հովիւներուն ու մոզերուն կողմէ: Մենք եւս, անհոչակ արարածներ ենք, բայց Աստուծոյ համար արժէ՛ք կը դառնանք միայն այն ատեն՝ երբ Յիսուս ծնի մեր մէջ:

5) «Քեզմէ պիտի ելլէ իշխան մը, որ պիտի հովուէ իմ ժողովուրդս՝ Իսայելը»: «Իշխան» եւ «հովիւ» բառերը կը բացայայտեն, թէ Յիսուս աշխարհ եկաւ ըլլալու Իշխանը՝ իր իշխանութիւնը դաւանող մարդոց, եւ Հովիւը՝ իր հովուութեան վստահող մարդոց: «Իշխան» բառը ցոյց կու տայ, թէ ան ունի իշխանութիւն՝ որուն իշխանը ինքն է. ունի թագաւորութիւն՝ որուն թագաւորը ինքն է. ունի տէրութիւն՝ որուն Տէրն ու տիրողը ինքն է. ունի զօրութիւն՝ եւ այդ զօրութեան աղբիւրը իր իսկ անձն է: Իսկ «Հովիւ» բառը ցոյց կու տայ, թէ ինքն է որ մեզ կը հովուէ, այլ խօսքով՝ կ'առաջնորդէ, կը կերակրէ, կը կշտացնէ, կը խնամէ, կը գուրգուրայ, կը պաշտպանէ ու կը պահպանէ: Պարզ հովիւը կը կերակրէ իր ոչխարը, որպէսզի յետոյ զայն դարձնէ իր կերակուրը. բայց Յիսուս տարբեր հովիւ է. ան «իւ կեանքը կու տայ ոչխարներուն համար» (Յհ 10.11-12):

«Այն ատեն Հերովդէս գաղտնաբար իր մօտ կանչեց մոզերը եւ անոնցմէ ստուգեց աստղին երեւելուն ժամանակը» (Մտ 2.7):

1) Եթէ Հերովդէսի դիտումը լաւ ըլլար եւ եթէ իսկապէս ուրախացած ըլլար երկնաւոր Թագաւորին ծնունդին համար՝ գաղտնաբար պիտի չկանչէր մոզերը, այլ՝ հրապարակաւ: Մենք ծածո՛ւկ հետեւորդներն ենք Քրիստոսի, թէ՛ յայտնի: Հրապարակաւ կը դաւանի՞նք Տէրը, թէ՛ միայն դոնփակ սենեակներու մէջ:

2) «Գաղտնաբար»: Այս բառը ցոյց կու տայ թէ Չարն ու շար մարդիկ ծածուկ կերպով կը գործեն: Որոմի առակին մէջ Չարը գիշերով է որ իր որոմները (շար մտածումները) կը ցանէ մարդոց սրտին մէջ (Մտ 13.25): Այսօր շատ կազմակերպութիւններ Հերովդէսի նման ծածուկ կերպով կը ծրագրեն ու կը գործեն, վերջ դնելու համար Քրիստոսի ու քրիստոնեաներու ներկայութեան այս աշխարհին մէջ:

3) «Ատուգեց»: Հերովդէս ուզեց ստոյգ տեղեկութիւններ քաղել մանուկին մասին, որպէսզի անոր մահը դարձնէր անխուսափելի: Չարագործ մարդիկ կ'ուզեն ամէն ինչ ստոյգ կերպով գիտնալ հաւատացեալներուն մասին, որպէսզի ճիշդ ատենին՝ իրենց նետը արձակեն անոնց վրայ:

4) Ուշագրաւ է թէ ինչպէս Հերովդէս կրցաւ վարպետօրէն ծածկել իր խռովութիւնն ու վրդովմունքը եւ խաղաղութեան պատկերով ներկայանալ, որպէսզի կարենար անհրաժեշտ տեղեկութիւնները քաղել մոգերէն: Այս մասին Յովհան Ոսկեբերան կ'ըսէ. «Հերովդէս ինքզինք քարեպաշտ իբրեւ ներկայացուց, բայց իր քարեպաշտութեան ետին սուր թափցուցած էր: Ատելութեամբ լեցուն սիրտ ունէր, բայց կրցաւ պարզութեամբ երեւիլ: Այս է նամբան բոլոր շարագործներուն. պարզ ու ընկերասէր կը ձեւանան, բայց թափուն կերպով կը ծրագրեն վնաս հասցնել ուրիշներուն»:

«Ապա զանոնք Բեթլեհէմ դրկեց, պատուիրելով. "Գացէ՛ք եւ ստոյգ տեղեկութիւններ փաղելով գտէ՛ք երեխան, եւ երբ գտնէ՛ք ինծի իմացուցէ՛ք, որպէսզի ես ալ գամ եւ երկրպագեմ իրեն"» (Մտ 2.8):

1) «Գացէ՛ք»: Եթէ Հերովդէս հետաքրքրուած ըլլար իր անձին փրկութեամբ՝ «երթա՛նք» պիտի ըսէր եւ ո՛չ թէ «գացէ՛ք»: Մէկը որ իր անձին փրկութեամբ չէ հետաքրքրուած, ի՞նչպէս կրնայ հետաքրքրուած ըլլալ Փրկիչով: Այսօր շատ մարդիկ Հերովդէսի նման ուրիշները կը դրկեն Յիսուսի մօտ, բայց իրենք անձնապէս չեն երթար. կը քարոզեն Տիրոջ մօտենալու մասին, բայց իրենք Քրիստոսի մօտենալու ճիգ չեն թափեր:

2) «Գացէ՛ք եւ... գտէ՛ք երեխան»: Հերովդէս մոգերը շղթկեց Յիսուսի մօտ որպէսզի գտնեն ու պաշտեն զայն, այլ՝ որպէսզի անոնց միջոցաւ անոր տեղը գիտնայ: Անոնք շանդրադարձան այս իրողութեան, մինչեւ որ Աստուած երագով խօսեցաւ անոնց հետ (12-րդ համար): Մեր ալ կեանքին մէջ իրենց խօսքերուն բուն իմաստը ծածկող Հերովդէսներ կրնան ըլլալ, եւ մենք կրնանք շանդրադառնալ եթէ Աստուած չյայտնէ մեզի ատիկա:

3) «Ստոյգ տեղեկութիւններ փաղելով գտէ՛ք երեխան»: Հերովդէս յստակ մանրամասնութիւններ կ'ուզէր Յիսուսի մասին: Կ'ուզէր գիտնալ անոր ծննդեան ժամանակն ու տեղը, եւ ապրած տեղը: Չար մարդիկ կ'ուզեն «ստոյգ տեղեկութիւններ» ունենալ Յիսուսի հետեւորդներուն մասին, որպէսզի խանգարեն անոնց գործերը:

4) «Որպէսզի ես ալ գամ եւ երկրպագեմ իրեն»: Սո՛ւտ էր Հերովդէսի այս խօսքը: Ան եթէ գտնէր Յիսուսը՝ պիտի չերկրպագէր անոր, այլ՝ պիտի սպաննէր: Այսօր որքա՛ն մարդիկ կան, որոնք աստուածապաշտութիւն կը քարոզեն՝ բայց իրենք «աստուածասպան» կեանք մը կ'ապրին:

«Թագաւորին այս հրահանգը լսելէ ետք, մոզերը մեկնեցան: Անոնք չափազանց ուրախացան, երբ կրկին տեսան այն աստղը, որ արեւելքի մէջ տեսեր էին. անա աստղը առաջնորդեց զիրենք մինչեւ որ եկաւ ու կեցաւ այն վայրին վրայ ուր երեխան կը գտնուէր» (Մտ 2.9-10):

1) Հերովդէս քահանաներէն եւ Օրէնքի ուսուցիչներէն գիտնալէ ետք թէ խոստացուած Թագաւորը Բեթլեհէմի մէջ պիտի ծնէր, մոզերը հոն ղրկեց, պատուիրելով անոնց որ ստոյգ տեղեկութիւններ բերեն իրեն մանուկին մասին: Երբ մոզերը հեռացան Հերովդէսին քովէն, զիրենք առաջնորդող աստղը կրկին երեւցաւ անոնց եւ «անոնք չափազանց ուրախացան երբ կրկին տեսան» աստղը: «Ուրախացան» կ'ըսուի, որովհետեւ տրտմած էին: Եւ տրտմած էին, որովհետեւ, թէպէտ գիտցան որ խոստացուած Թագաւորը Բեթլեհէմի մէջ ծնած էր, բայց վստահաբար մտածեցին որ Բեթլեհէմ երթալէ ետք, Բեթլեհէմացիներ պիտի չկարենային օգնել իրենց գտնելու մանուկին տեղը: Մխիթար Վրդ. Սեբաստացի կ'ըսէ. «Երբ մոզերը տեսան աստղը՝ չափազանց ուրախացան, ...որովհետեւ հիմա վստահօրէն գիտցան թէ պիտի գտնեն Մեսիան աստղին առաջնորդութեամբ: Ուրախացան, որովհետեւ աստղը վերստին տեսնելով, տեսան թէ ինչպէս Աստուած կը խնամարկէր զիրենք եւ կը ղրկէր իր աստղը, որպէսզի առաջնորդէր զիրենք մանուկին ծնած տեղը»:

2) Մոզերը Հերովդէսին քովէն հեռանալէ ետք միայն աստղը տեսան: Պէտք է հեռանանք մեր կեանքի բոլոր այն Հերովդէսներէն, այլ խօսքով՝ անձերէն ու երեւոյթներէն, որոնք արգելք են որ մենք տեսնենք Աստուծոյ աստղերը, այլ խօսքով՝ մեզ Քրիստոսի առաջնորդող ճամբաները, մեզ Յիսուսին մօտեցնող միջոցները: Պէտք է հեռանանք ոեւէ բանէ՝ որ մեզ կը հեռացնէ Քրիստոսէ:

3) Մոզերը ուրախացան՝ ո՛չ թէ երբ գիտցան թէ Յիսուս Բեթլեհէմի մէջ ծնած էր, այլ՝ երբ անոր աստղը տեսան: Աստուծոյ մասին սոսկ գիտնալը չ'ուրախացնէր մեզ, այլ պէտք է տեսնել եւ ըմբռնել զայն: Սուրբ Գիրքը գիտնալը մեր միտքը կը լեցնէ, մինչդեռ Սուրբ Գիրքին Աստուածը գիտնալը՝ կը լեցնէ մեր սիրտն ու հոգին:

4) «Ուրախացան» բառը ցոյց կու տայ, թէ մարդուն սրտին մէջ չի կրնար ուրախութիւն ըլլալ, երբ կը կորսնցնէ Աստուծոյ աստղին առաջնորդութիւնը: Մեր ուրախութեան աղբիւրը Քրիստոս ինքն է. Աղբիւրէն հեռացողը՝ Տիրոջ ուրախութենէն կը հեռանայ. իսկ Տիրոջ ուրախութենէն դատարկուողը՝ զօրութենէն կը դատարկուի, որովհետեւ «Տիրոջ ուրախութիւնը ձեր զօրութիւնն է» (Նե 8.10):

5) «Կրկին տեսան»: Աստուած կրկին ու կրկին իր շնորհքը կը յայտնէ զինք փնտռողներուն: Ան բնա՛ւ չի լքեր այն մարդիկը որոնք կը փնտռեն իր Որդին:

6) Եթէ մոգերը Հերովդէսին երկրպագէին, կրնային կորսնցնել աստղին առաջնորդութիւնը: Չերկրպագենք ոեւէ անձի, որովհետեւ ատիկա կրնայ պատճառ դառնալ որ կորսնցնենք Աստուծոյ առաջնորդութիւնը: Եթէ Աստուծոյ տրուելիք պատիւը տանք մարդուն՝ կը կորսնցնենք թէ՛ Աստուած եւ թէ՛ անոր կողմէ մեզի համար վերապահուած պատիւը:

7) Մոգերը զօրաւոր փափաք ունէին տեսնելու նորածին Յիսուսը, եւ անոր համար ալ Աստուած զանոնք աստղանման հրեշտակի մը միջոցաւ առաջնորդեց անոր քով: Եթէ մէկը Յիսուսը տեսնելու անկեղծ փափաք ունի իր սրտին մէջ, Աստուած անպայման որ զինք կ'առաջնորդէ իր Որդիին մօտ: Զակքէոս Յիսուսը տեսնելու փափաք ունէր (Ղկ 19.3). ո՛չ միայն զայն տեսաւ, այլեւ զայն իբրեւ հիւր ունեցաւ իր տան մէջ, եւ զայն իբրեւ Փրկիչ ունեցաւ իր տան անդամներուն. արդարեւ, ոեւէ մէկը որ Յիսուսը տեսնելու փափաք ունի, Յիսուս կը դառնայ բնակիչը իր սրտին ու Փրկիչը իր անձին:

8) «Մինչեւ ուր» բառերը ցոյց կու տան, թէ Աստուած յարատեւօրէն կը հետապնդէ մեր փրկութիւնը: Ան տեղի չի տար մեր ցուցաբերած յամառութեան դիմաց: Ան փնտոեց կորսուած ոչխարը մինչեւ որ գտաւ զայն (Ղկ 15.4):

9) Աստղը ճամբուն կիսուն չթողուց մոգերը, այլ առաջնորդեց զանոնք «մինչեւ ուր եկաւ ու կեցաւ այն վայրին վրայ ուր ետեխան կը գտնուէր»: Աստուած ճամբուն կիսուն չի թողուր իր հետեւորդները: Մարդիկ կրնան ճամբուն կիսուն թողուլ մեզ. կրնան նեղութեան ժամանակ լքել մեզ. այդպէս չէ Աստուած: Իր Որդիին առաջնորդող ճամբուն վրայ մեր կողքին է Աստուած իբրեւ առաջնորդ ու թիկնապահ, իբրեւ ճանապարհորդակից ու զօրակից:

10) Ըսինք թէ մոգերուն երեւցող աստղը հրեշտակ մըն էր: Սա ցոյց կու տայ թէ հրեշտակներուն կոչումն է մարդիկը Քրիստոսի առաջնորդել: Այդպիսի հրեշտակներ ըլլանք մենք նաեւ՝ մարդիկը Քրիստոսի առաջնորդելով: Ամէն անձ որ ընդունած է Քրիստոսը իբրեւ փրկութեան ճամբայ, իր կարգին պէտք է դառնայ ճամբայ՝ ուրիշները Քրիստոսի փրկութեան առաջնորդող:

11) Մոգերուն առաջնորդուիլը հրեշտակի մը կողմէ Յիսուսի մօտ, կը պարզէ թէ իւրաքանչիւր մարդ ունի իր պահապան հրեշտակը, որուն պարտականութիւնն է իր խնամքին վստահուած մարդը առաջնորդել Քրիստոսի: Ուստի, պէտք է խնդրենք մեր պահապան հրեշտակներէն որ օգնեն մեզի, որ միշտ Քրիստոսի շուքին ու կամքին ներքեւ մնանք:

12) Երբ կը հաստատուի թէ աստղը «կեցաւ այն վայրին վրայ ուր ետեխան կը գտնուէր», ասիկա կը պարզէ թէ Աստուած իր առաջնորդութեանը մէջ անսխալական է: Բանաւոր հօտի հովիւներ իրենց առաջնորդութեանը մէջ կրնան սխալիլ, բայց Հովուապետը չի սխալիր: Չսխալելու համար, հովիւը պէտք է Հովուապետը ունենայ իբրեւ հովիւ: Երանի՛ այն հովիւին որուն հովիւը՝ Հո-

վիւր ինքն է. այդպիսին միայն կրնայ իր խնամքին վստահուած ոչխարները երկինք առաջնորդել:

13) Աստուծոյ կամքով ու առաջնորդութեամբ էր որ մոզերը գտան Յիսուսը: Աստուծոյ լոյսով միայն կրնանք տեսնել Աստուծոյ Որդիին դէմքը: Հայրը մեզ իր Որդիին կը բերէ (Յճ 6.44), եւ Որդին՝ իր Հօրը (Յճ 14.6):

«Երբ տուն մտան, տեսան երեխան իր մօրը՝ Մարիամի հետ, եւ մինչեւ գետին խոնարհելով երկրպագեցին մանուկին» (Մտ 2.11):

1) «Երբ տուն մտան»: *Զարեհ Արք. Ազնաւորեան դիտել կու տայ, թէ «այս բառերը, ինչպէս նաեւ դէպքերու ընթացքը, ցոյց կու տան, թէ մոզերու այցելութիւնը Յիսուսի ծնունդի գիշերը չէր որ տեղի ունեցաւ, այլ ժամանակ մը ետք, երբ Յովսէփ ու Մարիամ յատուկ տուն մը փոխադրուած էին մանուկին հետ միասին»:*

2) *Աւետարանիչը կ'ըսէ, թէ մոզերը երբ «տուն մտան, տեսան երեխան իր մօրը՝ Մարիամի հետ»: Յովսէփը տեսնելու մասին բան մը չ'ըսուիր այստեղ: Ո՛ր էր Յովսէփը երբ մոզերը եկան եւ ինչո՞ւ չի յիշուիր: Մխիթար Վրդ. Սեբաստացին կ'ըսէ, թէ այս մասին երկու կարծիքներ կան. առաջին կարծիքը այն է, որ ան գացեր էր տան կարիքները հոգալու. իսկ երկրորդ կարծիքը որ աւելի հաւանական կը թուի այն է՝ որ Յովսէփը կը գտնուէր տան մէջ, բայց կը գտնուէր իբրեւ պահապանը կոյսին ու մանուկին, ուստի կարիքը չկար յիշելու թէ մոզերը Յովսէփը եւս տեսան:*

Յիշեալ երկու կարծիքներուն կողքին, յիշենք այլ շորս կէտեր.-

ա) *Երբ մոզերը տուն մտան, տեսան մանուկը իր մօրը գրկին մէջ, եւ բնականօրէն, երբ մանուկը տեսան՝ չէին կրնար շտեմնել զայն գրկող մայրը, եւ ասիկա պատճառ դարձաւ որ իրենց ուշադրութիւնը աւելի կեդրոնանար Յիսուս մանուկին ու Մարիամի վրայ, ինչպէս նաեւ պատճառ եղաւ որ Յովսէփը չիշուէր:*

բ) *Կարելի է մտածել նաեւ, որ Յովսէփին անունը չիշուեցաւ, որովհետեւ անիկա Յիսուսի մարմնաւոր հայրը չէր: Ենթադրենք պահ մը որ մոզերուն տուն մտած ժամանակ Յովսէփ ինք գրկած ըլլար մանուկ Յիսուսը, եւ կամ անոնք Յովսէփին ու Մարիամը քով-քովի նստած կամ պառկած տեսնէին, նման պարագայի ի՞նչ պիտի պատահէր. պիտի չգայթակղէին մոզերը որոնք լսած էին Մեսիայի կուսական ծնունդին մասին: Աստուածային նախախնամութիւնն էր որ կամեցաւ որ անոնք քով-քովի չըլլային մոզերուն այցին ժամանակ:*

գ) *Յովսէփին նկատի չառնուելը կրնայ ըլլալ նաեւ որ արդիւնքն էր իր բացարձակ խոնարհութեան: Կրնայ ի՛նք մէջտեղէն քաշուած ըլլալ, որպէսզի մոզերուն ամբողջ ուշադրութիւնը մանուկին եւ անոր մօրը վրայ կեդրոնանար, մանաւանդ որ ինք գիտէր թէ ծնած մանուկը Մեսիան էր, իսկ Մարիամ՝ անոր մայրը, Սուրբ Հոգիին հարսը, երկինքի Թագուհին:*

դ) Յովսէփին նկատի շառնուիլը կը պարզէ նաեւ, թէ Աստուծոյ ծրագիրին մաս չէր կազմեր որ Յիսուսի ծնունդէն ետք ան ամուսնանար Մարիամի հետ եւ ուրիշ զաւակներ բերէր:

3) «Երկրպագեցին մանուկին»: Մատթէոս մեզի չ'ըսեր թէ մոգերը խոնարհութիւն կամ երկրպագութիւն ըրին Հերովդէս թագաւորին: Այն ատեն թագաւորական օրէնքը կը պահանջէր որ ոեւէ անձ որ թագաւորին ներկայանար՝ խոնարհէր անոր առջեւ ու երկրպագէր անոր: Մոգերը միայն Յիսուսին երկրպագեցին: Իրենցմէ սորվինք Քրիստոսէ զատ չերկրպագել ոեւէ անձի:

4) Մխիթար Վրդ. Սեբաստացին կը հաստատէ, թէ մոգերուն մատուցած երկրպագութիւնը չէր նմաներ այն երկրպագութեան որ մարդիկ սովոր էին մատուցել իրարու բացարձակ յարգանքի եւ խոնարհութեան իբրեւ արտայայտութիւն: Այսպէս, օրինակ, կը կարդանք թէ Կոռնելիոս Պետրոսի «առջեւ խոնարհութիւն ընելով երկրպագութիւն ըրաւ» (Գրծ 10.25), Յակոբ իր եղբօր՝ Եսաւին, «գեւորին հաւասար եօթը անգամ խոնարհութիւն ըրաւ» (Մն 33.3): Այս ձեւի երկրպագութիւնը (մինչեւ գետին խոնարհելով գետինը համբուրելը կամ ճակատը գետնին դպցնելը) ոեւէ առնչութիւն չունի Աստուծոյ մատուցուած երկրպագութեան հետ: Մոգերուն Յիսուս մանուկին մատուցած երկրպագութիւնը սոսկ խոնարհութեան ու յարգանքի իմաստ չունէր: Մխիթար Վրդ. կ'ըսէ, թէ մոգերը «աստուածային երկրպագութեամբ երկրպագեցին» մանուկ Յիսուսին: Իսկ «աստուածային երկրպագութիւն» ըսելով կը հասկնանք՝ երկրպագութիւն մը որուն կ'ընկերանայ նաեւ պաշտամունքը: Զարեհ Արք. Ազնաւորեան կ'ըսէ. «"Երկրպագութիւն" կը նշանակէ երկու բան. ա) խոնարհիլ դէպի գետին՝ յարգանքի ու խոնարհութեան արտայայտութիւն իբրեւ, եւ բ) ծնրադրել ու պաշտամունք մատուցել. երկրորդ այս կերպը անցեալին կը գործածուէր Աստուծոյ համար միայն»: Մոգերուն մատուցած երկրպագութիւնը այս երկրորդ ձեւի երկրպագութիւնն էր:

ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ

(Շար. 3)

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

**ԿԱՆՏԻ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ
ՆՈՐԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ***

**ԿԱՆՏԻ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ
ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՈՒՍՄՈՒՆՔԸ**

Ա. ՄԱՐԴՈՒ ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ԻՆՔՆԻՐԵՆ ՀԱՆՂԷՊ

1. Մարդու կատարեալ պարտաւորութիւնները ինքնիրեն հանդէպ, որպէս կենդանի էակ¹,-

- Ինքնապահպանումը (գերմ.՝ Selbsterhaltung, անգլ.՝ Self-preservation) կամ անձնական կեանքի ու մարմնի մասերու պահպանումը, որով արգիլուած կը համարուի անձնասպանութիւնը² կամ մարմնի որեւէ մասի վնասումը (խեղումը)³:

- Մոլութիւններէ ձերբազատումը⁴, ինչպէս ձերբազատումը՝ հարբեցողութենէն, թմրամոլութենէն եւ որկրամոլութենէն, իրենց բազմաթիւ տեսակներով:

2. Մարդու կատարեալ պարտաւորութիւնները ինքնիրեն հանդէպ, որպէս բարոյական էակ⁵,-

- Իր անձի հանդէպ՝ ճշմարտացիութիւնը, որով արգիլուած կը համարուի

* Նիւթը, մեծ մասամբ քաղուած է յօդուածի վերածուած է հեղինակին նոր լոյս տեսած «ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ – փիլիսոփայական ակնարկ» գիրքէն (632 էջ), Անթիլիաս, Հոկտեմբեր 2021:

¹ Կանտի «պարտաւորութիւնները ինքնիրեն հանդէպ, որպէս կենդանի էակ» նիւթի շուրջ՝ Mds – Tugendlehre էջ A 70

² Կանտի «անձնասպանութիւնը» նիւթի շուրջ՝ Mds – Tugendlehre էջ A 71

³ Կանտի «մարմնի որեւէ մասի վնասումը» նիւթի շուրջ՝ Mds – Tugendlehre էջ A 75

⁴ Կանտի «Մոլութիւններէ ձերբազատումը» նիւթի շուրջ՝ Mds – Tugendlehre էջ A 80

⁵ Կանտի «պարտաւորութիւնները ինքնիրեն հանդէպ, որպէս բարոյական էակ» նիւթի շուրջ՝ Mds – Tugendlehre էջ A 83

որեւէ ինքնախաբէտութիւն կամ ստախօսութիւն⁶: Այլ խօսքով, պէտք է բոլորովին ձերբազատուիլ այդ մոլութիւններէն:

- Պէտք է ձերբազատուիլ նաեւ իր անձի հանդէպ՝ ժլատութենէն⁷ ... ոչ թէ ընչաքաղցութեան կամ շահասիրութեան իմաստով, այլ իր անձի զրկումը՝ ընդհանրապէս բարեկեցիկ կեանք մը ունենալու իմաստով:

- Իր արժանապատուութեան եւ բարոյական ինքնարժեւորման պահպանումը, որով արգիլուած կը համարուին որեւէ ստրկամտութիւն եւ ստորաքարշուութիւն⁸: Այսուհանդերձ ինքնարժեւորման մեր գնահատականը պէտք չէ չափազանցել, շիջնալու համար ամբարտաւանութեան եւ մեծամտութեան գիրկը:

3. Մարդու անկատար պարտաւորութիւնները ինքնիրեն հանդէպ, որպէս ինքնիր դատաւորը⁹.-

- Իր խիղճի¹⁰ ներգործութիւնը, որպէս ներքին հաշուետուութիւն՝ կատարած կամ կատարելիք վարմունքներուն համար: Խիղճը, որպէս բանական ու բարոյական անձի «ներքին դատաւորը» կամ «ներքին ձայնը», որ կը զանազանէ բարին ու չարը, ցիշդն ու սխալը ... եւ անկէ յառաջացած անձնական համոզման պահանջքը՝ բարոյական ճիշդ վարմունք ունենալու:

- Ինքնաճանաչումը¹¹ (կամ «Ծանի՛ր զքեզ» գաղափարը), բարոյական պարտաւորութիւններու նկատմամբ եւ ներքին արգելքներու եւ խանգարիչ հանգամանքներու վերացումը, հասնելու համար բարի կամեցողութեան:

4. Մարդու անկատար պարտաւորութիւնները ինքնիրեն հանդէպ, որպէս ինքզինք կատարելագործողը¹².-

- Իր անձի կատարելագործումը, այլ խօսքով իր ունեցած զանազան տաղանդներու զարգացումն ու ծաւալումը՝ կատարելագործութեան ձգտելով: Մարդու այս ինքնիրեն հանդէպ ունեցած պարտաւորութիւնը, նաեւ աշխարհի հանդէպ է: Կանտ երբեք չի սահմանափակեր՝ իր անձի կատարելագոր-

⁶ Կանտի «ստախօսութիւնը» նիւթի շուրջ՝ MdS – Tugendlehre էջ A 83

⁷ Կանտի «ժլատութիւնը» նիւթի շուրջ՝ MdS – Tugendlehre էջ A 88

⁸ Կանտի «ստորաքարշութիւնը» նիւթի շուրջ՝ MdS – Tugendlehre էջ A 93

⁹ Կանտի «պարտաւորութիւնները ինքնիրեն հանդէպ, որպէս ինքնիր դատաւորը» նիւթի շուրջ՝ MdS – Tugendlehre էջ A 98

¹⁰ Կանտի «խիղճը» նիւթի շուրջ՝ MdS – Tugendlehre էջ A 100

¹¹ Կանտի «ինքնաճանաչումը» նիւթի շուրջ՝ MdS – Tugendlehre էջ A 104:

«Ծանի՛ր զքեզ» (յուն.՝ γνώθι σαυτόν), քանդակուած էր Դելփիի Ապոլլոնի դիցարանի մուտքին:

¹² Կանտի «ինքզինք կատարելագործումը» նիւթի շուրջ՝ MdS – Tugendlehre էջ A 110

ծումի գործընթացը, որովհետեւ ամբողջական կատարելութեան արդէն կարելի չէ հասնիլ:

Բ.- ՄԱՐԴՈՒ ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՈՒՐԻՇՆԵՐՈՒ ՀԱՆԴԵՊ

1. **Մարդու պարտաւորութիւնները ուրիշներու հանդէպ, որպէս սոսկ բարոյական էակներ**¹³ .–

– Ուրիշներուն հանդէպ՝ **ճշմարտացիութիւնը** (գերմ.՝ Wahrhaftigkeit, անգլ.՝ Veracity), որով արգիլուած կը համարուի որեւէ **ստախօսութիւն** (գերմ.՝ Lüge, անգլ.՝ Lie): Արդարեւ, պարտաւորութիւն մը, որ մարդ ունի նաեւ գլխաւորաբար իր անձին հանդէպ, ինչպէս արդէն նշեցինք:

2. **Մարդու պարտաւորութիւնները ուրիշներու հանդէպ, որպէս սոսկ մարդիկ**.–

1) Ուրիշներու հանդէպ սէրը¹⁴ (գերմ.՝ Liebe, անգլ.՝ Love)

Այստեղ նկատի չառնուիլի անձնական զգացական սէրը ուրիշ անձի մը հանդէպ կամ ընտանեկան սէրը (յուն. storgê) կամ սուփական սէրը (յուն. éros), որոնք երբեք չեն կրնար պարտաւորութիւններ ըլլալ, այլ նկատի կ'առնուի միայն ընդհանուր **մարդասիրութիւնը** (գերմ.՝ Philanthropie, անգլ.՝ Philanthropy, կազմուած յունարէն երկու արմատներէն՝ philo = ընկերական սէր եւ anthropos = մարդ), որ համայն մարդկութեան հանդէպ տածած սէրն է: Այստեղ կարելի է գտնել.– ազնուութիւն, քաղաքավարութիւն, չափաւորութիւն, զրուցասիրութիւն, հիւրասիրութիւն եւ որոշ չափի ընկերական մերձեցում:

Մարդասիրութիւնը, իր կարգին, կը բացայայտուի հետեւեալ չորս ձեւերով՝

– այլոց՝ ընդհանրապէս **օգնելու** պատրաստակամութեամբ,

– այլոց հանդէպ՝ **բարեգործութեամբ** (գերմ.՝ Wohltätigkeit, անգլ.՝ Beneficience),

– այլոց կողմէ **օժանդակութեան համար՝ երախտապարտութեամբ** (գերմ.՝ Dankbarkeit, անգլ.՝ Gratitude) եւ

– այլոց հանդէպ՝ **համակրանքով** (գերմ.՝ Sympathie, անգլ.՝ Sympathy), մասնակից դառնալով անոնց ուրախութեան՝ խնդակցութեամբ եւ ցաւին՝ ցաւակցութեամբ:

Սիրոյ (կամ այս պարագային մարդասիրութեան) պակասի կամ չգոյու-

¹³ **Կանտի** «պարտաւորութիւնները ուրիշներու հանդէպ, որպէս սոսկ բարոյական էակներ» նիւթի շուրջ՝ MdS – Tugendlehre էջ A 83

¹⁴ **Կանտի** «ուրիշներու հանդէպ սէրը» նիւթի շուրջ՝ MdS – Tugendlehre էջ A 116

թեան պատճառով մարդոց մօտ կը յայտնուին անընդունելի մոլորութիւններ, ինչպէս՝

- Ատելութիւնը (գերմ.՝ Hass, անգլ.՝ Hate),
- Նախանձը (գերմ.՝ Neid, անգլ.՝ Envy),
- Ապերախտութիւնը (գերմ.՝ Undankbarkeit, անգլ.՝ Ingratitude) եւ
- Չարախնդութիւնը (գերմ.՝ Schadenfreude, անգլ.՝ Malicious Joy):

2) Ուրիշներու հանդէպ յարգանքը¹⁵ (գերմ.՝ Achtung, Respekt, անգլ.՝ Respect)

Այստեղ նկատի կ'առնուին ուրիշներու արժանապատուութեան ճանաչումն ու անոնց հանդէպ ուշադրութիւնը: Յարգանքը ընդհանրապէս փոխադարձ է:

Յարգանքի պակասի կամ չգոյութեան պատճառով մարդոց մօտ կը յայտնուին անընդունելի մոլորութիւններ, ինչպէս՝

- Գոռոզութիւնը¹⁶ կամ մեծամտութիւնը (գերմ.՝ Hochmut, Eitelkeit, անգլ.՝ Haughtiness, Pride),
- Չարախօսութիւնը¹⁷ կամ բամբասանքը (գերմ.՝ Nachrede, Klatsch, անգլ.՝ Slander, Gossip) եւ
- Հեգնանքը¹⁸ կամ արհամարհանքը (գերմ.՝ Verhöhnung, Spottsucht, անգլ.՝ Irony, Sarcasm):

3) Ուրիշներու հետ համերաշխութիւնը¹⁹ (գերմ.՝ Solidarität, անգլ.՝ Solidarity)

Այստեղ համերաշխութիւն կը նշանակէ՝ ընկերային հասարակութեան (կամ խմբակցութեան) մը մէջ անհատներու (կամ կողմերու) փոխադարձ օժանդակութեան երաշխաւորութիւնը: Այս հարցը կարեւորութիւն կը ստանայ մանաւանդ վտանգի կամ այլ դժուարութեանց պարագային, ուր կարելի է նաեւ նկատել՝ անհատներու միջեւ գտնուող զգացական կապ մը, որ կը սատարէ համերաշխութեան:

4) Ուրիշներու հետ ընկերութիւնը²⁰ (գերմ.՝ Freundschaft, անգլ.՝ Friendship)

Այստեղ ընկերութիւն կը նշանակէ՝ փոխադարձ համակրանքի, վստահու-

¹⁵ Կանտի «ուրիշներու հանդէպ յարգանքը» նիւթի շուրջ՝ MdS – Tugendlehre էջ A 139

¹⁶ Կանտ «գոռոզութեան» մասին՝ իր MdS – Tugendlehre էջ A 144

¹⁷ Կանտ «չարախօսութեան» մասին՝ իր MdS – Tugendlehre էջ A 145

¹⁸ Կանտ «հեգնանքի» մասին՝ իր MdS – Tugendlehre էջ A 147

¹⁹ Կանտի «ուրիշներու հետ համերաշխութիւնը» նիւթի շուրջ՝ MdS – Tugendlehre էջ A 150

²⁰ Կանտի «ուրիշներու հետ ընկերութիւնը» նիւթի շուրջ՝ MdS – Tugendlehre էջ A 152

թեան, մանաւանդ վերոյիշեալ փոխադարձ սիրոյ եւ յարգանքի վրայ հիմնուած ինքնակամ կապը կամ յարաբերութիւնը՝ երկու մերձաւոր անձերու միջեւ, նպատակ ունենալով աւելի լաւ ու երջանիկ կեանք մը:

Կանտի համար յստակ է, որ մարդը ընկերային կենդանի էակ (յուն․՝ zoon politikon) մըն է եւ պահանջքը ունի իր մասին արտայայտուելու: Ան այնպիսի անձ²¹ մը կը փնտռէ, որուն հանդէպ վստահութիւն ունենայ եւ կարենայ ազատօրէն արտայայտուիլ, զանազան մտածումներու շուրջ կամ անոր վստահիլ իր անձնական գաղտնիքները: Եթէ գտնէ այդ յարմար անձը, կ'ընկերանայ անոր հետ եւ իր անձնական մտածումներուն հաղորդակից կը դարձնէ զայն, պայմանով որ վստահելի այս յարաբերութիւնը փոխադարձ ըլլայ: Նմանօրինակ ճշմարիտ ընկերութիւն մը, սակայն, իր «բիւրեղութեամբ եւ ամբողջականութեամբ» անհասանելի կամ հազուադէպ կը թուի ըլլալ:

Կանտի համաձայն, ընկերութիւնը մարդու պարտաւորութիւնն է թէ՛ ինքնիրեն հանդէպ եւ թէ՛ ուրիշներուն հանդէպ: Այլ խօսքով, մարդ պէտք է ընկերա-հասարակական համակարգէն հեռանայ եւ բոլորովին մեկուսացած (առանց ընկերի) կամ ճգնաւորական կեանք ապրի:

Ճշմարիտ ընկերութիւնը, որ փոխադարձ վստահութեան, սիրոյ ու յարգանքի ամբողջութիւնն է՝ տրամադրութիւն կը բարձրացնէ, կը քաջալերէ, կը մխիթարէ, յենարան կը պարգեւէ եւ յոյս կը ներշնչէ:

Անպահօվութեան, վտանգի ու ընդհանրապէս կեանքի դժուարին իրավիճակներու մէջ, ճշմարիտ ընկերութիւնը՝ կայունութեան ապաստան մըն է:

ԴՈԿՏ. ՍԱՐԳԻՍ Ա. ՔԷՀԵԱԵԱՆ


Գերմանիա

(Շար. 7)

²¹ Կանտ «անձ» հասկացութիւնը կը բնութագրէ հետեւեալ ձևով.- նախ իմացաբանութեան ոլորտի մէջ, անձը կը նոյնանայ անհատի գիտակցական ինքնութեան (Identity) հետ. ապա բարոյագիտութեան ոլորտի մէջ, անձը, որպէս անհատ, օժտուած է ազատութեամբ, ինքնավարութեամբ եւ մարդկային իրաւունքներով:

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

**«Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ
ԿԻԼԻԿԻՈՅ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ 25-ԱՄԵԱՅ
ԳԱՀԱԿԱԼՈՒԹԻԻՆ (1995-2020)
ԱՐԺԵԻՈՐՈՒՄ ԵՒ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ»**



Առաջին ակնարկով, առանց դասական խորագրի, այս գեղատիպ հատորը (լույս տեսած՝ Անթիլիաս 2021 թուականին, 642 մեծադիր էջերու վրայ տարածուած ճոխ բովանդակութեամբ մը, ազնիւ մեկենասութեամբ Տէր եւ Տիկին Կարօ եւ Սօսի էջկիեանի [Լոս Անճելըս, Ա.Մ.Ն.]), շուտով կը բացայայտէ իր իւրայատուկ խորքն ու նպատակը, երբ Յոբելեար Հայրապետը Հայ Եկեղեցւոյ ժամանակակից այն մեծագոյն դէմքերէն է, որուն լուսազգեսց կերպարը, իբրեւ հայ հոգեւորական եւ հայ մարդ, կ'անդրանցի ժամանակին ու միջոցին սեղմ սահմանագծումները՝ ստեղծելով յանկուցիչ տիեզերք մը ամբողջ, ուր որքան ալ վաւերական ըլլան տրուած վկայութիւնները, նկարագրութիւնները՝ հարազատ, գնահատումները՝ արդար ու արժան, անզօր կը մնան բացատրելու այն ուղիսինահոս լոյսի ճառագայթումը, որ կը բաշխուի իբրեւ անանձնական ծառայութիւն, բարի խօսք ու գործ, իբրեւ Առաքելատիպ Հայրապետին՝ Առաքելական Ծառայութիւնը:

Մեծի Տանն Կիլիկիոյ Գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս իր ընտրութենէն անմիջապէս ետք արտասանած խօսքին մէջ, «Ամբողջական ու յանձնառու...» ծառայութիւնը յայտնած էր, «...Նոյն եւ մէկ եկեղեցոյ. նոյն եւ մէկ ազգին. նոյն եւ մէկ հայրենիքին...»: Խորիմաստ խօսքեր, որոնք լուսագոյնս կ'արտայայտեն տեսլահար հոգեւորականին քահանայական, ծառայական, Հայրապետական գահակալութեան եւ ընդհանրապէս ամբողջանուէր կեանքին գոյն ու նշանակութիւն տուող խոհերն ու մտածումները, ապրումները,

«Ամբողջական ու յանձնառու...» ծառայութիւնը յայտնած էր, «...Նոյն եւ մէկ եկեղեցոյ. նոյն եւ մէկ ազգին. նոյն եւ մէկ հայրենիքին...»: Խորիմաստ խօսքեր, որոնք լուսագոյնս կ'արտայայտեն տեսլահար հոգեւորականին քահանայական, ծառայական, Հայրապետական գահակալութեան եւ ընդհանրապէս ամբողջանուէր կեանքին գոյն ու նշանակութիւն տուող խոհերն ու մտածումները, ապրումները,

որոնումները, տազնապները, կեցուածքները՝ հոգեւոր, ազգային, եկեղեցական, մշակութային, քաղաքական, պահանջատիրական եւ այլաբնոյթ խաչմերուկներով:

Արամ Ա. Կաթողիկոս իր Հայրապետական գահակալութեան անցնող քսանհինգ տարիներու ընթացքին եղաւ միշտ իր ժողովուրդին հետ եւ իր ժողովուրդին համար, Հայ Եկեղեցւոյ միութեան եւ ազգային միասնականութեան հոգեպարար տեսլականով շրջեղեց հայ ժողովուրդին զաւակները, աներեր եւ անտեղիտալի պաշտպանը մնալով հայ մշակոյթին, մեր հոգեմտաւոր արժէքներուն, Հայ Դատին ու ազգային պահանջատիրութեան, իսկ որպէս միջազգային դէմք դարձած հայ Կիւմէնիստ, անվիճելիօրէն անզուգական երեւոյթ մը հանդիսացաւ հայ իրականութեան ու միջազգային շրջանակներէ ներս հաւասարապէս:

Եւ այնպէս ինչպէս մեծութիւններու մասին յօդուածի մը սահմանափակ տողերով խօսիլ կարելի չէ, նոյնպէս եւ այս ուղենշային գիրքին մասին, հետեւաբար պիտի ներկայացնենք զայն, առանց գրաքննադատական յաւակնութիւններու, կարգ մը մէջբերումներով ամրագրելով մեր խօսքը: Պարզապէս միայն անոր ամբողջական ընթերցումէն ետք մեզի համար յստակ դարձաւ, թէ իւրաքանչիւր տողին, նոյնիսկ բառ ու գիրին ետին անթեղուած՝ Վեհափառ Հայրապետին վեհաշուք եւ շքեղ կերպարն է, որ կը ձեւաւորուի անխարդախ, անկեղծ, անկաշկանդ, հոգեհորոգ վկայութիւններով ու հաստատումներով: Իսկ որոշ համեմատութեամբ մը, եթէ նոյնը ըսենք նաեւ գիրքին ենթախորագիրներուն համար, ապա մնացեալը ուղեցոյցային վերնագրումներ են, յրեւելեանական հատորին ընդհանուր երանգապանակը հարստացնող:

Մանրամասնութիւններու անցնելէ առաջ յիշարժան է, թէ հատորին իրենց արժէքաւոր յօդուածներով, գրութիւններով եւ վկայութիւններով մասնակցութիւն բերած են սփիւռքահայ, հայրենի եւ օտար պետական-կառավարական բարձրաստիճան դէմքեր, մտաւորականներ, գրողներ, հոգեւորականներ, ազգային, համայնքային, միջ-եկեղեցական, միջ-կրօնական պատասխանատուներ եւ գործիչներ:

Գիրքին սկիզբը տեղադրուած «Պաշտօնական»ի բաժնին մէջ տեղ գրուած են յաջորդաբար Լիբանանի Հանրապետութեան Նախագահին (Զօր. Միշէլ Աուն), Հ.Հ. Նախագահին (Արմէն Սարգսեան), Հ.Հ. Վարչապետին (Նիկոլ Փաշինեան), Արցախի Հանրապետութեան Նախագահին (Բակօ Սահակեան), Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ օտար բարձրագիրք անձնաւորութիւններու շորս գրութիւնները (անգլերէն եւ ֆրանսերէն):

Հատորին զանազան բաժիններուն մէջ արձանագրուած խօսքերուն շարքին, յատկանշական է Զօր. Միշէլ Աունի հետեւեալ հաստատումը (կու տանք թարգմանաբար).

«Քառորդ դար առաջ Արամ Ա. Կաթողիկոս ստանձնեց Հայ Ուղղափառներու Կաթողիկոսութեան պաշտօնը, եւ իր հոգեւոր դիրքին աւելցոյց իր մշակոյթին, ոգեղինութեան, հաւատքի նախանձախնդրութեան ու հայրենասիրութեան փայլը, ինքն որ եկած էր յոյսին ծոցէն եւ հայ ժողովուրդի պատմական տառապանքին ձուլարանէն: Վերոյիշեալ բոլորին կը գումարուին անոր հաւատքը քաղաքակրթութիւններու եւ կրօններու միջեւ համակեցութեան ու երկխօսութեան վերաբերեալ: Արամ Ա. Կաթողիկոս երկխօսութեան յատուկ համաժողովներու իր երկար մասնակցութեամբ փորձառութիւն ունի, ինչ որ զինք կը դարձնէ աշխարհին ուղղուած կիբանանի բացառիկ ուղերձին հաւատարիմ կրողը...»: (էջ 9)

Արմէն Սարգսեան իր կարգին կը հաստատէ.

«Ստանալով փայլուն աստուածաբանական եւ փիլիսոփայական կրթութիւն Մերձաւոր Արեւելքի, Եւրոպայի եւ ԱՄՆ-ի հեղինակաւոր դպրոցներում եւ համալսարաններում՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն ձեր երկարատեւ հաւատարիմ ծառայութեան եւ վաստակած հեղինակութեան շնորհիւ քառորդ դար առաջ Դոմ աւժանացաւ Մեծի Տանն Կիլիկիոյ աթոռին:

Աթոռ, որն առաջնորդել է մեր ժողովուրդի տարբեր հատուածներին նրա պատմութեան փառքի եւ դեգերումների ընթացքում, եւ որի վերակազմակերպման ու վերածաղկման աշխատանքներին դոմ լծուեցիք Կաթողիկոս դառնալուց անմիջապէս յետոյ...»: (էջ 11)

Յաջորդ՝ «Արժեւորումներ եւ Վկայութիւններ» բաժինով տրուած է Վեհափառ Հայրապետին համառօտ կենսագրութիւնը, նաեւ Վարուժան Արք. Հերկելեանի ստորագրած «Ժողովուրդին՝ Հետ, Ժողովուրդին՝ Համար» խորագրեալ յօդուածը, ուր ի միջի այլոց յօդուածագիրը դիպուկ կերպով կ'ընդգծէ.

«Վերջին 25 տարիներու ընթացքին, Անթիլիասը, այդ «փոքր պատուհանը», վերածուեցաւ ընդարձակ դարպասի մը, ուր կը մտնեն գիտնականներ եւ իրաւաբաններ, մտաւորականներ ու աստուածաբաններ, կրօնապետեր ու բարձրաստիճան հոգեւորականներ, քաղաքական գործիչներ ու պետական ներկայացուցիչներ, երիտասարդներ ու փոքրեր, հայ թէ օտար, որոնք Վեհափառ Հօր գլխաւորութեամբ ու գործօն մասնակցութեամբ, լայնածաւալ աշխատանքներ կը տանին ժողովուրդի կեանքի բարելաման, աստուածասիրութեան խթանման, մշակոյթի ծաղկման, հոգեմտաւոր արժէքներու կենսաւորման, մայրենի լեզուի ապահովութեան, Հայ Դատի եւ իրաւունքներու ձեռքբերման: Այդ դարպասէն ներս կը մտնեն մեր ժողովուրդի բոլոր զաւակները՝ քաջ գիտնալով որ Կաթողիկոսարանէն ներս Արամ Ա. Վեհափառ Հայրապետին առաջնորդութեամբ, հաւատքի առաքելութիւնը եւ ազգային ծառայութիւնն է որ կը ծաւալի ժողովուրդով ու ժողովուրդին համար» (էջ 45):

Ապա, տասնըրեք վերնագրուած տարբեր բաժիններով, «Հաւատքի Առաքելութեան Հայրապետը», «Ընկերային Ծառայութեան Առաքելը», «Ազգային Պահանջատիրութեան Անգիշող Հայրապետը», «Մշակութային Արժէքներ Վերա-

կենսատրոհը», «Հայակերտումի ու Ազգակերտումի Յանձնառու Ղեկավարը», «Հայաստան-Սփիտք Գործակցութեան Ռահվիրան», «Երիտասարդութեան Պաշտպանը», «Շինարար Կաթողիկոսը», «Միջ-եկեղեցական Շարժումին Առաջնորդը», «Միջ-կրօնական Երկխօսութեան Զատագովը», «Տագնապները Խոհեմութեամբ Դիմագրաւող Հայրապետը», «Սփիտքի Վերակազմակերպման Յառաջատեսիլ Հայրապետը», «Մտաւորական Հայրապետը», *ներկայացուած 43 յօդուածներուն ընդմէջէն պերճախօս կերպով կը պարզուին անցնող 25 տարիներուն Արամ Ա. Կաթողիկոսի բազմերես, բազմաճիւղ եւ բազմաբովանդակ լայնածաւալ գործունէութիւնները՝ Առաքելական Ծառայութիւնը:*

Արդ, «Հայաստան-Սփիտք Գործակցութեան Ռահվիրան» յոյժ կարեւոր բաժնին ներքեւ, Շահան Գանտաշարեանի ստորագրած եւ «Աննախընթաց Նախաձեռնութիւններ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Կողմէ» խորագրեալ յօդուածին մէջ կը կարդանք.

«Արցախեան 44-օրեայ պատերազմի ամենէն թէժ օրերուն, Վեհափառ Հայրապետին նախաձեռնութեամբ եւ հրաւերով Անթիլիասի վեհարանի դահլիճին մէջ կայացած հոգեւոր, կուսակցական եւ միութենական առումներով համասփիտքեան կառոյցներու ներկայացուցիչներու հանդիպումը խիստ յատկանշական իրադարձութիւն է բազմաթիւ ուղղութիւններով: Օրակարգը՝ պատերազմական ճգնաժամի համախումբ աշխատանքներ ծաւալելու հրամայականի ընկալումով պատաւորեցնողն էր: Եւ ճիշդ ժամանակին, տեղին առնուած այս քայլը փաստօրէն կը համախմբէր համասփիտքեան գործունէութիւն եւ կառոյց ունեցող մեր իրականութեան մէջ գործող ամենէն հիմնական կազմակերպութիւններու ներկայացուցիչները:

Հանդիպումը փաստօրէն ո՛չ միայն լսեց Վեհափառ Հայրապետին պատերազմական օրերուն տարած աշխատանքներուն մասին զեկոյցը, այլ նաեւ առիթ ունեցաւ անոր լոյսին տակ քննարկում կատարելու եւ առաջարկներ յղելու: Հանդիպումը փաստօրէն վերահասու դարձաւ Արցախի թէ Հայաստանի Հանրապետութեան առաջին դէմքերու հետ կայացած հաղորդակցութիւններուն, հրադարարի հաստատման աշխատանքներուն, Արցախի մէջ տիրող իրավիճակին եւ այդ բոլորէն մեկնելով ձեռնարկուող աշխատանքներուն» (էջ 287-288):

Կ'արժէ անդրադառնալ նաեւ, թէ «Մտաւորական Վեհափառը» խորագրեալ յօդուածին մէջ, Նորվան Արք. Զաքարեան յատուկ կերպով կը շեշտէ.

«Արամ Ա. Կաթողիկոսի մշակած գրականութեան մէջ առանձնայատուկ տեղ կը գրաւէ յորդորական գրականութիւնը, ճառի, քարոզի տեսակը կ'օգտագործէ, որովհետեւ իր գրականութիւնը կողմնորոշուած է դէպի դաստիարակութիւն ընդդէմ հայաթափութեան: Ներբողի, ճառի, քարոզի տեսակը, հին հայերէն ինչպէս Յովհաննէս Ոսկեբերան, Բարսեղ Կեսարացի եւ դեռ շատ ուրիշներ, կ'օգտագործէին այս եզրը, դաստիարակչական նպատակներով: Նոյնը կը կիրառէ Արամ Ա. Կաթողիկոս իր բացառիկ տաղանդով եւ լեզուաոճական կուռ յօրինուածով:

Հայակերտումը, ազգակերտումը, ինֆնակերտումը, հովուապետի իր դաստիարակչական մտահոգութեանց առանցքը կը կազմեն: Անոր յորդորական գրականությունը կը կրէ բանալի գաղափարներ, ինչպէս՝ ծառայութիւն, առաքելութիւն, յանձնառութիւն... Արամ Ա. Կաթողիկոս կը ստեղծագործէ առհասարակ ըստ սփիտֆեան պայմաններուն: Իր բոլոր հատերն ու ֆարոգները գրուած են հարուստ բառամբերով՝ եկեղեցական, հասարակական, գրական, մշակութային ու ֆաղափական, եւ հետեւաբար՝ մեծ դեր կը կատարեն հայ ժողովուրդի պատմութեան ինֆնագիտակցութեան զարգացման, ազգային-հայրենասիրական տրամադրութիւններու ձեւաւորման ու աշխուժացման մէջ» (էջ 493):

Աւելի վերջ կը տեսնենք Վեհափառ Հայրապետին մասին հայ թէ օտար տասնըմէկ անձնաւորութիւններու կողմէ տրուած բազմիմաստ վկայութիւնները: Այս գծով նախաճաշակ մը տալու համար կը մէջբերենք.

«Իր վեհանիստ Սուրբ Աթոռէն, Վեհափառը կը ջատագովէ ազգի ու հայրենիքի ազատութիւնը եւ աշխարհատարած հայ մարդու ինֆնութեան ու պատկանելիութեան առողջ պահպանումը կը դարձնէ իր մտասեւեռումներուն կիզակէտը: Հայկականութիւնը կը դաւանի ազգին աւիշը, հայոց պետականութեան էտարր կեցուցիչը: Սկզբունքայնութեան մարտիկն է Վեհափառը, որ իր խօսքին կու տայ բարոյականի վեհագոյն կշիռ եւ առով իսկ կը դառնայ ազգի՝ կրթարան՝ յանուն վաղուան սերմին հոգեմտաւոր կեանքի առողջ գոյաման՝ ի Հայաստան, յԱրցախ եւ ի սփիտս աշխարհի...» («Ուսուցչապետ Վեհափառը», Թորգոմ Եպս. Տօնդեան, էջ 531):

Միհրան Քիւրտօղլեան իր հերթին «Պատգամախօս Հայրապետը» վերնագրեալ վկայութեան մէջ արձանագրած է.

«...Իրաւատէրի Հայրապետական պատգամը հասաւ մինչեւ իսկ թրփական իշխանութիւններուն, երբ պաշտօնապէս Սիսի աւերակեալ Կաթողիկոսարանէն հնչեց պահանջատիրական ձայնը Վեհափառին եւ ապա Սիսի պատմական Կաթողիկոսարանի վերադարձը պահանջող դատական հայցը Կիլիկիոյ Հայոց Հայրապետին:

Դիպուկ էր բնորոշումը բարեկամի մը, որ ֆանի մը տարի առաջ նոր բառ մը կազմելով կը պնդէր, թէ Արամ Ա. «հայրենամարտիկ» Կաթողիկոս է, այլ խօսքով՝ հայրենիքի ու հայութեան համար մարտնչող» (էջ 536):

Յատկապէս նշանակից է Fr. Dr. K.M. George-ի ստորագրած եւ "A Visionary Ecumenical Leader" յօդուածը, կը մէջբերենք (Թարգմանաբար).

«Որպէս ատենապետ եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Կեդրոնական եւ Գործադիր Վարչութիւններուն, ան միշտ զգայուն էր տեղական եկեղեցիներուն նուրբ տրոփին հանդէպ, որոնք լայնօրէն տարածուած էին աշխարհի վրայ, բայց ան զանոնք Ե.Հ.Խ.ին մէջ համախմբեց իրենց ներկայացուցիչներուն միջոցաւ՝ ընկերակցութեան եւ ապագայի յոյսի ոգիով: Արամ Ա. կրնար նաեւ զգալ

այն անապահովութիւնը, որ կը շրջապատէր հին ականդութիւններով եւ ինքնութեամբ բնորոշուած եկեղեցիները այսպիսի համախմբումներու պարագային:

Արամ Ա. Կաթողիկոս կը կարդար յարափոփոխ ժամանակներու նուրբ տառերը...» (էջ 542):

Շարքը կարելի է երկարել:

Հատորին վերջաւորութեան տեղադրուած են շնորհաբաշխ Վեհին կատարած լայնածիր այցելութիւնները, հանդիպումները եւ տուած դասախօսութիւնները:

Անտարակոյս որ բացառիկ բժախնդրութեամբ եւ լրջագոյն յանձնառութեամբ խմբագրուած ու հրատարակութեան պատրաստուած այս հատորը ունի իր խմբագրական կազմը, որուն մաս կը կազմեն՝ Գերշ. Տ. Վարուժան Արք. Հերկելեան, Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան, Օրդ. Արտեմիս Հացագործեան, Տիար Վիգէն Աւագեան, Տիար Շահան Գանտահարեան:

Այսքանը բովանդակութեան մասին:

Ամփոփելով. առանց ականդական խորագրի, սակայն շուտով խորագոյն նշանակութիւն ու պատգամ դրսևորող եւ պատկառելի հատորի մը ենթագործած չափորոշիչները ամբողջացուցած, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի բազմակողմանի հարուստ կենսափորձին, ապագայատեսիլ աշխարհահայեացք-մտածողութեան, կենդանի խօսքին առինքնող արձագանգներով եւ ներգործող անհատականութեան հիանալի շիթերով յագեցած, Սփիւռքի, Հայաստանի թէ՛ Արցախի երբեմն անհակաշուքի, յաճախ ցաւոտ, անորոշութեամբ թաթաւուն, նոյնիսկ անըմբռնելի դէպքերուն եւ յարակից դժուարութիւններուն ամենէն տագնապալի ծալքերուն մէջ անգամ յոյսի նշոյլներ ցայտող եւ մեծ թիւով վաստակաշատ գրողներ համախմբող այս ծանրակշիռ երկը, իր տեսակին մէջ եւ տուեալ ժամանակահատուածին համար՝ բառին ամբողջական իմաստով խիստ կարեւոր փաստաթուղթ մը կը ներկայացնէ, եւ մեր կարծիքով միանշանակ կրնայ իբրեւ վաւերական մատեան ծառայել Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նշուած 25 տարիներու անխախտ ու անխոցելի հեղինակութեան, յաղթապանծ նուաճումներուն մասին, եւ տակաւին յոբելեանական այս հատորին բաղկացուցիչ հմայքը կը հանդիսանայ որակական լուրջ ուստումը դէպի համայնականը, նոյնիսկ դէպի համամարդկայինը, ուր իւրաքանչիւր ընթերցող ուր որ ալ ըլլայ, ժամանակի եւ միջոցի որ ոլորտին մէջ ալ գտնուի, այստեղ անպայման պիտի տեսնէ ի՛ր ինքնութիւնն ու դիմագիծը, պիտի գտնէ գիտակցական յղացքով կենսաւորուած ի՛ր ապրումները, ի՛ր երազանքները՝ յարանուաճ յաղթանակներու տեսիլքով գօտեպնդուած...:

ՀՈՒՐԻ ԱԶԷՉԵԱՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՑԱԲԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՅՏՆԷ ՊԵՆԵՏԻՔԹՈՍ ՊԱՊԻ ՄԱՅՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ

Նորին Սրբութիւն Ֆրանսիս Պապին յղած 3 Յունուար թուակիր ցաւակցագիրին մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը վախճանեալ Պենետիքթոս Ժ2. Պապը կը նկատէ որպէս կաթողիկէ եկեղեցւոյ մեծագոյն աստուածաբաններէն մէկը, որ միջ-եկեղեցական, միջ-կրօնական եւ ընդհանրապէս եկեղեցի-ընկերութիւն փոխ-յարաբերութեանց խնդիրներու գծով, իր յստակ տեսակետներով ու խոր վերլուծումներով առանցքային դեր ունեցած է կաթողիկէ եկեղեցւոյ աստուածաբանական մօտեցումներու ձեւաւորման ու զարգացման մէջ:

Նոյն օրը Կաթողիկոսանիստ Մայրավանքէն պատուիրակութիւն մը այցելութիւն տուաւ Լիբանանի մօտ պապական նուիրակին եւ յանուն հայ եկեղեցւոյ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ցաւակցութիւն յայտնեց Պենետիքթոս Պապին վախճանման առիթով: Յայտնենք, որ Վատիկանի մէջ տեղի ունենալիք Պապին յուղարկաւորութեան պիտի մասնակցին Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեքմեզեան եւ Հոգշ. Տ. Պսակ Վրդ. Թեփրճեան (ուսանող Հռոմի մէջ):



ԱՐԱՄ Ա. ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՌԱՖԱՅԷԼ ՊԵՏՐՈՍ ԻԱ. ՀՈԳԵԻՈՐ ՏԻՐՈՋ

Երկուշաբթի, 2 Յունուար 2023-ին, Ռաֆայել Պետրոս ԻԱ. Հոգեւոր Տէրը Կաթողիկոսանիստ Մայրավանք այցելելով՝ հանդիպում ունեցաւ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին հետ, ներկայութեամբ Գերպ. Տ. Գեորգ Եպս. Ասատուրեանի, Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեանի եւ Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեքմեզեանի:



Հանդիպումը առիթ հանդիսացավ Նոր Տարուան ու Աստուածայայտնութեան տօներուն առիթով բարեմադութիւններ փոխանակելու, ինչպէս նաեւ անդրադարձ կատարելու Արցախի պարզած ներկայ տագնապալից կացութեան, Լիբանանը դիմագրաւող ընկերատնտեսական դժուարութիւններուն եւ ընդհանրապէս Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները յուզող խնդիրներուն:

Երկու հոգեւոր պետերը շեշտեցին մեր ժողովուրդը դիմագրաւող ներկայ տագնապալից ժամանակներուն ազգային համախմբումի հրամայականը:



ՌԱՅԻ ՊԱՏՐԻԱՐԸՆ ԱՅՅԵԼԵՑ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Մարոնիթ եկեղեցւոյ հոգեւոր պետ Ռայի Պատրիարքը, Ուրբաթ, 27 Յունուար 2023-ի երեկոյեան, այցելութիւն մը տուաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Կաթողիկոսանիստ Մայրավանքին մէջ: Հան-

դիպումին, Հայրապետին կողքին ներկայ էին Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Շահե Արք. Փանոսեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Կեդրոնական Վարչութեան Քաղաքական Ժողովի համա-ատենապետներ Ստեփան Տէր Պետրոսեան ու Գրիգոր Մահսերեճեան եւ հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ երեսփոխան Յակոբ Բագրատունի:



Տեղի ունեցած քննարկումներուն հիմնական նիւթը Լիբանանի նախագահական ընտրութիւնն էր: Այս գծով կատարուեցաւ տեսակետներու փոխանակում: Ապա, Վեհափառ Հայրապետին եւ Ժողովականներուն առաջարկով որոշուեցաւ, որ յառաջիկայ շաբաթ, Պէրթէի մէջ, տեղի ունենայ քրիստոնեայ հոգեւոր պետերու հանդիպում, որմէ ետք՝ քրիստոնեայ երեսփոխաններու, որպէսզի կարելի ըլլայ հաւաքական մօտեցումներ ճշդել եւ նախագահական ընտրութեան առաջնորդող գործընթացքը դիւրացնել:



ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՒ ՌԱՅԻ ՊԱՏՐԻԱՐԸ ՊԵՏՐՔԵԻ ՄԵՋ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱՆ

Ուրբաթ, 10 Փետրուար 2023-ի երեկոյեան, մարոնիթ եկեղեցւոյ կեդրոնատեղի Պետրքեի մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը հանդիպում ունեցաւ Ռայի Պատրիարքին հետ: Հանդիպման ներկայ էին Հայկական Երեսփոխանական Պլոքի ներկայացուցիչ Յակոբ Բագրատունի եւ պատրիարքական փոխանորդ Փօլ Սայյահ արքեպիսկոպոսը:

Այցելութեան հիմնական նպատակն էր, 27 Յունուար 2023-ին Անթիլիասի Մայրավանքին մէջ կայացած երկու հոգեւոր պետերու հանդիպումէն թիսած, քրիստոնէայ հոգեւոր պետերու ժողովն ու քրիստոնէայ երեսփոխանները նախագահական ընտրութեան գծով խորհրդակցական նիստի հրաւիրելու նախաձեռնութեան արժեւորումն ու գործնականացման քայլերու քննարկումը:

Պատրիարք Ռայի Նորին Սրբութեան ներկայացուց քրիստոնէայ կողմերուն հետ կատարուած հաղորդակցութեան ընդհանուր պատկերը եւ քաղաքական ոյժերուն կեցուածքները:

Նորին Ս. Օծութիւնը, իր կարգին, կարեւորութեամբ շեշտեց ճիգերու շարունակութիւնը, ի հարկին տարբեր ձեւաչափերով, նկատի ունենալով հանրապետութեան նախագահի արագ ընտրութեան հրամայականը,



մեկնած Լիբանանի եւ լիբանանցի ժողովուրդին գերագոյն շահերէն՝ աւելցնելով, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը ամբողջութեամբ կը զօրակցի երկխօսութեան անհրաժեշտութեան:

Հանդիպման աւարտին, երեսփոխան Բագրատունի մամլոյ ասուլիսի ընթացքին յայտարարեց, որ Անթիլիասի Մայրավանքին մէջ ծնունդ առած քրիստոնէական երկխօսութեան հանդիպման գծով կատարուող այս խորհրդակցական հանդիպումը շարունակութիւնն է Նախագահական ընտրութիւն կատարելու անհրաժեշտութեան, իբրեւ ազգային լիբանանեան եւ քրիստոնէական պատասխանատուութիւն: Ան աւելցուց, որ հանդիպումին դուրս եկած է այն լաւատեսութեամբ, որ Ռայի Պատրիարք պիտի շարունակէ իր խորհրդակցութիւնները՝ երկիրը դուրս բերելու ներկայ տագնապալի վիճակէն, որուն անվերապահ աջակցութիւն կը ցուցաբերէ հայ համայնքն ու Արամ Ա. Վեհափառ Կաթողիկոսը:



ՀՈՎՈՒԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ
ԻՐ ԹԵՄԵՐՈՎ, ԿԱՌՈՅՑՆԵՐՈՎ, ՄԱՐՄԻՆՆԵՐՈՎ, ԻՐ ԲՈԼՈՐ
ԿԱՐԵԼԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ՍՈՒՐԻԱ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԵՏ Է»**

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Սուրբոյ մէջ տեղի ունեցած աղէտալի երկրաշարժին լոյսին տակ, Հինգ-շաբթի, 16 Փետրուար 2023, կէսօրէ առաջ ժամը 11:00-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետ հովուապետական զօրակցական այցելութեամբ շքախումբով հասաւ Հալէպ՝ գօտեպնդելու սուրիահայութիւնը եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան զօրակցութիւնը յայտնելու անոր:

Ս. Աստուածածին եկեղեցւոյ ղօղանջին ներքեւ, Վեհափառ Հայրապետը դիմաւորուեցաւ Բերիոյ հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Մակար Եպս. Աշգարեանի, Բերիոյ թեմի կաթողիկէ հայոց առաջնորդ Գերպ. Պետրոս Արք. Միրիաթեանի, Սուրբոյ Հայ աւետարանական համայնքի համայնքապետ Վեր. Դոկտ. Յարութիւն Սելիմեանի, Հալէպի գլխաւոր հիւպատոսութեան խորհրդական-հիւպատոս Բաբգէն Պատալեանի, Հայաստանի Հանրապետութեան մարդասիրական առաքելութեան խումբի պատասխանատուին, Սուրբոյ խորհրդարանի երեսփոխան Ժիրայր Ռէյիսեանի, Ազգ. Երեսփոխանական Ժողովի եւ Ազգ. Վարչութեան անդամներուն, հալէպահայ երեք կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն, հալէպահայ մշակութային, մարզական եւ բարեսիրական միութիւններուն՝ Համազգայինի, Հ.Մ.Ը.Մ.-ի, Ս.Օ.Խ.ի, Հ.Բ.Ը.Մ.-ի, Հ.Ե.Ը.-ի, Նոր Սերունդ, Կրթասիրաց, Ազգ. Մշակութային, Գերմանիկ Վասպուրական Մշակութային Միութեանց, կրթական հաստատութիւններու ներկայացուցիչներուն, եկեղեցիներու թաղական խորհուրդներուն, դպրաց դասերուն, Ս.Ե.Մ.-ի, Սուրբոյ պատանեկան միութեան անդամներուն, Հ.Մ.Ը.Մ.-ի տարազաւոր սկաւառներուն եւ հաւատացեալ ժողովուրդին կողմէ:

Նորին Ս. Օծութեան շքախումբին մաս կը կազմէին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգ. Կեդրոնական Վարչութեան համա-ատենապետ Ստեփան Տէր Պետրոսեան եւ Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ երեսփոխան Յակոբ Բագրատունի, «Կիլիկիա» մատենադարանի տնօրէն եւ Բերիոյ հայոց թեմի նախկին առաջնորդ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան, գաւազանակիր Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան, Հոգշ. Տ. Յովակիմ Վրդ. Բանճարճեան եւ Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեան:



Եկեղեցւոյ մուտքին տեղի ունեցաւ աղ ու հացի աւանդական օրհնութիւն՝ Համազգայինի «Սարդարապատ» պարախումբի պարմանուհիներուն տարագաւոր ներկայութեամբ, ապա Վեհափառ Հայրապետը թափօրով եւ դպրաց դասի «Հրաշափառ» շարականի երգեցողութեամբ մուտք գործեց Ս. Աստուածածին եկեղեցի, ուր հանդիսապետեց Սրբոց Վարդանանց զօրավարաց տօնին նուիրուած Ս. եւ Անմահ Պատարագին՝ հոծ թիւով հաւատացեալներու ներկայութեան: Պատարագը մատուցեց Արժ. Տ. Զարեհ Քհչյ. Շաքարեան:

Բերիոյ հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Մակար Եպս. Աշգարեան հոգեւորականաց դասուն, Ազգ. իշխանութեան, միութիւններուն եւ հալէպահայութեան անունով ողջունեց Վեհափառ Հայրապետը եւ փառք տուաւ Աստուծոյ, որ երկրաշարժէն փրկուած հալէպահայութիւնը արժանի դարձաւ Հայրապետին զօրակցական այցելութեան:

Նորին Սրբութիւնը ժողովուրդին ուղղեց իր հայրապետական պատգամը՝ ըսելով. «Եկած եմ Հալէպ ձեր ցաւը բաժնելու, ձեր մտահոգութիւնը իմանալու եւ երկրաշարժին յառաջացուցած վնասներուն աւելի մօտէն տեղեակ դառնալու»: Ան շարունակեց. «Հրաշք է մեր գոյութիւնը այսօր, փոքր ազգ եղանք, սակայն Աստուծոյ դառնալով, Աստուծոյ ներկայութեամբ մեր կեանքը հօգօրացնելով գոյատեւեցինք. այսօր մեր ժողովուրդը տագնապի մէջ է փաստօրէն ամէն տեղ, Հայաստանի մէջ, Ղարաբաղի մէջ, Լիբանանի մէջ, Սուրիոյ մէջ եւ ամէնուր: Տագնապին ձեւը, տարողութիւնը տարբեր է, սա-

կայն ըստ էութեան մեր ազգը տագնապներով շրջապատուած է, տագնապներով լեցուն է մեր կեանքը: Այս պայմաններուն մէջ մենք պէտք չէ յուսահատինք, այլ հաւատով հզօրացած պէտք է դառնանք Աստուծոյ՝ միշտ ըսելով. Դուն ես, Աստուած, մեր կեանքին հզօրութեան աղբիւրը»:



Նորին Սրբութիւնը հաստատեց. «Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը իր թեմերով, կառայցներով, մարմիններով, իր բոլոր կարելիութիւններով ձեզի հետ է, սիրելի՛ ժողովուրդ հայոց, Սուրիոյ տարածքին հաստատուած մեր ժողովուրդի գաւակներուն հետ: Կը ցաւիմ, որ մենք վնասներ, մահեր ունեցանք այստեղ, նաեւ նախկին Կիլիկեան աշխարհի մեր քաղաքներուն մէջ՝ Մալաթիա, Մարաշ, Իսկենտերուն... Այս բոլորը կը յիշենք այսօր, որպէսզի Աստուած իր երկնքի թագաւորութեան մէջ ընդունի հոգիները գոհերուն, շուտափոյթ ապաքինում պարգեւէ բոլոր հիւանդներուն, վիրաւորներուն: Տակաւին վիրաւոր են մեր ժողովուրդի գաւակները, գիտեմ. յառաջիկայ ժամերուն աւելի մօտէն ամբողջական կերպով պիտի իմանամ, թէ ի՛նչ են կարիքները, մտահոգութիւնները մեր ժողովուրդի գաւակներուն, եւ մեր կարելին, գերագոյնը պիտի կատարենք, որպէսզի ձեր ցաւերը բուժուին, ձեր մտահոգութիւնները վերանան, որպէսզի կարենանք միասնաբար ծառայել մեր ժողովուրդի գաւակներուն»:

Վարդանանց տօնը յիշատակելով՝ Վեհափառ Հայրապետը յայտնեց, որ հայ ժողովուրդը Ղեւոնդներ ու Վարդաններ տուաւ, որոնք վասն հաւատոյ ու վասն հայրենեաց գիտակցօրէն ու հաւատքով Աւարայր գացին եւ իրենց

արինը թափեցին: Հետեւաբար, մեր կեանքի տագնապներուն ու շարիքներուն դիմաց պէտք չէ ընկճուինք:

Եզրափակելով՝ Վեհափառ Հայրապետը ըսաւ. «Այս պահուն, այս սրբազան խորանէն կոչ կ'ուղղեմ մեր ժողովուրդի զաւակներուն ամէն տեղ. մեզի համար սրբազան պարտաւորութիւն է օգնել Սուրիոյ հայերուն եւ մասնաւորաբար Հալէպի հայերուն, տանք ինչ որ կրնանք եւ մասնակից դառնանք Սուրիոյ հայութեան վերականգնումին»:

Պատարագէն ետք, Վեհափառ Հայրապետը լրատուամիջոցներուն դիմաց կոչ ուղղեց միջազգային ընտանիքին՝ չեղեալ նկատելու Սուրիոյ վրայ սահմանուած պատժամիջոցները եւ փութալու աղէտահար ժողովուրդի օգնութեան:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԵՏ

Ս. Պատարագի աւարտին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցաւ ժողովրդային հանդիպում եւ աջահամբոյր:

Նորին Ս. Օծութիւնը այս առիթով շնորհաւորեց Գերշ. Տ. Մակար Եպս. Աշգարեանը՝ Բերիոյ հայոց թեմի առաջնորդ ընտրուելուն առիթով եւ գնահատեց ընտրութեան առաջին իսկ օրէն իր բերած ծառայութիւնը, յատկապէս աղէտալի երկրաշարժի օրերուն, երբ ժողովուրդի զաւակներուն կողքին կանգնելով գօտեպնդեց զանոնք: Վեհափառ Հայրապետը գնահատանքով անդրադարձաւ նաեւ Սուրիոյ պատերազմի տարիներուն Բերիոյ հայոց թեմի



նախկին առաջնորդ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեանի ծառայութեան: Ան գնահատեց Ազգ. երեսփոխանական ժողովը, Ազգ. վարչութիւնը, Կրօնական ժողովը եւ բոլոր կազմակերպութիւններուն եւ միութիւններուն ազգանուէր գործունէութիւնը՝ յայտնելով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան զօրակցութիւնը, եւ հրաւիրեց բոլորը յառաջիկայ օրերուն միասնաբար աշխատելու՝ հալէպահայութեան կեանքը վերականգնելու ի խնդիր:

Ժողովուրդի զաւակները միասնաբար երգեցին «Ի Վեհ Բարձանց»-ը, «Թէ հայրենեաց»-ը եւ «Կիլիկիա» մաղթերգը:

Ստորեւ կը ներկայացնենք Նորին Սրբութեան կողմ ուղղուած միջազգային ընտանիքին:

**«ԻՍ ԶԱՅՆՍ ՄԻԱՅՆՆԵԼՈՎ ՍՈՒՐԻՈՅ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԶՈԳԵՒՈՐ
ՊԵՏԵՐՈՒ ԶԱԲԱՔԱԿԱՆ ԶԱՅՆԻՆ, ԿՈՉ Կ՛ՈՒՂՂԵՍ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՀԱՍԱՅՆՔԻՆ՝ ՎԵՐՋ ՏԱԼՈՒ ՍՈՒՐԻՈՅ ԴԵՍ ՀԱՍԱՏՈՒԱԾ
ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ ԵՒ ԿԱՐԵԼԻ ՓՈՒԹՈՎ ՕԺԱՆԴԱԿԵԼՈՒ
ՍՈՒՐԻՈՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԱՆՅՐԱԺԵՇՏ ԿԱՐԻՔՆԵՐՈՒՄ»**

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

«Ինձի համար միշտ յատուկ ուրախութիւն եղած է ըլլալ Սուրիոյ մէջ. այն երկրին, որ Ցեղասպանութենէն ետք ընդունեց ջարդէն փրկուած մեր ժողովուրդի զաւակները ու իր հայրենիքը եւ հացն ու ջուրը բաժնեց իրենց հետ: Աշխարհացրի մեր ժողովուրդի զաւակները երբեք չեն մոռնար Սուրիոյ ժողովուրդին ցուցաբերած սէրը, վստահութիւնն ու զօրակցութիւնը հայ ժողովուրդին նկատմամբ:

Այսօր սակայն վշտաբեկ սրտով ու ցաւով կ'այցելեմ Սուրիա եւ ականջալուր ու ականատես կ'ըլլամ երկրաշարժին յառաջացուցած ահաւոր քանդումներուն ու մարդկային զոհերուն, ինչպէս նաեւ հարագատներ կորսնցուցած անհատներուն եւ անտուն մնացած բազմաթիւ ընտանիքներուն: Փաստօրէն, ահաւոր ողբերգութեան մը դիմաց կը գտնուի այսօր Սուրիան: Երկրաշարժին ծանր հետեւանքները կրնան աւելի ծաւալիլ, եթէ կարելի փութով ազդու միջոցներու չդիմուի:

Հետեւաբար, միջազգային համայնքը չի կրնար անտարբեր մնալ մարդկային այս ահաւոր ողբերգութեան նկատմամբ: Նման կացութեան դիմաց անհրաժեշտ է մէկդի դնել քաղաքական մօտեցումներ ու դիրքորոշումներ եւ որպէս մարդկային նոյն ընտանիքին պատկանող անձեր ու ազգեր, անհրաժեշտ է իրարու օգնել: Ինչպէս Աստուածաշունչը կ'ըսէ, երբ մարմնին մէկ անդամը ցաւի, ամբողջ մարմինը կը ցաւի (Ա.Կր 12:26): Այսօր, միջազգային

համայնքը եւ անոր պատկանող բոլոր ազգերն ու երկիրները կոչուած են օժանդակելու Սուրիոյ: Արդ, սա պահուն իմ ձայնս միացնելով Սուրիոյ եկեղեցիներու հոգեւոր պետերու հաւաքական ձայնին, կոչ կ'ուղղեմ միջազգային համայնքին՝ վերջ տալու Սուրիոյ դէմ հաստատուած պատժամիջոցներուն եւ կարելի փութով օժանդակելու Սուրիոյ ժողովուրդի անհրաժեշտ կարիքներուն, որպէսզի արդէն տնտեսական տագնապի մատնուած սուրիացի ժողովուրդը կարենայ դուրս գալ իր ներկայ ահաւոր տագնապէն»:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱԼՔՊԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԷՆ ՎՆԱՍՈՒԱԾ ՇՐՋԱՆՆԵՐ

Սուրիոյ մէջ տեղի ունեցած աղէտալի երկրաշարժէն ետք, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Հալէպ կատարած իր զօրակցական այցելութեան շրջագիծին մէջ, Հինգշաբթի, 16 Փետրուար 2023-ի միջօրէին, իր շքախումբով այցելեց նախ երկրաշարժին պատճառով նիւթական վնասներ կրած Կիլիկեան Ճեմարան եւ մօտէն ծանօթացաւ անոր կրած վնասներուն:

Վեհափառ Հայրապետը իր խօսքին մէջ ըսաւ. «Ճիշդ է, որ այս ցաւալի, մտահոգիչ պայմաններուն մէջ կը հանդիպինք, սակայն կ'ուզեմ հաստատել, որ հալէպահայութիւնը կանգուն է եւ վնաս է շարունակել վերականգնումի իր հաւաքական աշխատանքը: Անցնող տարիներուն դժուարութիւններ ունեցանք: Այսօր տագնապը տարբեր է, սակայն բոլոր տագնապներուն դիմաց պէտք է ունենանք հաւատք, յոյս եւ միասնական աշխատանք»:

Ան աւելցնելով ըսաւ. «Հայ դպրոցին մէջ հայ աշակերտը կը կազմաւորուի: Մարդակերտումը եւ հայակերտումը հայ դպրոցին դրօշը կը կազմեն: Այս դրօշին ներքեւ հսկայ աշխատանք կը կատարուի: Վստահ եմ, որ նոյն



նախանձախնդրութեամբ ու նոյն նուիրումով այս դպրոցին մէջ ալ նման աշխատանք կը տարուի»:

Նորին Սրբութիւնը գնահատեց Կիլիկեան Ճեմարանի տեսչութիւնը, ուսուցչական կազմը, խնամակալութիւնը եւ բոլոր ծնողները՝ մաղթելով, որ հակառակ տիրող դժուարութիւններուն, միասնաբար շարունակեն կրթութեան եւ դաստիարակութեան նուիրեալ աշխատանքը:

Այնուհետեւ, Հայրապետը այցելեց Հայաստանի Հանրապետութեան որոնողափրկարարական խումբին գործուղուած «Շաար» թաղամասը, ուր Հ.Մ.Ը.Մ.-ի շեփորախումբը սգերգ նուագեց: Վեհափառ Հայրապետը ծանօթացաւ տարուած փրկարարական աշխատանքին, որմէ ետք ան այցելեց Ազիզիէ թաղամասին մէջ փուլ եկած շէնքը, ուր հայ ընտանիքը կը բնակէր: Հայրապետը հոգեհանգստեան արարողութիւն կատարեց երկրաշարժին պատճառով զոհուած հայ ընտանիքի երկու անդամներու հոգիներու խաղաղութեան համար եւ շուտափոյթ ապաքինում մաղթեց վիրաւորներուն:

Հ.Մ.Ը.Մ.-ի շեփորախումբին սգերգով այցելութիւնները վերջ գտան:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՇՔԱԽՈՒՄԲՈՎ ՑԱՒԱԿՑԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՏՈՒԱԻ ՀԱԼԷՊԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ ԵՒ ԿՈՒՍԱԿՑԱՊԵՏԻՆ

Հինգշաբթի, 16 փետրուար 2023-ի յետմիջօրէին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը հոգեւորականներէ եւ ազգայիններէ բաղկացած շքախումբով ցաւակցական այցելութիւն տուաւ Հալէպի Նահանգապետ Հիւսէյն Տիապին, նահանգապետարանի իր գրասենեակին մէջ:





Զօրակցելով Սուրիոյ ժողովուրդին՝ Հայրապետը ցաւակցութիւն յայտնեց Հալէպի նահանգապետին՝ աղէտալի երկրաշարժին հետեւանքով զոհուած սուրիացիներուն համար եւ շուտափոյթ ապաքինում մաղթեց բոլոր վիրաւորներուն:

Նահանգապետը, իր կարգին, շնորհակալութիւն յայտնեց Վեհափառ Հայրապետին՝ վշտակցութեան եւ ցաւակցական այս այցելութեան համար:

Աւելի ուշ, Հայրապետն ու անոր ընկերակցող պատուիրակութիւնը ցաւակցական այցելութիւն տուին նաեւ Հալէպի կուսակցապետ Ահմետ Մանսուրին:

Վեհափառ Հայրապետը ցաւակցութիւն յայտնեց Հալէպի կուսակցապետին՝ աղէտալի երկրաշարժին հետեւանքով զոհուած սուրիացիներուն համար եւ շուտափոյթ ապաքինում մաղթեց բոլոր վիրաւորներուն:

Կուսակցապետը, իր կարգին, շնորհակալութիւն յայտնեց Հայրապետին՝ վշտակցութեան եւ ցաւակցական այս այցելութեան համար:

ՀԱՅ ԴԱՏ

**«ԿՈՉ Կ՝ՈՒՂՂԵՄ ԻՐԱՆԻՆ, ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ
ՄՏԱՀՈԳՈՒԹԵՆԷ ՄՂՈՒԱԾ, ՄԻՋԱՄՏԵԼՈՒ
ԲԵՐՉՈՐԻ ՄԻՋԱՆՑՔԻ ՎԵՐԱԲԱՑՄԱՆ»**

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Երկուշաբթի, 9 Յունուար 2023-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելութիւնը Լիբանանի մօտ Իրանի Իսլամական Հանրապետութեան դեսպան Մուճթապի Ամանիի, ընկերակցութեամբ անոր փոխանորդին:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան երկու այժմէական նիւթեր: Առաջինը՝ Լիբանանի հանրապետութեան նախագահի ընտրութիւնն էր: Վեհափառ Հայրապետը անհրաժեշտ նկատեց ներ-լիբանանեան համաձայնութեան գոյացումը: Նախագահի անձին շուրջ համաձայնութիւն գոյացնելէ առաջ, հրամայական է, որ քաղաքական օրակարգի եւ ուղղութեան մը շուրջ համաձայնութիւն ըլլայ, բնականաբար շրջանային ու միջազգային ոյժերու զօրակցութիւնը վայելող, որովհետեւ կարելի չէ անշատել Լիբանանէն ներս տեղի ունեցող զարգացումները շրջանի աշխարհաքաղաքական պայմաններէն, ըսաւ Նորին Ս. Օծութիւնը: Այս ծիրէն ներս, ան շեշտեց Իրանի Իսլամական Հանրապետութեան դերը: Դեսպանը իր կարգին յայտնեց, որ իր երկիրը միշտ եղած է Լիբանանի կողքին՝ զօրակից անոր ներքին միութեան: Ան միաժամանակ ընդգծեց Լիբանանի հայ համայնքին քաղաքական դերակատարութեան կարեւորութիւնը, որպէս երկրին կարեւոր համայնքներէն մէկը:

Երկրորդ հարցը, որուն Հայրապետը անդրադարձաւ, Բերձորի միջանցքի վերաբացման հարցն էր: Ան ըսաւ, որ երեք շաբաթէ ի վեր 125,000 հայորդիներ կը մնան արգելափակուած եւ զրկուած առօրեայ կեանքի ամէնէն կենսական տարրերէն: Չեմ ուզեր քաղաքական վերլուծումներու մէջ մտնել, այս հանգրուանին հարցը ըստ էութեան մարդասիրական է եւ հետեւաբար, Իրանի Իսլամական Հանրապետութեան միջամտութիւնը կը նկատեմ հրամայական: Երբ ուրիշներ կը լռեն ու կը դիտեն, Իրանի Իսլամական Հանրապետու-

Թեան մարդասիրական միջամտութիւնը վստահաբար մեծապէս պիտի նպաստէ տարածաշրջանէն ներս անոր դերին վերաշեշտման, ըսաւ Վեհափառ Հայրապետը: Դեսպանը, բնականաբար, կացութեան ծանօթ ըլլալով, որոշ յստակեցումներ կատարեց եւ խոստացաւ Վեհափառ Հայրապետին կողք փոխանցել իր երկրի իշխանութեան:



Յայտնենք, որ նոյն օրը Նորին Ս. Օծութիւնը ընդունեց Լիբանանի խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրին ներկայացնող պատուիրակութիւն մը: Հանդիպման ընթացքին Վեհափառ Հայրապետը դարձեալ անդրադարձաւ Բերձորի միջանցքին:



ԼԻԲԱՆԱՆԻ ՄՕՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ ՎԵՐԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՄՕՏ

Երեքշաբթի, 17 Յունուար 2023-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին այցելեց Լիբանանի մօտ Հայաստանի Հանրապետության դեսպան Վահագն Աթաբեկեան:

Դեսպանը Նորին Ս. Օծութեան պարզեց Հայաստանէն ու Արցախէն ներս տիրող կացութիւնը, ինչպէս նաեւ Բերձորի (Լաչին) միջանցքին վերաբացման ուղղութեամբ կատարուող աշխատանքները:



Հայրապետը իր կարգին, յայտնեց նոյն հարցին գծով իր հաստատած կապերը օտար շրջանակներու հետ եւ վերաշեշտեց մեր ժողովուրդի ժամանակակից պատմութեան այս ճակատագրական պահուն համախմբուելու եւ միասնական ճիգով Արցախի ինքնորոշման իրաւունքը պաշտպանելու հրամայականը:



ՉՕՐԱՇԱՐԺ Ի ԽՆԴԻՐ ԱՐՑԱԽԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ

Արցախի պաշտպանութիւնը համահայկական անյետաձգելի հրամայական է այսօր. վաղը կրնայ ո՛րևէ ըլլալ:

Արցախի հայութիւնը ինքնորոշման իր հաւաքական կամքը բազմիցս արտայայտած է:

Արցախի հայութեան ինքնորոշման իրաւունքի պաշտպանութիւնը ու անոր ընկերատնտեսական բարօրութեան օժանդակութիւնը իւրաքանչիւր հայու եւ համայն հայութեան նուիրական պարտքն է:

Չօրաշարժի պէտք է ենթարկել մեր ժողովուրդի զաւակները, ի խընդիր Արցախի փրկութեան:

Արդ, կոչ կ'ուղղենք Հայ Եկեղեցւոյ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմերուն, որ բոլոր համայնքներուն, կազմակերպութիւններուն ու կառոյցներուն գործօն մասնակցութեամբ, միացեալ ծրագրաւորումով ու հաւաքական աշխատանքով, իւրաքանչիւր թեմ իր տեղական պայմաններուն համապատասխան մօտեցումով, դիմէ հետեւեալ քայլերուն.-

- Մեր ժողովուրդի զաւակներուն մօտ արծարծ պահել Արցախի ինքնորոշման իրաւունքի պաշտպանութեան հրամայականը, որպէս համահայկական առաջնահերթութիւն:

- Արցախի ապաշրջափակման գծով ազդու միջոցներով լծուիլ քարոզչական աշխատանքի օտար շրջանակներէ ներս՝ պետութիւն, քաղաքական հասարակութիւն, կազմակերպութիւններ, մամուլ եւ այլն...:

- Նախաձեռնել Արցախի մեր զաւակներուն անմիջական կարիքներուն օժանդակութեան: Համակարգումի գծով շուտով տեղեակ պիտի պահենք մեր թեմերը:

Մենք մնայուն կապի մէջ ենք Արցախի իշխանութեան հետ եւ Արցախի ապաշրջափակման ուղղութեամբ մեր աշխատանքները կը շարունակենք: Ազգային Կեդրոնական Վարչութիւնը մօտէն կը հետեւի Արցախի շուրջ տեղի ունեցող զարգացումներուն: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը պիտի մասնակցի Արցախի բարեկամներու Ֆորումին:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

16 Յունուար 2023
Անթիլիաս

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ԱՐԱՅԻԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ՀԵՌԱԶԱՅՆԱՅԻՆ
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑԱԲ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՀԵՏ**

Երեքշաբթի, 6 Փետրուար 2023-ին, Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Յարութիւնեան հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին հետ եւ պարզեց Ազրպէյճանի կողմէ Բերձորի (Լաչին) միջանցքի փակման հետեւանքով Արցախի մէջ ստեղծուած մարդասիրական եւ ընկերատնտեսական ճգնաժամը եւ Արցախի իշխանութիւններուն կողմէ իրավիճակի յաղթահարման համար կատարուող աշխատանքները: Նախագահը նաեւ մեծ ցաւով ու ափսոսանքով անդրադարձաւ Սուրիոյ մէջ տեղի ունեցած երկրաշարժին եւ արցախահայութեան զօրակցութիւնը յայտնեց աղէտէն տուժած հայ ընտանիքներուն:

Վեհափառ Հայրապետը, իր կարգին, իր աջակցութիւնը յայտնեց Արցախի ժողովուրդին եւ ընդգծեց, որ ամէնօրեայ աղօթքներու կողքին, Կաթողիկոսարանը կը շարունակէ ջանքեր գործադրել արցախահայութեան սատար կանգնելու համար: Վերջապէս, Հայրապետը վստահեցուց, որ միայն անկոտորում կամքով եւ կուռ միասնութեամբ կարելի կ'ըլլայ յաղթահարել մարտահրաւէրները եւ կանխել աղէտը:



ՏՕՆԱԿԱՆ

Ս. ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ

Արդէն թեւակոխեցինք 2023 թուականը՝ մեր հոգիներուն ու միտքերուն մէջ ունենալով նոր սկիզբի, երազներու, նուաճումներու ու յանձնառութիւններու վառ յոյսը եւ մեր ետին թողեցինք մեր անձնական, ընտանեկան թէ՛ հաւաքական հինը եւ յուսախաբութեան ոգին: Այս սպասումներով ու հաւատքով 1 Յունուար 2023-ի առաւօտուն հաւատացեալներ ուղղուեցան Հայրապետանիստ Վանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճար, ուր նախագահութեամբ Ս. Աթոռոյս Գահակալ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Սրբազնագոյն Կաթողիկոսին, մատուցուեցաւ Նոր Տարուան անդրանիկ Սուրբ եւ Անմահ Պատարագը:

Ս. Պատարագի աւարտին, միաբան հայրեր, դպրեվանեցիներ եւ հաւատացեալներ թափօրով ուղղուեցան Վեհարանի դահլիճ, ուր տեղի ունեցած հաւաքին ընթացքին Հոգւ. Տ. Առաքել Աբղ. Գատէհճեան, յանուն Միաբանութեան, ընթերցեց ուղերձ մը: Առաջին հերթին հայր սուրբը փառք ու գոհութիւն յայտնեց առ Աստուած, որ 2022 տարուան ընթացքին Իր հովանին ու օրհնութիւնը մեզմէ անպակաս ըրաւ: Այսօր, Ան մեզի կը պարգեւէ նոր տարի մը, դարձեալ առիթ ընծայելով, որ մեր կեանքի ծառը տարիով մը աճի՝ Իր մեծ ողորմութեամբ եւ մարդասիրութեամբ: Հայր Առաքելը ապա անդրադարձաւ մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի ծննդեան հրաշափառ տօնին եւ մաղթեց, որ Խաղաղութեան Իշխանին ծնունդով խաղաղութիւն ծնի համայն աշխարհին, մեր Հայրենիքին, Արցախին եւ Սփիւռքին, ինչպէս նաեւ՝ մեզմէ իւրաքանչիւրին տուներէն ներս եւ սրտերուն մէջ:

«... Նեղութիւնները մեզի համբերութիւն կու տան, համբերութիւնը՝ տոկունութիւն, տոկունութիւնը՝ յոյս, իսկ յոյսը երբեք ամօթով չի ձգեր, որովհետեւ Աստուծոյ սէրը տեղ գտած է մեր սիրտերուն մէջ՝ մեզի տրուած Սուրբ Հոգիին միջոցաւ» (Հռ 5.3-5): Պօղոս առաքեալի հոռմայեցիներուն ուղղած նամակէն քաղուած այս բառերը Հայրապետը իր պատգամին առանցքը դարձուց: Ան ներկաներուն ուշադրութեան յանձնեց առաքեալին տառապալից ու հալածանքներով լեցուն՝ սակայն միեւնոյն ժամանակ Աստուածային ներկայու-



Թեամբ, հաւատքով ու յոյսով ապրած կեանքը: Հայրապետը թելադրեց, որ լսենք առաքեալին վերոյիշեալ վկայութիւնը, այս օրերուն մանաւանդ, երբ մեր կեանքը լեցուն է բազմազան դժուարութիւններով՝ Հայաստանի, Արցախի, Լիբանանի, Սուրիոյ եւ բոլոր գաղութներուն մէջ: Նորին Ս. Օծութիւնը յորդորեց, որ այս նեղութիւններով հանդերձ կառչինք յոյսին, մեր հաւատքով շաղախուած յոյսին, որովհետեւ «յոյսը երբեք ամօթով չի ձգեր»:

Այլ մէջբերումով մը, Վեհափառ Հայրապետը հաւատացեալներուն ուշադրութեան յանձնեց դարձեալ Պօղոս առաքեալի հոռմայեցիներուն ուղղած նամակէն հատուած մը՝ ընդգծելով, որ Աստուածաշունչէն եկող բոլոր յիշեցումներն ու պատգամները միշտ այժմէական են ու յաւերժական. անոնք միայն Աստուածաշունչին կամ որոշ շրջապատի ու ազգերու չեն պատկանիր. անոնք յաւիտենական են ու անժամանակական, ընդգծեց Հայրապետը՝ ընթերցելով առաքեալին խօսքերը. «... նորոգուած միտքերով նոր մարդ եղէ՛ք, որպէսզի ձեր փորձառութեամբ ընտրէ՛ք լաւը, գիտնալով Աստուծոյ կամբը, այսինքն՝ ինչ որ բարի է, ընդունելի է Իրեն եւ կատարեալ: ... Ձեր սերը թող անկեղծ ըլլայ: Ատեցէ՛ք ինչ որ չար է եւ բարիին կառչած մնացէ՛ք: Եղբօր պէս իրար սիրեցէ՛ք գորովանքով: Յարգելու մէջ իրար գերազանցեցէ՛ք: Եռանդագին աշխատեցէ՛ք առանց ծուլանալու: Ձերմեռանդ հոգիով Տիրոջ ծառայեցէ՛ք: Յոյսով ուրախացէ՛ք, նեղութեանց մէջ համբերող եղէ՛ք, յարատեւ աղօթեցէ՛ք: Կարիքի մէջ եղող եղբայրներուն օգնեցէ՛ք եւ միշտ հիւրասէր եղէ՛ք: Օրհնեցէ՛ք ձեզ հալածողները. մի՛ անիծէ՛ք, այլ օրհնեցէ՛ք: Ուրախացողներուն հետ ուրախացէ՛ք եւ լացողներուն հետ լացէ՛ք: Բոլորին հանդէպ նոյն վերաբերումը ունեցէ՛ք. մեծամիտ մի՛ ըլլա՛ք, խոնարհ մարդոց ալ ընկերութիւն ընելու գիշեցէ՛ք, եւ դուրս ձեզ իմաստուն մի՛ համարէ՛ք: ... Մի՛ պարտուիր չարէն, այլ՝ բարիով յաղթէ չարին» (Հռ 12.2, 9-16, 21):

Եզրակացնելով իր խօսքը՝ Արամ Ա. Կաթողիկոս հարց տուաւ, թէ այսօր արդեօք կա՞յ աւելի սրբազան, հզօր ու այժմէական պատգամ, քան Պօղոս առաքեալի յիշեալ պատգամը եւ ըսաւ. «Հետեւաբար, լսե՛նք անոր պատգամը եւ երբ մեր տուները երթանք՝ բանա՛նք Աստուածաշունչը եւ կարդա՛նք զայն եւ անոր պատգամը մեր կեանքին մէջ ապրեցնենք»: Աւարտին, ան աղօթք վերառաքեց առ Աստուած, որպէսզի բացուող նոր տարին մեր ժողովուրդի կեանքին մէջ լեցնէ երկնային շնորհներով ու պարգեւներով, որպէսզի մեր ազգին կեանքը ըլլայ Աստուածահաճոյ, մեր գործունէութիւնն ու ծառայութիւնը դառնան իրապէ՛ս Աստուծոյ ներկայութիւնը մեր կեանքէն ներս կենսաւորող: Թող Աստուած պահէ մեր ազգի զաւակները, որպէսզի անոնք հեռու մնան ամէն տեսակ երեւելի եւ աներեւոյթ շարերէն ու մեղքերէն: Շնորհաւոր Նոր տարի», մաղթելով աւարտեց իր խօսքը:

Աւարտին, բոլոր ներկաները միաբերան երգեցին «Կիլիկիա» եւ Հայրապետական մաղթերգները եւ շնորհաւորելով Հայրապետը՝ ստացան անոր Հայրապետական ու հայրական օրհնութիւնը:

Յայտնենք, որ 2022 տարուան աւարտին եւ 2023 տարուան սեմին, նախագահութեամբ Վեհափառ Կաթողիկոսին եւ մասնակցութեամբ միաբան հայրերուն, Մայրավանքի Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ գոհաբանական աղօթք, որպէսզի բացուող նոր տարին մեր ազգին, հայրենիքին ու եկեղեցիին համար ըլլայ օրհնաբեր եւ խաղաղաբեր տարի մը:

Ս. ԾՆՆԴԵԱՆ ՃՐԱԳԱԼՈՅՑԻ ՊԱՏԱՐԱԳ

Հինգշաբթի, 5 Յունուար 2023-ի երեկոյեան, նախագահութեամբ Սուրբ Աթոռոյս արժանընտիր Կաթողիկոս՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Կաթողիկոսանիստ Վանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ մատուցուեցաւ մեր Տիրոջ եւ Փրկիչին՝ Յիսուս Քրիստոսի ծննդեան Ճրագալոյցի Ս. եւ Անմահ Պատարագը:

Ս. Պատարագի աւարտին, Մայր Տաճարի լուսարարապետ Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեան, Ս. Խորանէն վար բերաւ Քրիստոսի լոյսը խորհրդանշող մոմը եւ յանձնեց Նորին Ս. Օծութեան: Հայրապետը, իր կարգին, լոյսը բաշխեց հաւատացեալներուն, որպէսզի Քրիստոսի Ծննդեան աւետիսը եւ Քրիստոս-Լոյսը տանին իրենց տուները՝ Անով օրհնուելու ու ստանալու իրենց հոգիին եւ մտքին պայծառութիւնը:

Ապա, Հայրապետական թափօրը «Խորհուրդ մեծ» շարականի երգեցողութեամբ ուղղուեցաւ Վեհարան, ուր տեղի ունեցաւ տնօրհնէքի արարողութիւն: Հայրապետը, օրհնելով կեանքի խորհրդանիշ ջուրը, հացն ու աղը, նաեւ օրհնեց ներկայ հաւատացեալ ժողովուրդը եւ աւետեց Քրիստոսի Ս. Ծնունդը:



Հուսկ, Վեհափառ Հայրապետը յատուկ խօսք արտասանեց եւ Արցախի հայուիթեան համար աղօթք բարձրացուց առ Աստուած: Նորին Ս. Օծուիինը կոչ ուղղեց, որ «Աստուածայայտնութեան եւ Ս. Ծննդեան տօնին առիթով բոլորս միասնաբար աղօթենք, որ Աստուած Իր երկնային բարիքներով լեցնէ Արցախի մեր ժողովուրդի սիրելի գաւակները, որոնք 22 օրերէ ի վեր տագնապի մէջ կ'ապրին: Թող Աստուած խաղաղութիւն ու արդարութիւն պարգեւէ արցախահայութեան: Մենք ալ, մեր կարգին, ժողովուրդ հայոց, աղօթե՛նք Արցախի մեր ժողովուրդին համար եւ միաժամանակ մեր ամբողջական գորակցութիւնը յայտնենք՝ նոյն եւ մէկ ազգի պատկանելիութեան խոր գիտակցութեամբ: Արցախի մեր հայրենակիցները թող իմանան, թէ ողջ Սփիւռքը, յասկապէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը՝ իր թեմերով, կառոյցներով, Միաբանութեամբ իր կողմին է, արդարութեա՛ն կողմին է: Թող Աստուած, մեր Տիրոջ՝ Քրիստոսի յայտնութեամբ ու ծնունդով բացուող նոր տարին, մեր ժողովուրդի կեանքին բերէ լոյս եւ յոյս. թող գորացնէ մեր ազգին հաւատքը եւ պարգեւէ արդարութիւն ու խաղաղութիւն՝ թէ՛ մեր ազգին եւ թէ ողջ մարդկութեան»:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ:

Ձեզի եւ մեզի մեծ աւետիս:

Օրհնեալ է յայտնութիւնը Քրիստոսի:

Ս. ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՐԱԳ

Ուրբաթ, 6 Յունուար 2023-ին, Մեր Տիրոջ Եւ Փրկչին Ս. Ծննդեան Եւ Աստուածայայտնութեան տօնը հանդիսաւորապէս նշուեցաւ Կաթողիկոսանիստ Վանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ: Առաւօտեան ժամը 10:00-ին, զանգերու ղօղանջներուն ներքոյ Հայրապետական թափօրը Վեհարանէն ուղղուեցաւ դէպի Մայր Տաճար, ուր Նորին Ս. Օծութիւնը մատուցեց Ս. Եւ Անմահ Պատարագը, կատարեց Մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի մկրտութիւնը խորհրդանշող ջրօրհնէքի արարողութիւնը եւ հաւատացեալներուն յղեց իր Հայրապետական պատգամը:



Ս. Խորանին վրայ, Վեհափառ Հայրապետին կողքին, առընթերակայ եպիսկոպոսներն էին Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեան ու Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան, իսկ Պատարագի երգեցողութիւնը կատարեց Կաթողիկոսարանի «Շնորհալի» երգչախումբը:

Ստուար թիւով հաւատացեալ ժողովուրդի շարքին ներկայ էին նաեւ Լիբանանի մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան կազմը՝ գլխաւորութեամբ դեսպանին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Կեդրոնական Վարչութեան համա-ատենապետներն ու անդամները, պետական եւ ազգային երեսփոխաններ, կազմակերպութիւններու ու կառույցներու վերին մարմիններու ներկայացուցիչներ:

Հայ եկեղեցւոյ աւանդութեան համաձայն, Աստուածայայտնութեան տօնին կը նշենք նաեւ Քրիստոսի Ս. Մկրտութիւնը: Առ այդ, Կոմիտաս Սրբա-

զանք Միւռոնաթափ Աղանին Ս. Երրորդութեան խորանէն «Լոյս ի լուսոյ» հոգեթով շարականին երգեցողութեամբ բերաւ Ս. Խորան, եւ ձեռամբ Նորին Ս. Օծութեան կատարուեցաւ Քրիստոսի մկրտութիւնը խորհրդանշող ջրօրհնէքի արարողութիւնը: Ապա, Վեհափառ Հայրապետը, ներկայ եւ թէ՛ առցանց Ս. Պատարագին մասնակցող մեր ժողովուրդի զաւակներուն փոխանցեց Ս. Ծննդեան Հայրապետական պատգամը (տե՛ս էջ 4-6):



**ՏԵԱՌՆԸՆԴՈՒԱԶԻ ՆԱԽԱՏՕՆԱԿ
ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ**

Նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Սրբազնագոյն Հայրապետին, Երկուշաբթի, 13 Փետրուար 2023-ին, Կաթողիկոսանիստ Վանքի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, մեծ շուքով նշուեցաւ Տեառնընդառաջի նախատօնակը, որուն ընթացքին տեղի ունեցաւ անդաստանի հոգեպարար արարողութիւնը, մեր Տիրոջ՝ Քրիստոսի կեանքի օրինակով մանուկներու տաճար ընծայումը եւ Քրիստոսի Լոյսը խորհրդանշող աւանդական խարոյկի հրավառութիւնը:

Տեառնընդառաջի նախատօնակի առիթով ներկայ թէ՛ առցանց հետեւող հաւատացեալներուն ուղղած իր պատգամին մէջ, Վեհափառ Հայրապետը



ընդգծեց հայ ազգի ողջ պատմութեան ընթացքին հաւաքական հաւատքին ու վճռակամութեան, յոյսին ու վառ տեսլականին ցուցաբերած յաղթանակը՝ ընդդէմ պատմութեան պարտադրած բոլոր տեսակի տազնապներուն: Այս գծով, ան վերյիշեցուց առաքեալին այն խօսքը, թէ երբ մարմնին մէկ անդամը ցաւի, ամբողջ մարմինը կը ցաւի (հմմտ Ա.Կր 12.26): Նորին Ս. Օծութինը դիտել տուաւ, թէ ոչ միայն Սուրիոյ եւ Թուրքիոյ երկրաշարժէն տուժած մեր հայորդիները կը տազնապին, այլեւ հայրենի ու Արցախի մեր ժողովուրդի զաւակները, բոլորս, ազգովին կը տազնապինք մեր ազգին ցաւով: Մենք իրաւունք չունինք անտարբեր մնալու նման կացութեան դիմաց՝ թէ՛ Կիլիկեան աշխարհին պատկանող մեր ժողովուրդի զաւակներուն եւ թէ՛ Հալէպի մեր գաղութի ցաւերուն, որովհետեւ բոլորս մէ՛կ ազգի կը պատկանինք: Ուստի, կոչ ուղղեց աղօթք բարձրացնելու մեր զոհերու հոգիներու փրկութեան եւ վիրաւորներու շուտափոյթ ապաքինման համար:

Անդրադառնալով Արցախի արգելափակման՝ Հայրապետը ըսաւ, որ աւելի քան 120 հազար հայորդիներ ձմրան ցուրտին կը շարունակեն տոկալ թշնամիին պատճառած դժուարութիւններուն ներքեւ՝ զրկուած ըլլալով կեանքի տարրական կարիքներէն ու մարդկային նուազագոյն իրաւունքներէն: Ան հաստատեց, որ մենք ոչ միայն կը ցաւինք Արցախին շուրջ ստեղծուած տազնապով, այլ մեր ժողովուրդը կոչուած է իր հաւաքական կեցուածքը արտայայտելու եւ պայքարելու արցախահայութեան ինքնորոշման իրաւունքի վերահաստատման:

Վերջապէս, Սրբազնագոյն Կաթողիկոսը անդրադարձաւ Տեառնընդառաջի պատգամին: Ան ընդգծեց, որ տարին անգամ մը նշուող արարողութիւն մը չէ այս, այլ ամէնօրեայ կենցաղակերպ է: Մանուկ Քրիստոսի օրինակով, մենք եւս հրաւիրուած ենք մեր զաւակները Աստուծոյ ընծայելու, որովհետեւ Աստուծմէ կու գանք ու Աստուծոյ կը պատկանինք. ուստի հաւատարիմ պէտք է մնանք Աստուածային պատգամին եւ Տեառնընդառաջի խորհուրդը ապրինք ամէն օր: Աւարտին, Հայրապետը աղօթք բարձրացուց առ Աստուած եւ խնդրեց Ամենակալէն, որ մեր կեանքը լեցնէ Իր երկնային շնորհներով, որպէսզի մենք, իբրեւ եկեղեցւոյ զաւակներ, մեր ուխտը, ներկայութիւնը եւ կտակը մեր կեանքին հետ շաղախենք՝ Աստուածային օրհնութեամբ:

Պատգամին յաջորդեց մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի ծնողքին օրինակով, ներկայ ծնողներուն կողմէ իրենց զաւակներուն Ս. Խորանին ընծայման արարողութիւնը: Ապա, աւանդութեան համաձայն, Հայրապետական թափօրը ուղղուեցաւ Մայրավանքի շրջափակ, ուր Վեհափառ Հայրապետը Ս. Սեղանէն բերուած ճրագով վառեց Տեառնընդառաջի աւանդական խարոյկը, որուն շուրջ Դպրեվանքի սաները ազգային երգեր երգեցին: Աւարտին, հաւատացեալներ Քրիստոսի Լոյսը իրենց հետ տուն տարին, իբրեւ Աստուածային օրհնութիւն:

ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՆՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՂՕԹՔԻ ՇԱԲԹՈՒՄԱՆ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ

1908 թուականէն ի վեր, ամէն տարի, Յունուար ամսուան երրորդ շաբաթը կը յատկացուի աղօթքի՝ եկեղեցիներու միութեան համար: Աշխարհի զանազան շրջաններուն մէջ եկեղեցիներ աղօթքներու, շարականներու, աւետարանական ընթերցումներու եւ քարոզախօսութիւններու ճամբով կը շեշտեն եկեղեցիներու միութեան անհրաժեշտութիւնը:

Արդարեւ, Կիրակի, 15 Յունուար 2023-ի երեկոյեան ժամը 6:00-ին, Լիբանանի մէջ եկեղեցիներու միութեան աղօթքի շաբթուան բացումը կատարուեցաւ Պսալիմի յոյն ուղղափառ Սուրբ Ճաուրճիոս եկեղեցոյ մէջ: Բացման արարողութեան ներկայ էին հոգեւոր պետեր, համայնքներու առաջնորդներ, հոգեւորականներ եւ հաւատացեալներ: Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի օրհնութեամբ, յիշեալ արարողութեան մասնակցեցան Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Շահէ Արք. Փանոսեան ու Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան:

Յայտնենք, որ 2019-ին, Լիբանանի մէջ եկեղեցիներու միութեան աղօթքի շաբթուան փակման արարողութիւնը տեղի ունեցած էր Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, ներկայութեամբ հոգեւոր պետերու եւ եկեղեցական առաջնորդներու: Այս առիթով, Վեհափառ Հայրապետը իր Հայրապետական պատգամը ուղղած էր:



ԻՍԼԱՄ ՍԻԻՆՆԻ ՈՒ ՇԻԻԹ ԿՐՕՆԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՄԱԽԱՄԲՈՒՄԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ՝ ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱԴԵՏԻՆ ՍՕՏ

Չորեքշաբթի, 18 Յունուար 2023-ին, Կաթողիկոսանիստ Վանք այցելեց իսլամ սիննի ու շիիթ կրօնականներու համախմբումը ներկայացնող պատուիրակութիւնը եւ հանդիպում ունեցաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին հետ:

Պատուիրակութիւնը իր գորակցութիւնը յայտնեց հայ ազգին նկատմամբ՝ շեշտելով Բերձորի (Լաչին) միջանցքը բանալու անհրաժեշտութիւնը՝ մարդասիրական մտահոգութենէ մեկնած: Ան նաեւ իր գնահատանքը փոխանցեց Վեհափառ Հայրապետին քրիստոնեայ-իսլամ գործակցութեան գծով կատարած աշխատանքներուն համար:



Նորին Ա. Օծուծիւնը անդրադառնալով Արցախի հարցին՝ կարեւորութեամբ չիշեցուց, թէ ան կրօնական հարց չէ, այլ ժողովուրդի մը ինքնորոշման իրաւունքի պահանջքն է, եւ հետեւաբար, թէ՛ քրիստոնէութիւնը եւ թէ՛ իսլամութիւնը արդարութեան ու իրաւունքին հետ եղած են միշտ: Հայրապետը նաեւ ընդգծեց քրիստոնեայ-իսլամ երկխօսութեան ծիրը աւելի ընդլայնելու ու այժմէական հարցեր քննարկելու կարեւորութիւնը:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ
Ն.Ս. ԹԱՌՒԱՏՐՈՍ ՊԱՏՐԻԱՐԷՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ**

Հինգշաբթի, 19 Յունուար 2023-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին այցելեց Հայր Անտրաոս Ալ Անթունի, ղպտի եկեղեցւոյ հոգեւոր պետ Ն.Ս. Թառատրոս Պատրիարքին ներկայացուցիչը, որ միաժամանակ Լիբանանի ու Սուրիոյ ղպտի համայնքներուն հոգեւոր պետն է: Ան Հայրապետին փոխանցեց Պատրիարքին եղբայրական ողջոյնները, ապա անդրադարձաւ ղպտի համայնքին առնչուած կարգ մը հարցերուն:



Նորին Ս. Օծութիւնը շեշտեց հայ եկեղեցւոյ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ու ղպտի եկեղեցւոյ հետզհետէ աճող գործակցութեան կարեւորութիւնը, յատկապէս աստուածաբանական ու միջ-եկեղեցական մարզերէն ներս:



**ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ ԾՈՑԻ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ**

23 եւ 24 Յունուար 2023-ին, Ռասա Ալ Խայմայի մէջ, Արաբական Միացեալ Էմիրութիւններ, տեղի ունեցաւ Ծոցի Երկիրներու Եկեղեցիներու Խորհուրդի տարեկան ժողովը, որուն յանուն Հայ եկեղեցւոյ իրենց մասնակցութիւնը բերին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբաններէն՝ Արաբական Միացեալ Էմիրութեանց, Քաթարի եւ Շրջակայից Հայոց Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Մեսրոպ Եպս. Սարգիսեանն ու Քուէյթի եւ Շրջակայից Հայոց Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ Գերպ. Տ. Պետրոս Ծ. Վրդ. Մանուէլեանը:



Երկօրեայ ժողովը կեդրոնացած էր Մոցի Երկիրներէն ներս գործող եկեղեցիներուն դիմագրաւած մարտահրաւէրներուն՝ անդրադառնալով յատկապէս համաճարակի ստեղծած դժուարութիւններուն:

Նշենք, որ սոյն խորհուրդի ստեղծման եւ անցնող տասը տարիներու ընթացքին բարգաւաճման մէջ իր ուրոյն տեղն ունի Հայ Եկեղեցւոյ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը:



ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐՏՈՒՂԱՐԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ

Կաթողիկոսանիստ Վանքին մէջ, 23 Յունուար 2023-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց այցելութիւնը Միջին Արեւելքի Եկեղեցիներու խորհուրդի (Մ.Ա.Ե.Խ.) ընդհանուր քարտուղար դոկտոր Միշէլ Ապսին, ընկերակցութեամբ ընդհանուր քարտուղարի օգնական Սեդա Խտրշեանի եւ խորհուրդի գործադիր վարչութեան անդամ դոկտ. Ժան Սալմանեանի:



Այցելութեան նպատակն էր Վեհափառ Հայրապետին հետ խորհրդակցիլ խորհուրդին առնչուած կարգ մը հարցերու շուրջ: Այս առիթով նորին Ս. Օծութիւնը թելադրեց, որ խորհուրդը աւելի ազդու ներկայութիւն դառնայ Միջին Արեւելքէն ներս՝ թէ՛ եկեղեցիներուն եւ թէ՛ իսլամ համայնքներուն հետ իր յարաբերութիւնները աւելի ծաւալելու եւ յատուկ կարեւորութիւն ընծայելու այն աշխատանքներուն, որոնք կը նպաստեն եկեղեցիներու կրթական ու ընկերային ծրագիրներուն:



**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ԳՈՐԾՕՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԼԻԲԱՆԱՆԻ
ՀՈԳԵՒՈՐ ՊԵՏԵՐՈՒ ՀԱՆԴԻՊՄԱՆ**

Չորեքշաբթի, 1 Փետրուար 2023-ի երեկոյեան, մարտնիթ եկեղեցւոյ հոգեւոր կեդրոն Պքէրքէի մէջ կայացաւ Լիբանանի քրիստոնեայ հոգեւոր պետերու հանդիպում մը: Նշենք, որ մարտնիթ եկեղեցւոյ պետ Ռայի Պատրիարքին կողմէ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին այցելութեան ընթացքին քննարկումներուն ընդմէջէն, ծնած էր քրիստոնեայ հոգեւոր պետերու հանդի-



պուժին մասին առաջարկ մը, որմէ ետք պիտի հանդիպէին նաեւ քրիստոնեայ երեսփոխանները, որպէսզի կարելի ըլլար հաւաքական մօտեցումներ ձեռնարկել եւ նախագահական ընտրութեան առաջնորդող գործընթացը դիւրացնել:

Վերոյիշեալ հոգեւոր պետերու հանդիպումէն ետք կատարուած յայտարարութիւնը պատրաստուած էր Վեհափառ Հայրապետին կողմէ, ուր կարեւորութեամբ շեշտուած էր Լիբանանի նախագահական ընտրութիւնը շուտափոյթ կատարելու անհրաժեշտութիւնը:

Նորին Ս. Օծութիւնը անձնապէս չկարողացաւ մասնակցիլ հոգեւոր պետերու այս ժողովին եւ յանուն մեր Ս. Աթոռին մասնակցեցան Լիբանանի Հայոց Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Շահէ Արք. Փանոսեանն ու Արաբական Միացեալ Էմիրութեանց, Քաթարի եւ Շրջակայից Հայոց Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Մեսրոպ Եպս. Սարգիսեանը:



ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՒԿ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՈՒՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԿՆՕՍՈՒԹԵԱՆ

Կաթողիկ եկեղեցւոյ եւ Արեւելեան ուղղափառ քոյր եկեղեցիներու միջեւ երկխօսութեան յանձնախումբը իր 19-րդ նիստը գումարեց 30 Յունուարէն 5 Փետրուար 2023, Գահիրէի (Եգիպտոս) մէջ: Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին օրհնութեամբ սոյն յանձնախումբին հայ եկեղեցւոյ Մեծի Տանն



Կիրիկիոյ Կաթողիկոսութիւնը ներկայացուց Բերիոյ Հայոց Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Մակար Եպս. Աշգարեանը:

Յանձնախումբին հիմնական քննարկումը կեդրոնացաւ մարեմաբանութեան վրայ՝ Ս. Կոյս Մարիամը եկեղեցւոյ դաստիարակութեան եւ կեանքի առաքելութեան ընդմէջէն:

Ժողովի վերջին նիստին որոշուեցաւ յառաջիկայ տարուան հանդիպման թուականը, ներկայացուելիք ուսումնասիրութիւններու նիւթերը, ինչպէս նաեւ ժողովի վայրը՝ Վատիկան:



**ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼԵԻ
ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՍԻՆՈՏՈՍԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ**

Երկուշաբթի, 13 Փետրուար 2023-ի առաւօտուն, Հարիսայի մէջ բացումը կատարուեցաւ կաթողիկէ եկեղեցւոյ մէջ սինոտոսականութիւնը զարգացնելու նուիրուած համագումար՝ «Սինոտոսական Եկեղեցւոյ Համար Գործակցութիւն, Մասնակցութիւն եւ Առաքելութիւն» խորագրով: Համագումարին ներկայ էին Միջին Արեւելքի կաթողիկէ պատրիարքներ, եպիսկոպոսներ եւ վատիկանէն ժամանած քարտինալներ:



Այս առիթով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին օրհնութեամբ, յիշեալ համագումարին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը ներկայացուցին Կաթողիկոսարանի Մայր Տաճարի լուսարարապետ Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեան եւ Միջին Արեւելքի միջ-եկեղեցական յարաբերութեանց վարիչ Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան: Յայտնենք, որ յիշեալ համագումարին մասնակցելու համար յատուկ հրաւեր յղուած էր Վեհափառ Հայրապետին:



**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ
ԻՍԼԱՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԻ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ**

Երկուշաբթի, 20 Փետրուար 2023-ին, Անթիլիասի Մայրավանք այցելեցին Իսլամական Տեղեկատուական Կեդրոնի գլխավոր քարտուղար Շէյխ Մոհամէտ Սալիմ Ալ-Լապապիտի, ընկերակցութեամբ կեդրոնի ներկայացուցիչին եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին յանձնեց յուշատախտակ մը՝ պաղեստինեան դատին նկատմամբ իր կատարած զօրակցութեան իբրեւ

շնորհակալութեան արտայայտութիւն: Հանդիպման ներկայ էր Կաթողիկոսարանի Միջին Արեւելքի միջ-եկեղեցական բաժանմունքի վարիչ Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան:



Նորին Ս. Օծութիւնը, գնահատելով իսլամական կեդրոնին ազնիւ արտայայտութիւնը, շեշտեց, որ «Պաղեստինեան դատը ո՛չ կրօնական եւ ո՛չ ալ քաղաքական դատ է, այլ արդարութեան եւ իրաւունքի դատ է: Իր հայրենիքէն ու պատմական հողերէն պարտադրաբար դուրս դրուած պաղեստինցի ժողովուրդը իրաւունք ունի համախմբուելու իր պատմական հողերուն վրայ՝ իր անկախ պետութիւնը վերահաստատելու, միջազգային օրէնքին համաձայն»: Վեհափառ Հայրապետը նաեւ յիշեցուց, թէ ո՛չ միայն ինք անձնապէս, այլ «ողջ հայութիւնը պաղեստինեան դատին հետ եղած է միշտ, որովհետեւ իր կեանքի դառն փորձառութեամբ հաւատացած է, թէ ազգեր ինքնորոշման իրաւունք ունին, եւ սահկա ո՛չ միայն մարդկային իրաւունքներու անբաժան մասը կը կազմէ, այլ Աստուածատուր իրաւունք է, միաստուածեան կրօններուն համաձայն»:



ԵՐԵՔ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԶՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐ ՍԱՍՆԱԿՑԵՅԱՆ ԶՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՓՈՒՆԱԴԱՐՁ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ ԵՒ ԾԱՆՕԹԱՑՄԱՆ ՎԱՏԻԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԻՆ

Ընդառաջելով Վատիկանի միջ-քրիստոնէական յարաբերութեանց բաժանմունքի հրաւերին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին օրհնութեամբ եւ տնօրինութեամբ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան երիտասարդ հոգեւորականներէն Հոգշ. Տ. Արտաւազդ Վրդ. Շարոյեան (տեսուչ «Կիլիկիա» թանգարանի), Հոգշ. Տ. Եղիա Աբղ. Մալխասեան (Թեսաղոնիկէի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ) եւ Արժ. Տ. Մովսէս Քհն. Շաննազեան (Կլէնտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ), Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու հոգեւորականներուն հետ միասին մասնակցեցան երիտասարդ հոգեւորականներու փոխադարձ այցելութեան եւ ծանօթացման ծրագիրին, 18-24 Փետրուար 2023-ին:



Մէկ շաբթուան կեցութեան ընթացքին, մասնակից հոգեւորականները առիթը ունեցան այցելելու Վատիկանի եկեղեցական եւ պետական տարբեր բաժանմունքները ու կեդրոնները, հանդիպելու պատասխանատու անձնաւորութիւններու հետ, լսելու կաթողիկէ եկեղեցւոյ ծրագիրները ու դիմագրաւող մարտահրաւերները եւ ծանօթանալու այդտեղ տարուող աշխատանքներուն:

Յիշեալ ծանօթացման ծրագիրը կ'ընդգրկէր նաեւ այցելութիւններ Վատիկանի գրադարան եւ թանգարան, զանազան համալսարաններ, պատմական վայրեր ու սրբատեղիներ: Հանդիպումներու ընթացքին տեղի ունեցաւ նշեալ հաստատութեանց պատմութեան ու գործունէութեան ներկայացում եւ փորձառութիւններու փոխանակում:

Հոգեւորականները առիթը ունեցան նաեւ հանդիպելու կաթողիկէ եկեղեցւոյ պետ Ֆրանչիսկոս Պապին եւ մասնակցելու Ս. Պետրոս մայր տաճարին մէջ մատուցուած կիրակնօրեայ Ս. եւ Անմահ Պատարագին:

ԴՊՐԵՎԱՆՔ

ՀՈԳԵՄՏԱԲՈՐ ԿԵԱՆՔԸ ԴՊՐԵՎԱՆՔԷՆ ՆԵՐՍ

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՐՑԸ ԵՒ ԱՐՑԱԽԸ ԱՅՍՕՐ»
ՆԻՒԹՈՎ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ**

Ուրբաթ, 27 Յունուար 2023-ի երեկոյեան, Դըպրեվանքի «Բրաբիոն Տումանեան» հանդիսասրահին մէջ Դպրեվանքի ձայնագրութեան ուսուցիչ եւ Ազգակ օրաթերթի միջազգային լուրերու բաժնի խըմբագիր Վահրամ Էմմիեան սաներուն ներկայացուց «Արցախի հարցը եւ Արցախը այսօր» նիւթը:



Բացման խօսքով հանդէս եկաւ ընծայարանի սաներէն Բարշ. Հրակ Սրկ. Գրտանեանը, որ ընդգծեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Սփիւռքի մշտատրոփ սիրտը հանդիսացող Դպրեվանքին եւ ողջ հայութեան՝ Արցախի գոյապայքարին, ինքնորոշման իրաւունքին, բարգաւաճման եւ հզօրացման պայքարին անբաժան լծակից ըլլալը: Ապա, խումբ մը դպրեվանեցիներ Արցախի նուիրուած գեղարուեստական յայտագիր մը ներկայացուցին, որմէ ետք բեմ հրաւիրուեցաւ բանախօսը:

Վահրամ Էմմիեան խօսեցաւ Արցախի նորօրեայ պատմութեան, իրադարձութիւններուն, ստեղծուած իրավիճակին եւ տարուած աշխատանքներուն մասին՝ դիտել տալով, որ Ազրպէյճանի պետութիւնը կու գայ անգամ մը եւս ճնշելու արցախահայութիւնը, այս անգամ փակելով Բերձորի միջանցքը, որպէսզի կոտրէ մեր գոյապայքարի կամքը: Էմմիեան ոգեւորեց դպրեվանեցիները շեշտելով, թէ միասնական պայքարով կը յաղթահարենք բոլոր դժուարութիւնները: Այնուհետեւ, Դպրեվանքի տեսուչ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան խօսք առաւ ու ըսաւ, որ աղօթական եւ հոգեւոր կոչումի կողքին, հոգեւորականները պատրաստ են Արցախի լուծը կրելու: Երբ Արցախի մեր եղբայրներն ու քոյրերը ամէն օր կը տագնապին յանուն Արցախի սուրբ հողին, մենք չենք կրնար լուռ մնալ, որովհետեւ իւրաքանչիւր հայ անհատի համար չկայ հայրենիք առանց Արցախի:

Աւարտին, տեսուչ հայր սուրբը Դպրեվանքի մեծ ընտանիքին անունով, յուշանուէրով մը պատուեց օրուան դասախօսը:

Յայտնենք, թէ հանդիսութեան ներկայ էր Պրագիլէն ժամանած լիբանանահայ դաշնակահարուհի՝ Տաթեւիկ Արթինեան, որ ինք եւս պատուուեցաւ յուշանուէրով մը:

Ս. ՍԱՐԳԻՍ ԶՕՐԱՎԱՐԻ ՏՕՆԻ ՆՇՈՒՄ

Ուրբաթ, 3 Փետրուար 2023-ին, Պիքֆայայի Ս. Աստուածածին մատրան մէջ, երեկոյեան ժամերգութենէն ետք, մատուցուեցաւ Ս. Էւ Անմահ Պատարազ՝ Ս. Սարգիս զօրավարի, իր որդիին՝ Մարտիրոսին եւ տասնըչորս զինւորներուն տօնին առիթով: Պատարազը մատուցեց Հոգշ. Տ. Առաքել Աբղ. Գատէհճեան:

Ս. Էւ Անմահ Պատարազէն ետք, ներկայացուեցաւ Ս. Սարգիս զօրավարին նուիրուած յայտագիր մը՝ կազմակերպութեամբ Դպրեվանքի Ուսանողական Խորհուրդին:

Բացման խօսքով հանդէս եկաւ Բարշ. Վարդան Կիս. Ասայեան, որ անդրադարձաւ սուրբերուն կարեւորութեան եւ անոնց բարեխօսութեան անհրաժեշտութեանը: Ապա, Ա. Ընծայարանի սաներէն Մինաս Ճանսրզեան ներկայացուց Ս. Սարգիսի վարքն ու կատարած հրաշագործութիւնները, որմէ ետք խումբ մը կիսասարկաւագներ երգեցին սուրբին տօնին նուիրուած «Ամենազօր Երրորդութեանն» շարականը:

Հոգշ. Տ. Առաքել Աբղ. Գատէհճեան ներկայացուց Ս. Սարգիսի առնչուած աւանդութիւններն ու սովորութիւնները, որոնք պահուած են ու կը կատարուին մինչեւ օրս:

Այնուհետեւ, Դպրեվանքի տեսուչ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան, գնահատելով Ուսանողական Խորհուրդն ու ներկայացման մասնակից դպրեվանեցիները, իր սրտի խօսքը դպրեվանեցիներուն ուղղելով ըսաւ. «Մեր առաքելութեան մաս կը կազմէ սուրբերուն կեանքն ու ապրելակերպը վառ պահել, որպէսզի անոնց օրինակով եւ քաջարի ոգիով, մենք ալ մեր առաքելութիւնը կատարենք»:

Երեկոն իր աւարտին հասաւ «Պահպանիչ» աղօթքով:

ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱՄՓՈՓՄԱՆ ՕՐ

Երկուշաբթի, 20 Փետրուար 2023-ին, Դպրեվանքի աւանդութեան համաձայն, Մեծ Պահոց առաջին օրը տեղի ունեցաւ «Հոգեւոր Մտամփոփման» հոգեպարար օր մը, որուն ընթացքին դպրեվանեցիներ մասնակից դարձան Հայ Առաքելական Եկեղեցւոյ եօթը ժամերգութիւններուն եւ ապրեցան խորհրդաւոր մթնոլորտ մը՝ աղօթասացութեամբ եւ օրհներգութեամբ լեցուն:



Ժամերգութիւններուն առընթեր, մէջընդմէջ ներկայացուցան հոգեւոր խորհրդածութիւններ: Առաջին խորհրդածութեամբ հանդէս եկաւ Ասորի Ուղղափառ Եկեղեցւոյ եպիսկոպոս Ռոժէ Յուսէֆ Ախրաս, որ խօսեցաւ պահեցողութեան ընթացքին հոգեւոր կարգապահութեան մասին: Երկրորդ խորհրդածութեան նիւթն էր «Հայ Առաքելական Եկեղեցւոյ եօթը ժամերգութիւնները եւ անոնց հոգեւոր խորհուրդը», որ ներկայացուց Դպրեվանքի տեսուչ Հոգ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան, իսկ երրորդը՝ «Մեծ պահքի կիրակիները եւ անոնց հոգեւոր ճանապարհորդութիւնը», ներկայացուց Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան:

Դպրեվանեցիներ օրուան ընթացքին իրենց աղօթքը բարձրացուցին առ բարձրեալն Աստուած, խնդրելով սէր, կամքի եւ հաւատքի տոկունութիւն, միութիւն, խաղաղութիւն ու առողջութիւն համայն աշխարհին:

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ

ՄԱՅՐԱՎԱՆՔԻ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ՍՏԱՑԱՆ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԵԱՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ

Հայ եկեղեցույ տօնացույցին համաձայն, 19 Փետրուար 2023-ին, կը զուգադիպի Մեծ Պահոց քառասնորեայ շրջանը կանխող Բուն Բարեկենդանը: Աւանդութեան համաձայն, Մայրավանքի կիրակնօրեայ վարժարանի աշակերտները, գլխաւորութեամբ վարժարանի տնօրէնուհին, կ'այցելեն Վեհափառ Հայրապետին՝ ստանալու անոր հայրական օրհնութիւնը:

Արդարեւ, Անթիլիասի Մայրավանքին մէջ մատուցուած Ս. Եւ Անմահ Պատարագէն անմիջապէս ետք, Վեհարանի դահլիճին մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց Մայրավանքի կիրակնօրեայ վարժարանի աշակերտները, գլխաւորութեամբ տնօրէնուհի Ժանին Դանիէլեանի: Խօսք առնելով Դանիէլեան նշեց, որ վարժարանի մեծ ընտանիքը այսօր դարձեալ եկած է ստանալու ձեր հայրական օրհնութիւնը, որպէսզի քառասնօրեայ հոգեւոր մեր



ուխտագնացութեան մէջ ինքնաքննութեամբ նորոգուինք եւ արժանի ըլլանք տօնախմբելու մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի յաղթական Յարութիւնը: Ան յիշեց Հայրապետին Հալէպ կատարած միօրեայ այցելութիւնը եւ յանուն վարժարանի մեծ ընտանիքին յայտնեց, թէ կիրականօրեայ վարժարանի աշակերտները որոշած են իրենց համեստ լուման ուղարկել Հալէպի մեր քոյրերուն ու եղբայրներուն, որպէսզի երկրաշարժին յառաջացուցած ցան ու մտահոգութիւնը մեղմացնեն եւ վերանորոգ յոյսով վերակազմակերպեն իրենց համայնքային կեանքը: Ապա, աշակերտները Նորին Ս. Օծութեան ներկայացուցին Աւետարանէն հատուածներ, շարականներ, սաղմոսներ, աղօթքներ եւ երաժրշտական պատառիկներ:

Վեհափառ Հայրապետը բարձրօրէն գնահատեց բոլոր նուիրեալ ուսուցիչներն ու պատասխանատուները, որոնք կամաւորաբար եւ անձնուիրաբար լծուած են եկեղեցաշէն ու ազգաշէն այս սրբազան առաքելութեան: Այս առիթով Հայրապետը նաեւ իր գնահատանքը յայտնեց աշակերտներու ծնողներուն, որոնք իրենց զաւակները կ'առաջնորդեն դէպի կիրականօրեայ վարժարան եւ կը գիտակցին, որ մեր ազգը առողջ երիտասարդութիւն ունենալու համար, հարկ է այսօրուան մանուկը դաստիարակել՝ քրիստոնէական ու հայեցի դաստիարակութիւն ջամբելով անոր:



ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

«ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԶԱՂԱԶԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ ԱՏԱՆԱՅԻ» ՀԱՏՈՐԻՆ ՇՆՈՐՀԱՅԱՆԴԵՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Հինգշաբթի, 12 Յունուար 2023-ին, Հայաստանի Հանրապետության մշակութային մեծագույն կեդրոններէն՝ Մաշտոցեան Մատենադարանին մէջ տեղի ունեցաւ Մայրավանքի տպարանէն լոյս տեսած «Ատենագրութիւն Քաղաքական Ժողովոյ Ատանայի» հատորին շնորհահանդէսը: Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Սրբազնագոյն Կաթողիկոսին օրհնութեամբ եւ տնօրինութեամբ, շնորհահանդէսին իր մասնակցութիւնը բերաւ «Կիլիկիա» Մատենադարանի, Զեռագիրներու եւ Հնատիպերու բաժանմունքներու տնօրէն Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեանը:



Այս հատորի խմբագիրն է Արմէն Մալխասեան, Մատենադարանի արխիւներու բաժնի գիտաշխատողներուն ջանասիրութեամբ: Յիշեալ հատորին յառաջաբանը գրած է Շահան Արքեպիսկոպոս: Սրբազան հօր հաւաստիացմամբ, հատորը ունի աղբիւրագիտական մեծ արժէք: Ան կը նկարագրէ 1905-1915 թուականներուն հայ ժողովուրդի ու յատկապէս Ատանայի թեմին ներքին կեանքը, դժուարութիւնները, տագնապները, Կիլիկիոյ մէջ մեր գոյութեան ու գործունէութեան ապացոյցները: Արխիւագիտական առումով այս հատորը կարելոր սկզբնաղբիւր է նաեւ հայ եկեղեցւոյ ժամանակակից պատմութեան ուսումնասիրման համար: Այդտեղ կը տեսնենք Ազգային Սահմանադրութեան կիրարկումին տարբեր արտայայտութիւններ: «Ատենագրութիւն»ը կը ներկայացնէ համայնքային ու ազգային կեանքը կազմակերպելու ձեւերը: Սրբազան հայրը ելոյթի ընթացքին, յանուն Վեհափառ Հայրապետին, իր գնահատանքն ու շնորհակալութիւնը յայտնեց բոլոր անոնց, որոնք կարելոր ներդրում ունեցան գիրքի հրատարակութեան մէջ: Սոյն հատորը Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատմական թեմերու արխիւային առաջին հատորն է, որ լոյս ընծայուեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Մեսրոպ Մաշտոցի Անուան Մատենադարանի Հին Զեռագրերու հիմնարկին գործակցութեամբ եւ «Փիւնիկ» Համահայկական Հիմնադրամի ազնիւ մեկենասութեամբ:

**ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՒԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻԻՆ ՄԻԶԵԻ**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հովանաւորութեամբ եւ քաջալերութեամբ, անցնող տարիներուն, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Հայաստանի Ազգային Արխիւին միջեւ համագործակցութեան յաջող փորձ կատարուած է: Այս գործակցութիւնը աւելի խորացնելու եւ արդիւնաւորելու հեռանկարով, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Կիլիկիա» Մատենադարանին մէջ, Երկուշաբթի 6 Փետրուար 2023-ին, տեղի ունեցաւ Հայաստանի Ազգային Արխիւի եւ հայ եկեղեցւոյ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Արխիւին միջեւ «Փոխըմբռնման եւ Գործակցութեան Յուշագիր» ստորագրումի եւ յանձնումի արարողութիւն:

Արդարեւ, Հայաստանի Ազգային Արխիւի ներկայացուցիչներ՝ Սերգէյ Սարուխանեան (Ա. տեղակալ) եւ Գոհար Աւագեան (տնօրէնի խորհրդական), եւ «Կիլիկիա» Մատենադարանի մատենադարանապետ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան եւ Կաթողիկոսութեան Արխիւատան տեսուչ Հոգշ. Տ. Վիգէն Վրդ. Տալգլըճեան կատարեցին Յուշագրի ստորագրումն ու փոխանցումը, որ գործակցութիւնը աւելի կազմակերպ եւ արդիւնաւէտ պիտի դարձնէ: Անոնք նաեւ ներկայացան Վեհափառ Հայրապետին՝ ստանալու օրհնութիւն եւ այս առիթով Հայրապետը իր գնահատանքին կողքին կարեւորեց ազգային հարստութիւն համարուող արխիւներու թուայնացման եւ օգտագործման խնդիրը:

Համագործակցութեան բարձր տրամադրութեամբ մեր հայրենակիցները վերադարձան Երեւան:



ՅՈՒՇ ԵՐԵԿՈՅ՝ ԺԻՐԱՅՐ ԴԱՆԻԷԼԵԱՆԻ

Երբ պահը հասնի եւ մահկանացուներուս՝ այս կեանքին հրաժեշտ տալու ժամանակը գայ, որքան ալ մեզի համար վաղ կամ անագան թուի այդ, հոս մնացողներս մեր հոգիներուն ու սրտերուն մէջ կը կրենք մեկնողին ֆիզիքական բացակայութեան եւ ոգեղէն ներկայութեան յառաջացուցած զգացումներուն դրոշմը: Իսկ երբ մահացողը մեր ազգային կեանքին մէջ իր կնիքը ձգած ըլլայ, այդ մեզ կը դնէ թէ՛ իր կորուստը սգալու եւ թէ՛ իր արժանաւոր ձեռքբերումները նշելու յանձնառութեան դիմաց:

Օգոստոս 2020 թուականին Պէյրութի նաւահանգիստի պայթումին պատճառով, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը կորսնցուց իր մեծ ընտանիքի անդամներէն, մտաւորական եւ մտերիմ բարեկամ՝ Ժիրայր Դանիէլեանը: Ան տեւական ներկայութիւն մնաց, ու կը մնայ ցայսօր, Կաթողիկոսարանի մտաւորական առաքելութեան մէջ իր ունեցած վաստակին շնորհիւ: Անոր կեանքին ու վաստակին նշումը կատարուեցաւ 27 Փետրուար 2023-ի երեկոյեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Կիլիկիա» թանգարանի սրահին մէջ, նախագահութեամբ Ս. Աթոռոյս Գահակալ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին:

«Յուշ Երեկոյ Ժիրայր Դանիէլեանի» վերնագիրով հանդիսութիւնը առիթ եղաւ նաեւ իրեն նուիրուած «Անկրկնելի Ժիրայր Դանիէլեանը» խորագրեալ հատորին շնորհահանդէսի կայացումին: Զեռնարկին խօսք առին փրոֆ. Երուանդ Տէր Խաչատուրեան, որ նաեւ հատորին խմբագիրն է, դոկտ. Երուանդ Քասունի եւ Կարօ Յովհաննէսեան:



Զեռնարկին բացման խօսքով հանդէս եկաւ Կաթողիկոսարանի դիւանապետ Խաչիկ Տէտէեան: Ան յայտնեց, որ Վեհափառ Հայրապետը աւելի կանուխ պիտի նշէր Ժ. Դանիէլեանի նուիրուած յուշ երեկոն, սակայն պայմաններու պարտադրանքով յետաձգուեցաւ: Տէտէեան ընթերցեց Դանիէլեանի մահուան առիթով իր առցանց հրապարակած սրտի խօսքը, ուր վեր առաւ Ժիրայր անկեղծ բարեկամը, գրչի ու մտքի ընկերակիցն ու գործակիցը, ազգային, կրթական ու հասարակական կեանքին մէջ մնայուն ներկայութիւն ունեցող մտաւորականը: Ան խօ-

սեցաւ Դանիէլեանի անկոտորում կամքին մասին՝ գէթ ազդուած Պէյրութի նաւահանգիստի պայթումէն, ու հաստատեց, որ Դանիէլեանին ձգած վատտակն ու արժանիքները, թեթեւ ու սրամտութեամբ լեցուն կատակներուն կողքին, պիտի շարունակուին յիշուիլ:

Ապա բեմ բարձրացաւ գրականագէտ փրոֆ. Երուանդ Տէր Խաչատուրեան: Ան առաջին հերթին պատիւ համարեց մեծատաղանդ, ժամանակակից, ընտիր բանասէր, մատենագէտ, պատմաբան ու խմբագիր Ժիրայր Դանիէլեանի մասին խօսիլը: Դիտել տալով բանասիրութեան բարդ ասպարէզ ըլլալը՝ ան վկայեց, որ Ժ. Դանիէլեան տիրապետած էր բանասիրութեան երեք հիմնական բաժիններուն՝ գրականութեան պատմութեան, տեսութեան եւ քննադատութեան, եւ հմուտ էր անոր ամէնէն դժուար բաժինն՝ մատենագիտութեան: Դանիէլեան իր գործին բացառիկ գիտակ մըն էր եւ անոր իւրաքանչիւր գործը արժանի է գիտական աստիճանի: Փրոֆ. Տէր Խաչատուրեան հաստատեց, որ Դանիէլեանին գրութիւնները խիտ են եւ բովանդակալից, իսկ ուսումնասիրութիւնները լոկ որոնումներ չեն, այլ՝ յայտնաբերութիւններ: Աւելին, Դանիէլեան ըմբռնած էր բանասիրութեան իւրայատուկ լեզուն եւ հասկացութիւնները եւ գիտական, բանասիրական շարադրանքի լեզուով կ'արտադրէր իր գործը՝ բան մը, որ եզակի էր Սփիւռքի մէջ: Փրոֆ.ը ցաւ յայտնեց Դանիէլեանի տեղը թափուր մնալուն համար, սակայն համոզում արտայայտեց, որ անոր մասին ուսումնասիրութիւններ պիտի կատարուին, որովհետեւ ան այն հեղինակն է, որ գիտական հարուստ ժառանգութիւն ձգեց: Այս գծով, բանախօսը յատկապէս նշեց կարեւորութիւնը «Մատենագիտութիւն Ընդդէմ Ցանկազրոյթեան» մատենագիտական ճշդումներու այն վիթխարի աշխատանքին, որ եթէ Ժիրայր Դանիէլեան չաշխատասիրէր, ոչ ոք պիտի կարենար կատարել այդ գործը:



Այնուամենայնիւ, 4 Օգոստոսի պայթումը շատ բան փոխեց Ժիրայրի կեանքին մէջ: Ան կորսնցուցած էր իր տեսողութիւնը եւ փոխադրուած՝ Պոսթրն: Հեռաձայնին մէջէն արձագանգող ձայնին դողդողումը արդէն կը մատնէր անոր հոգեվիճակը, որ վայրէջքի մէջ էր, պատմեց փրոֆ. Տէր Խաչատուրեան: Անոր 80-րդ տարեդարձին առիթով փրոֆ. Ե. Տէր Խաչատուրեան յոգուած մը հրապարակած էր, որմէ բխեցաւ վատտակաշատ Դանիէլեանի գործը արտացոլացող հատորի մը հրապարակումին գաղափարը: Բանախօսը յայտնեց, որ Ժ. Դանիէլեան ընդդիմացած էր այդ գործի ձեռնարկումին՝ տարբեր պատճառաբանութիւններ տալով, բայց աւելի ուշ՝ համոզուած:

Ներկայացնելով «Անկրկնելի Ժիրայր Դանիելեանը» հատորը, փրոֆ. Տէր Խաչատուրեան թուեց Ժիրայր Դանիելեանի ի պատիւ կատարուած պարգեւատրութիւնները՝ 70-ամեակի նշում, Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի կողմէն պատուոյ դոկտորականի տրւելութիւն, Թէքէեան կեդրոնին, Լրագրողներու Միութեան, Ազգային Գրադարանին մէջ թէ այլուր կատարուած պարգեւատրութիւններ, որոնց մասին դժբախտաբար ոչ մէկ թղթակցութիւն պահուած է՝ ի բացառեալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին կողմէ 2005 թուականին Մեսրոպ Մաշտոց շքանշանի տրւելութեան, որուն Սրբատառ Կոնդակով, բացման խօսքով ու բանախօսութեամբ կը սկսի հատորը՝ «Խ Մեծարումը» վերնագիրով: Ասոր կը յաջորդէ «Խ Գործը»ն, որ կը բաղկանայ իր գործը ներկայացնող 14 յօդուածներէ: Գիրքին երրորդ բաժինը կը կրէ «Խ Խօսքը» վերնագիրը ու կ'ընդգրկէ Յակոբ Վարդիվառեանին ու Պարոյր Աղպաշեանին հետ ունեցած իր ընդարձակ հարցազրոյցները. իսկ վերջինը՝ «Խ Անձը», որ կը ներկայացնէ իր մասին գրուած եօթը յօդուածներ:

Փրոֆ. Երուանդ Տէր Խաչատուրեան խօսքը աւարտեց անդրադառնալով ասուպի երեւոյթին: Ան ըսաւ, որ թէեւ ասուպ տեսնելով մենք կը մտածենք, որ աստղ մը վար ինկաւ, սակայն խորքին մէջ աստղը կը մնայ ու իր ետեւէն լուսաւոր հետք կը ձգէ: Նոյնն է պարագան Ժիրայր Դանիելեանին. ան լուսաւոր մարդ էր, բացառիկ անհատականութեամբ, եւ անոր թողած հետքը իր գործերն են, իսկ յիշատակը լուսաւոր է, ըսաւ ան:

Օրուան երկրորդ բանախօսն էր դոկտ. Երուանդ Քասունին, որ խօսեցաւ Ժիրայր Դանիելեանին հետ 60 տարուան բարեկամութեան մասին: Ան նշեց, որ Դանիելեան երիտասարդ տարիքէն ընկերային հասարակական կեցուածք ունեցող մարդ էր՝ անզիջող, բայց ոչ յամառ: Ան մեծ ներդրում ունեցած էր Հայկազեան համալսարանի հայագիտական գրադարանին կազմաւորման, մանաւանդ գրքահաւաքի աշխատանքին մէջ: Քասունի պատմեց, որ Ժիրայրն ու ինք յաճախ սեփական գիրքերէ ձեռքագատուիլ ուզողներու մօտ կամ Լիբանանի պատերազմի օրերուն փողոցը տարբեր պատճառներով ծախու գրուած հայերէն գիրքեր «ազատագրելու» կ'երթային. Ժիրայրը իր անոյշ լեզուով եւ զրուցելու բացառիկ տաղանդով կ'ընկերանար գիրքերու տէրերուն հետ, որ նաեւ առիթ կ'ըլլար աւելի յարմար գիներով վերցնելու գիրքերը: Նշելով գիրքերու ու գրականութեան հանդէպ յատուկ սէր տածող Դանիելեանին այլ «մոլութիւն»ը, դոկտ. Քասունի ըսաւ, որ ան թունդ ֆուտպոլլասէր էր, այնքան



մը որ այն ժամերուն, որ իր սիրած Արարատ խումբը խաղար, Խորհրդային Հայաստանի մասին ակնարկելով, ան կը քաշուէր իր տան մէջ այն մէկ անկիւնը, ուր Երեւանի ակիբը կը հասնէր, ու առանց ընդհատումի կը հետեւէր խաղին: Դանիէլեան մինչեւ իսկ Հայկազեան համալսարանին մէջ կազմակերպած էր գրոյց մը Երեւան Ռատիոյի ֆուտպոլի մեկնաբան Սուրէն Պաղտասարեանի հետ:

Դոկտ. Քասունի խօսեցաւ Հայկազեան Հայագիտական Հանդէսի Դ. հատորին մէջ Դանիէլեանին կատարած լիբանանահայ մամուլին մասին 50 էջնոց ընդարձակ ուսումնասիրութեան մասին՝ նշելով, որ այդ մէկը Ժ. Դանիէլեանին առաջին լուրջ ուսումնասիրութեան յօդուածը ըլլալու էր, որմէ ետք ան բազմաթիւ այլ գործերով պիտի հիմնէր իր համբաւը: Վկայակոչելով Ժիրայր Դանիէլեան խմբագիրը, դոկտ. Քասունին ըսաւ, որ ան հսկայ աշխատանք տարած է Հայկազեանի Հայագիտական Հանդէսին ծանօթագրութիւններու եւ մէջբերումներու վերանայման ու խմբագրական աշխատանքին մէջ, «Երիտասարդ Հայ» եւ «Շիրակ» պարբերաթերթերուն եւ վերջապէս՝ «Վաւառ»ին խմբագրութեամբ: Դոկտ.ը ցաւով անդրադարձաւ 4 Օգոստոսի ահաւոր պայթումի հետեւանքով Դանիէլեանին թափին կասեցման, ու մաղթեց, որ Ժիրայր Դանիէլեանին վաստակը քաջալեր հանդիսանայ այլոց՝ շարունակելու համար մատենագիտական աշխատանքներ:




Ձեռնարկին երրորդ բանախօսն էր Կարօ Յովհաննէսեան: Ան ըսաւ, որ կարելի չէր պատկերացնել այսպէս մտաւորական բնոյթով ձեռնարկ առանց Ժիրայր Դանիէլեանին, որ մեռաւ իր էութեան անբաժան մաս եղող միջավայրէն հեռու: Եւ թէեւ հեռու էր Լիբանանէն, սակայն լաւատեղեակ էր անոր կեանքի բոլոր ձեռնարկներուն ու գործերուն, իրենց ամբողջական մանրամասնութիւններով: Յովհաննէսեան ըսաւ, որ սիրելիի մը մահը պարապուծիւն կը ստեղծէ սիրեցեալներուն մօտ, եւ այդպէս ալ պարապուծիւն մը ձգեց Դանիէլեանի մահը, մանաւանդ, երբ Դանիէլեան մնայուն շարժումի մէջ էր օրուան ընթացքին՝ խմբագրական, հրատարակութեան պատրաստութեան, ուսուցչական, ուսումնասիրական, բանասիրական եւ իր այլ աշխատանքներով: Յովհաննէսեան պատմեց, որ Պոսթընի մէջ Դանիէլեանին տուած այցելութեան շէր գտած իր եռանդուն բարեկամ Ժիրայրը. հոգեկան բեկումը ու ընկճախտը կլանած էին անոր հոգին՝ որքան ալ փորձէր թաքցնել այդ: Ժիրայր Դանիէլեանին ի պատիւ մեծարանք մը պիտի կատարուէր Պոսթընի մէջ, բայց ան այլազան պատճառներու բերումով ջնջած էր: Այնուամենայնիւ ան

կ'ուզէր, որ անպայմանօրէն լոյս տեսնէր իրեն նուիրուած հատորը, որովհետեւ կ'ուզէր յիշուիլ, ինչպէս ունէ հարազատ մտաւորական կամ իրաւ մարդ, ըսաւ բանախօսը: Հաշտուած էր իր մարմինին մէջ ամբօրէն բոյն դրած հիւանդութեան հետ եւ գիտէր, թէ վեց ամիսէն մէկ տարուան կեանք ունէր: Ատով հանդերձ ժիրայր Դանիէլեան ազնուական մնաց այս յայտնութեան դիմաց, հաստատեց Կ. Յովհաննէսեան: Խօսելով անձին մասին, բանախօսը յայտնեց, որ յանձնառու մտաւորական էր ան եւ ունէր իր անկախ գաղափարական աշխարհայեացքը՝ հիմնուած ազգի, հայրենիքի եւ մարդկայնութեան հասկացողութեան վրայ: Կ'ատէր միջակութիւնները եւ օժտուած էր մտաւորականի բարձր արժէքներով:

Յովհաննէսեան շարունակեց, որ ժիրայր Դանիէլեան պարբերականներու գիրքեր խմբագրեց եւ աւելի քան հինգ տասնամեակներ հրատարակումներ կատարեց: Տարիներու սահունին հետ զարմանալի յամառութեամբ մը բազմապատկուեցաւ իր եռանդը, որ սակայն, ցաւ ի սիրտ, կանգ առաւ 4 Օգոստոսի շարադէտ պայթումին պատճառով: Յովհաննէսեան ընդգծեց, որ ժիրայր Դանիէլեան իր հոգին աւանդեց 25 Նոյեմբեր 2022-ին, բայց մէկն էր Պէյրութի պայթումի նահատակներէն, որովհետեւ ոչինչ կրցաւ արտադրել այդ աղէտալի թուականէն ետք՝ բացի քանի մը յիշատակներու գրառումէն:

Յովհաննէսեան եզրափակեց, որ ժիրայրներու անդարձ մեկնումը անհրապօք կը դարձնէ մեր կեանքը՝ մանաւանդ, որ մեր մտաւորական ընտրանիի ընտիրներէն մէկն էր ան ու տակաւին տալիք ունէր՝ յատկապէս մատենագիտական բանասիրական մարզին մէջ: Իր մահով հարցը կը դրուի մտաւորական պատրաստելու յոյժ կենսական հարցին, որովհետեւ մեր լաւագոյն տարրերը մէկը միւսին ետեւէն անդարձ կը մեկնին ու մեր մտաւորական դրամագլուխը հետզհետէ կը պարպուի, ըսաւ ան ու մաղթեց, որ ժիրայրներու տերեւաթափին յաջորդէ նոր ժիրայրներու գարունը:

Վերջապէս, իր եզրափակիչ Հայրապետական խօսքը փոխանցեց Նորին Ս. Օծութիւնը: Վկայակոչելով ժիրայր Դանիէլեանին հետ իր մտերմութիւնը, Հայրապետը ըսաւ, որ գինք ճանչցած է տարբեր ժամանակներու, տարբեր հանգամանքներով եւ տարբեր շրջագիծերէ ներս: Ան նշեց, որ առաջին անգամ Դանիէլեանին հանդիպած է 1971-ին, Հայրապետին՝ Հայկազեան համալսարանի գրաբարի դասաւանդութեան օրերուն, երբ ժ. Դանիէլեան պատասխանատուն էր Հայկազեանի հայագիտական գրադարանին ու իր փոքր գրասենեակին մէջ ընդունելով այն ժամանակ Արամ արեղան, օգտակար կը հանդիսանար երիտասարդ ուսումնասէրին: Վեհափառ Հայրապետը յիշեց, որ այդ ժամանակ խումբ մը երիտասարդներ, ներառեալ ժիրայր Դանիէլեան, Հայագիտականի ամպիոնի վարիչ Վահէ Օշականի քաջալերանքով, հրատարակեցին «Նրիտասարդ Հայ» պարբերաթերթը՝ նպատակ ունենալով հայ երիտասարդի կեանքին մէջ դրական յեղափոխութիւն յառաջացնել, որ սակայն



գտնուեցաւ աւանդական կուսակցութիւններու ընդդիմութեան դէմ յանդիման եւ դադրեցաւ հրատարակուելէ: Հայրապետը շարունակեց, որ ժիրայր Դանիէլեան ճանչցած էր նաեւ Լիբանանի թեմի իր առաջնորդութեան օրերուն, երբ Դանիէլեան իբրեւ տնօրէն դրական մասնակցութիւն կը բերէր կրթական ծրագիրներուն եւ կրթական մշակներու հետ ժողովներուն: Վերջապէս, Հայրապետը ճանչցած էր զինք Կաթողիկոսարանէն ներս՝ որպէս Դպրեվանքի ուսուցիչ, Կաթողիկոսարանի Արեւմտահայերէնի պաշտպան աշխատանքներու ներգործող, Հայագիտական կեդրոնի պատասխանատու, հրատարակչական աշխատանքներու մէջ աշխատող՝ յատկանշականօրէն մատենագիտութեան աշխատանքի եւ Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիոյ յուշամատենաներու շարքերուն:

Վեհափառ Հայրապետը իր խօսքը եզրափակեց՝ ըսելով, որ ժիրայրին մասին ինչ որ ըսուեցաւ երեք բանախօսներուն կողմէն արժան է եւ ճիշդ: Ան բանասէր էր բառին ամբողջական առումով, որ նաեւ, իբրեւ տնօրէն եւ ուսուցիչ, սերունդներ պատրաստեց ու իր կարեւոր ներդրումը ունեցաւ Լիբանանի հայութեան մշակութային կեանքէն ներս: Նորին Ս. Օծութիւնը ըսաւ, որ Մուշեղ Իշխան իր գիրքերուն մասին բանաստեղծութիւն մը գրած է, ուր կ'ըսէ՝ «սիրելի գիրքեր, ես պիտի երթամ, դո՛ւ պիտի մնաս»: Ժիրայրը գնաց, սակայն իր գրած, պահած, հաւաքած, պաշտպանած, սիրած ու սիրահարուած գիրքերը պիտի մնան եւ այդ գիրքերով ժիրայրը պիտի մնայ: Յարգանք իր յիշատակին: Թող Աստուած երկնային օթեկաններուն մէջ ընդունի սիրելի ժիրայրին հոգին, եզրափակեց Հայրապետը իր խօսքը:

ՄԱՀԱԳՐՈՒԹԻՒՆ



Հ Ա Ն Գ Ի Ս Տ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Հայրապետը եւ Հայ Եկեղեցւոյ
Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբանութիւնը
սրտի դառն կսկիծով կը գուժեն
Կիլիկեան Ուխտի Միաբանութեան երիցագոյն անդամներէն

ԳԵՐՇ. Տ. ԵՓՐԵՄ ԱՐՔ. ԹԱՊԱԳԵԱՆԻ
(1941-2023)

վախճանումը որ պատահեցաւ Շաբաթ, 21 Յունուար 2023-ին,
Լոս անճելըսի մէջ:

ՎԵՐՋԻՆ ՀՐԱԺԵՇՏ Տ. ԵՓՐԵՄ ԱՐՔ. ԹԱՊԱԳԵԱՆԻ

Օրհնութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Չորեքշաբթի, 1 Փետրուար 2023-ի երեկոյեան, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ հայ եկեղեցւոյ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան երիցագոյն միաբաններէն, Հիւս. Ամերիկայի Արեւմտեան Հայոց Թեմի վաստակաւոր նախկին առաջնորդ Տ. Եփրեմ Արք. Թապագեանի (1941-2023) թաղման եկեղեցւոյ կարգն ու վերջին օծումը: Ս. Պատարագ մատոյց եւ վերջին օծման կարգին նախագահեց Արեւմտեան Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Եպս. Տօնոյեան, աղօթակից ունենալով սրբազան արքեպիսկոպոսներ, վարդապետներ, քահանաներ, ազգային եւ համայնքային ներկայացուցիչներ եւ հաւատացեալներու բազմութիւն մը:

Վախճանեալ Տ. Եփրեմ Արքեպիսկոպոսի թաղման տան կարգին նախագահեց Հիւս. Ամերիկայի Արեւելեան Հայոց Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Անուշաւան Արք. Դանիէլեան, իսկ եկեղեցւոյ կարգին՝ նախագահեց Գանատայի Հայոց Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Բաբգէն Արք. Չարեան եւ ընթերցեց լուսահոգի Տ. Եփրեմ Արք.-ի կեանքն ու ծառայութիւնը գնահատող Վեհափառ Հայրապետին ցաւակցագիրը:



Իր արտասանած պատգամին ընդմէջէն Տ. Թորգոմ Եպս. Տօնոյեան սրտառու զգացումներով խօսեցաւ վախճանեալ սրբազան հօր անձին ու կեանքի հանգրուաններուն մասին՝ զայն բնութագրելով իբրեւ ամենահամարձակ արտայայտուող, քաջ ու անվեհեր, տոկուն ու աներեր, մշակութասէր ու ազգի հարցերով տազնապող եկեղեցական, որ 1977-էն 1985, իբրեւ Արեւմտեան Թեմի երկրորդ առաջնորդ, ձեռնհասօրէն վարեց ազգային-եկեղեցական ղեկավարի պաշտօնը: Սրբազան հայրը նաեւ արտայայտուեցաւ Արեւմտեան Թեմի, որպէս ինքնուրոյն միաւոր, գործունէութեան յիսուն տարիներու պատմութեան ու գալիք արշալոյսներու մասին՝ շեշտելով, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետական Ս. Աթոռը իր Վեհափառ Կաթողիկոսով, սրբազան ու վարդապետ միաբաններով, քահանայ հայրերով, աշխարհական ժողովականներով ու նուիրեալներով հաւատքի առաքելութիւնն է որ կը մարմնաւորէ՝ յատկապէս ազգի սփիւռքացած ածուններուն մէջ եւ Հայրապետական հռչակագրին ի լուր՝ ներքին վերաշխուժացման ճամբով Սփիւռքը կը հռչակէ ամէնուժեղ, անհաւասարելի եւ ամենավստահելի կռուանը Հայաստան եւ Արցախ աշխարհաց մշտնջենաւորութեանց, Յաւիտենականին միջնորդութեամբ:

Յընթացս սրբազան արարողութեան, հոգեւոր հայրեր յարգանքով մերձեցան Տ. Եփրեմ Արքեպիսկոպոսին եւ համբուրիւ ողջոյն առին անոր միւռոնուած աչէն ու հետը ողջոյն յղեցին Կիլիկեան Ուխտի յաղթականներուն:

Յայտնենք, որ արարողութեանց ընթացքին Հոգշ. Տ. Զարեհ Վրդ. Սարգիսեան ընթերցեց վախճանեալ սրբազան հօր կենսագրականը:

Հինգշաբթի, 2 Փետրուար 2023-ի առաւօտեան ժամը 9:30-ին, Հովիվուտի Ֆորեսթ Լոնի մէջ տեղի ունեցաւ սրբազան հօր թաղման-գերեզմանի կարգը:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻՇԵՐ Տ. ԵՓՐԵՄ ԱՐՔ. ԹԱՊԱԳԵԱՆ

Ծնած է 24 Հոկտեմբեր 1941-ին, Պէյրութ (Լիբանան): Աւագանի անունով Յակոբ: Նախնական կրթութիւնը ստացած է Նոր Սիւ թաղամասի Լուսինեան Ազգ. Վարժարանէն ներս: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանք մուտք գործած է 1 Հոկտեմբեր 1955-ին:

Աւարտելէ ետք Դպրեվանքի Ժառանգաւորաց բաժինը, Սարկաւագ ձեռնադրուած է 1960-ին, ձեռամբ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Խորէն Արք. Բարոյեանի: Ապա երեք տարի շարունակելով դպրեվանքեան ուսումը Ընծայարանի բաժնին մէջ, Կուսակրօն Եկեղեցական ձեռնադրուած եւ օծուած է 26 Մայիս 1963-ին, ձեռամբ Հիւս. Ամերիկայի Առաջնորդ Հրանդ Արք. Խաչատուրեանի, եւ վերակոչուած՝ Տ. Եփրեմ Աբեղայ:



Վարդապետական Գաւազան ստացած է 1965-ին, ձեռամբ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Տաճատ Արք. Ուրֆալեանի, աւարտաճառ ներկայացնելով «Նախալուսաւորչեան Սուրբեր»-ը: Ծայրագոյն Վարդապետութեան իշխանութիւն ստացած է 1978-ին, ձեռամբ Գարեգին Բ. Աթոռակից Կաթողիկոսի: Եպիսկոպոս ձեռնադրուած եւ օծուած է 18 Մայիս 1980-ին, ձեռամբ Գարեգին Բ. Աթոռակից Կաթողիկոսի:

1963-1965 դասաւանդած է Դպրեվանքէն ներս իսկ որպէս վանական պաշտօն, ստանձնած է Մայրավանքի մատակարարապետութիւնը: 1965-1968 հոգեւոր առաքելութեամբ գործուղուած է Իրանա-Հնդկաստանի Թեմ (Իսֆահան-Պարսկաստան), որպէս Առաջնորդական Տեղապահ:

1973-1977 հոգեւոր հովիւ նշանակուած է Ամերիկայի Արեւմտեան Թեմի էնսինոյի Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ: 1977-ին Առաջնորդ ընտրուած է Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմին: Իր Առաջնորդական պաշտօնավարութեան շրջանին թեմը արձանագրած է եկեղեցաշինական եւ դպրոցաշինական իրագործումներ, սեփական Առաջնորդարանի գնումը կատարուած է, հրատարակուած են դասագիրքեր եւ Առաջնորդարանի Հոռմկլա պաշտօնաթերթը: Անոր առաջնորդական շրջանը եղած է ութը տարի, 1977-1985:

2000-2002 տարիներուն, եղած է Կաթողիկոսական Փոխանորդ Քուէյթի Հայոց Թեմին: 1998-2005 ստանձնած է Կաթողիկոսարանի «Կիլիկիա» Թանգարանի տեսչութիւնը: Սրբազան հայրը իր բարձրագոյն ուսումը ստացած է Փարիզի Institut Catholique Համալսարանին մէջ:

Վերջին 15 տարիներուն ընթացքին, Սրբազան հայրը հանգստեան կոչուած է եւ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմէն ներս՝ ծառայած:

ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԷՆ

**ՎԵՅՈՒՄԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ
ԱՍՍԸՆՈՐԵԱՅ ՇՆՈՐՀԱՌՐԱՆՔՆԵՐԸ**

Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան տօներուն առիթով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս պետական ու կրօնական բարձրաստիճան պատասխանատուներու հետ ունեցաւ հեռաձայնային հաղորդակցութիւն եւ ստացաւ պաշտօնական նամակներ:

**ԳՐԱՎԵՕԶԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ
ՏՆՕՐԵՆԻՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՆԹԻԼԻԱՍ**

Հինգշաբթի, 29 Դեկտեմբեր 2022-ին, Գարակէօզեան հաստատութեան տնօրէն Սերոբ Օհանեան, ընկերակցութեամբ Ժանին Դանիէլեանին, այցելեցին Անթիլիաս եւ հանդիպեցան Նորին Սրբութեան: Անոնք Հայրապետին լայն զեկոյց տուին հաստատութեան գործունէութեան շուրջ եւ յանուն հաստատութեան Նորին Սրբութեան փոխանցեցին իրենց բարեմաղթութիւնները:

**ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՀՈՉԱԿԱԳԻՐԻ ԸՆԹԵՐՅՈՒՄ
ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԵՋ**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը, մեկնելով Սփիւռքի պարզած ներկայ իրավիճակէն եւ հայ կեանքին մէջ անոր ունեցած առանցքային դերակատարութենէն, 2023 տարին եւս հրոչակեց «ՍՓԻՒՌՔԻ ՏԱՐԻ (Բ.) Ինքնա-

քննութենէ Վերակազմակերպում» շեշտաւորումով:

Արդարեւ, Կիրակի, 8 Յունուար 2023-ին, յընթացս Ս. եւ Անմահ Պատարագին, Կաթողիկոսանիստ Վանքին մէջ բացատրուեցաւ Հայրապետական Հոչակագիրը՝ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեանի կողմէ: (Հայրապետական Հոչակագիրը ընթերցել էջ 9-21):

**ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆՁՆԵՐՈՒ ԴԵՄՊԱՆԸ
ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԵՋ**

Չորեքշաբթի, 11 Յունուար 2023-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց Լիբանանի մօտ Ամերիկայի Միացեալ Նահանգներու դեսպան Տորոթի Շիան: Հանդիպման ներկայ էր նաեւ դեսպանին փոխանորդը եւ մարդկային իրաւանց պատասխանատու Կայ Լին:

Հանդիպումը առիթ հանդիսացաւ ընդհանուր արժեւորում կատարելու Լիբանանի ներկայ կացութեան եւ յատկապէս անդրադառնալու նախագահական ընտրութեան եւ ընկերատնտեսական տագնապին:

Վեհափառ Հայրապետը նաեւ անդրադարձաւ Արցախի պարզած ներկայ մտահոգիչ կացութեան եւ առաջարկեց դեսպանին, որ Միացեալ Նահանգներ կատարեն անհրաժեշտ օժանդակութիւնը Բերձորի միջանցքը վերաբանալու աշխատանքներուն զծով՝ մղուած մարդասիրական մտահոգութենէ:

**ՀԸՉՊԱԼԼԱՅԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ
ԱՅՑԵԼԵՑ ԱՆԹԻԼԻԱՍ**

Հինգշաբթի, 12 Յունուար 2023-ին, Հրգպալլա կուսակցությունը ներկայացնող բարձրաստիճան պատուիրակություն մը այցելեց Կաթողիկոսանիստ Վանք եւ հանդիպում ունեցաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին հետ:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան Լիբանանը յուզող այժմէական հարցեր, յատկապէս՝ ընկերատնտեսական տագնապը եւ նախագահի ընտրությունը: Պատուիրակությունը շեշտեց Լիբանանի հայութեան կարեւոր դերը մասնաւորաբար քաղաքական ու տընտեսական մարզերէն ներս:

**ՊԱՊԱԿԱՆ ՆՈՒԻՐԱԿԸ ԱՅՑԵԼԵՑ
ՎԵՅԱՓՈՐ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

Հինգշաբթի, 12 Յունուար 2023-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց այցելությունը Լիբանանի մօտ Պապական նուիրակ Փաուլօ Պորճիա եպիսկոպոսը:

Նորանշանակ նուիրակին առաջին հանդիպումը ըլլալով Վեհափառ Հայրապետին հետ, Նորին Սրբությունը լայնօրէն անդրադարձաւ ընդհանրապէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութեան, թեմական կառոյցներուն ու միջ-եկեղեցական գործակցութեան, եւ ապա Լիբանանի հայութեան:

Տեսակէտներու փոխանակում տեղի ունեցաւ մասնաւորաբար նախագահի ընտրութեան առնչուած զարգացումներու շուրջ: Նորին Ս. Օծությունը ողջունեց Վատիկանին գորակցությունը Արցախի հարցին գծով:

Հանդիպման ընթացքին, Պապական նուիրակը Վեհափառ Հայրապետին

փոխանցեց Նորին Սրբություն Ֆրանսիս Պապին կողմէ յղուած նամակ մը:

**«ԽԱՉԻԿ ՊԱՊԻԿԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՍ»Ի ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ
ԳՈՒՄԱՐԵՑ ԻՐ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍԱԸ**

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Խաչիկ Պապիկեան Հրատարակչական Հիմնադրամ»ի յանձնախումբի հերթական նիստը տեղի ունեցաւ Երկուշաբթի, 16 Յունուար 2023-ին, Վեհարանին մէջ: Նիստին նախագահեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսը: Մասնակցեցան ատենապետ Երուանդ Փամպուքեան, փրոֆ. Աշոտ Մելքոնեան, Շահան Գանտահարեան, Խաչիկ Տէտէեան եւ հեռակայ՝ Խաչիկ Տէր-Ղուկասեան:

Վեհափառ Հայրապետը ընդհանուր արժեւորումը կատարեց «Խաչիկ Պապիկեան Հրատարակչական հիմնադրամ»ի վերջին հրատարակություններուն եւ շեշտը դրաւ յատկապէս ժամանակակից խնդիրներուն հետ աղերս ունեցող ուսումնասիրություններ կամ գիտահետազօտական աշխատասիրություններ հրատարակելու կարեւորութեան վրայ:

Ապա, նիստը կեդրոնացաւ Լօզանի դաշնագիրի հարիւրամեակին առիթով կազմակերպուելիք իրաւաքաղաքական բնոյթի քննարկումներ կազմակերպելու անհրաժեշտութեան վրայ: Այստեղ, մէկ կողմէ Թուրքիոյ փոքրամասնություններու իրաւունքներու բարձրացման իրաւական կէտեր նկատի առնելու հարց կայ, միւս կողմէ սակայն՝ Լօզան-տարածքային իրաւաւունքներ հակասութեան հետ հաշուի նստելու խնդիր: Հետեւաբար, թէ՛ պատմագիտական եւ թէ՛ իրաւագիտական յանելեալ խորհրդակցություններ կա-

յացնելու անհրաժեշտությունը կայ, այս առիթը Հայ Դատի ուղղութեամբ ճիշդ բարձրացնելու եւ համապատասխան հնչեղություն ապահովելու առումով:

Որոշուեցաւ անգլերէնի թարգմանել հայրենի ծանօթ թրքագետ փրոֆ. Ռուբէն Սաֆրաստեանի քեմալական Թուրքիոյ վերաբերող հրատարակուած եւ նոյն հրատարակութեան ընդլայնուած եւ նոր նիւթերով հարստացած աշխատասիրութիւնները: Միաժամանակ, դոկտ. Հուստա Ֆահրսի արաբերէն լեզուով հայ-թրքական յարաբերութիւններու թեմայով ասարտաճառը որոշուեցաւ լոյս ընծայել: Սօսիկ ապագային նաեւ պիտի հրատարակուի The Armenian Cultural Genocide խորագիրով ուսումնասիրութիւնը:

«Խաչիկ Պապիկեան Հրատարակչական Հիմնադրամ»ի յանձնախումբը կը շարունակէ ընդունիլ Հայաստանէն, Արցախէն եւ Սփիւռքէն հայալեզու թէ օտարալեզու պատմաքաղաքական նիւթեր եւ գիտահետազօտական աշխատանքներ եւ կը ծրագրէ կազմակերպել յատուկ յոբելէնական առիթներու գիտաժողովներ՝ համախմբելով հայ գիտական եւ քաղաքական միտքի ներկայացուցիչները:

«ԾԻՆԻՇԵԱՆ ՅԻՇԱՏԱԿԻ ՁԵՌՆԱՐԿ»Ի ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ՏՆՕՐԵՆԸ ԱՅՅԵԼԵՑ ԿԵՅԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Շաբաթ, 28 Յունուար 2023-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց «Ըինիշեան Յիշատակի Ձեռնարկ»ի նորանշանակ տնօրէն երեցկին Քրիստին Դանիէլեան-Սարգիսեանը, ընկերակցութեամբ Լիբանանի խորհրդատու մարմնի ատենապետ Ալին Տէյիրմէնճեանի:

Իբրեւ նորանշանակ տնօրէն, երեց-

կինը եկած էր ստանալու Վեհափառ Հայրապետին օրհնութիւնը: Հայրապետը ջերմօրէն ողջունելով Դանիէլեանի նշանակումը տնօրէն՝ անդրադարձաւ «Ըինիշեան»ի առաքելութեան եւ մեծապէս գնահատեց հաստատութեան կատարած մարդասիրական աշխատանքները՝ Լիբանանի, Սուրիոյ ու Հայաստանի մէջ: Նորին Ս. Օծուրինը յիշեց, թէ մօտէն ծանօթ է «Ըինիշեան Յիշատակի Ձեռնարկ»ի գործունէութեան ու Երիցական եկեղեցոյ, ուր պահ դրուած է հաստատութեան դրամագլուխը եւ անդրադարձ կատարեց մեր եկեղեցոյ հետ անոր ունեցած սերտ գործակցութեան:

Շնորհաւորելով նորանշանակ տնօրէնը՝ Վեհափառ Հայրապետը թելադրեց, որ յատուկ կարեւորութիւն ընծայուի կարիքաւոր ընտանիքներու յատկապէս դեղորայքի օժանդակութեան, նկատի ունենալով Լիբանանէն ու Սուրիայէն ներս շարունակուող ընկերային-տնտեսական տագնապը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ «ԹՈՉՆՈՑ ԲՈՅՆ» ԱՅՅԵԼԵՑ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը այցելեց Լիբանանի Փըպլէյլ պատմական քաղաքին մէջ գտնուող «Թոչնոց Բոյն» եւ Հայոց Յեղասպանութեան Որբերու «Արամ Պեգիքեան» թանգարան եւ մօտէն հետեւեցաւ այնտեղ կատարուող աշխատանքներուն:

ԲԱԹԱՐԻ ԴԵՍՊԱՆԸ ԱՅՅԵԼԵՑ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Չորեքշաբթի, 1 Փետրուար 2023-ի յետմիջօրէին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց Քա-

թարի նորանշանակ դեսպան Իպրահիմ Պըն Ապտ Ալ-Ազիզ Սահլաուիի այցելությունը: Հանդիպման ներկայ էին Արաբական Միացեալ Էմիրութեանց, Քաթարի եւ Շրջակայից Հայոց Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Մեսրոպ Եպս. Սարգիսեան եւ Ազգային Կեդրոնական Վարչութեան համա-ատենապետ Գրիգոր Սահսերէճեան:

Հանդիպումին լայն քննարկումի ենթարկուեցան հայ եկեղեցւոյ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութեան ու թեմական կառոյցներուն, Լիբանանի այժմու կացութեան, նախագահական ընտրութեան եւ Քաթարի հայ համայնքին առնչուած հարցեր:

Վեհափառ Հայրապետը իր բարձր գնահատանքը յայտնեց միջ-կրօնական բնագաւառէն ներս, ինչպէս նաեւ Միջին Արեւելքի մէջ Քաթարի դրական դերակատարութեան եւ անոր ցուցաբերած լայնախոհ մօտեցումներուն նկատմամբ: Հանդիպման աւարտին, Նորին Ս. Օծուծինը նամակ մը յանձնեց դեսպանին ուղղուած Քաթարի Էմիր Թամիմ Պըն Համատ Ալ-Սանիին:

**ՎԵՅԱՓԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՍՕՏԷՆ
ԿԸ ՅԵՏԵՒԻ ՍՈՐԻՈՅ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ
ԿԻԼԻԿԻՈՅ ՄԵՋ ԵՐԿՐԱՇԱՐԺԻՆ
ՅԱՌԱՋԱՅՈՒՅԱԾ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ
ՍԱՐԴԱՅՅԻՆ ՈՒ ՆԻԹԱԿԱՆ ՎԼԱՍՆԵՐՈՒՆ**

Երկուշաբթի, 6 Փետրուար 2023-ի առաւօտեան վաղ ժամերուն, 7,8 ուժգնութեամբ ահաւոր երկրաշարժ մը հարուածեց Սուրիա-Թուրքիա սահմանամերձ շրջանը, որ գրեթէ դարձաւ գետնահաւասար: Մարաշը որպէս կեդրոն ունեցող այս երկրաշարժին ցնցումները հասան մինչեւ Լիբանան, Կիպրոս եւ այլ մօտակայ երկիրներ:

Յաջորդող օրերուն ընթացքին, ուժգին եւ թեթեւ երկրաշարժներ եւ յետցնցումներ, շարունակեցին խուժապի մատնել տեղի բնակիչները:

Առաջին երկրաշարժէն քանի մը վայրկեան անց արդէն խոր կսկիծով իմացանք բնական աղէտին թողած աւերը եւ բնականաբար, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը անմիջապէս կապ հաստատեց տուժած շրջաններու հոգեւոր ու համայնքային պատասխանատուներուն հետ՝ մօտէն իրազեկ դառնալու համար տեղւոյն կացութեան եւ մեր համայնքի զաւակներուն պատճառած վնասներուն մասին:

Բարեբախտաբար, Լիբանանի մէջ երկրաշարժը չյառաջացուց մարդկային կամ նիւթական մեծ կորուստներ:

Հալէպի պատմական մեր գաղութին մէջ, դժբախտաբար, բաւական լուրջ վնասներ արձանագրուեցան: Վնասուած բազմաթիւ շէնքերու, որոնց շարքին Հալէպի պատմական Ս. Քառասնից Մանկանց Մայր եկեղեցին, եւ վիրաւորներու կողքին, ցաւ ի սիրտ գաղութը կորսնցուց իր բարեպաշտ ընտանիքներէն մայր մը եւ իր որդին: Գաղութը կորսնցուց նաեւ հալէպահայ այլ ընտանիք մը՝ մայր եւ իր երկու զաւակները, որոնք վերջին տարիներուն Ալեքսանտրէթի մէջ բնակութիւն հաստատած էին:

Քէսապի մէջ այս երկրաշարժէն մեծ վնասներ կրեց Ս. Աստուածածին եկեղեցին ու կարգ մը տուներ վնասուեցան, իսկ Ճեզիրէի շրջանը բարեբախտաբար վնասներ չկրեց: Ինչ կը վերաբերի հայկական Եագուպիէ գիւղին, Նորին Սրբութիւնը խոր ցաւով իմացաւ այս գիւղի հսկայ աւերներուն մասին, որոնց շարքին նաեւ, Ս. Աննա եկեղեցին:

Վեհափառ Հայրապետը շարունա-

կական կապ հաստատելով Բերիոյ հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Մակար Եպս. Աշգարեանին եւ համայնքային պատասխանատուներուն հետ, մօտէն հետեւեցաւ երկրաշարժին պատճառով դժուարութեան մատնուած մեր ժողովուրդի զաւակներու իրավիճակին: Յայտնենք, որ մեր պատասխանատուները յատուկ հոգածութիւն ու խնամք կը ցուցաբերեն եօթը կեդրոններու մէջ ապաստանած մեր հայորդիներուն՝ անոնց հայթայթելով անհրաժեշտ կարիքներ: Այս առիթով հոգեւոր թէ աշխարհական համայնքի պատասխանատուները Նորին Սուրբ Օծութեան փոխանցեցին, որ յատուկ յանձնախումբի ճամբով սկիզբ առած է վնասուած տուներու արձանագրութեան աշխատանքը:

Երկրորդ ուժգին երկրաշարժը պատահեցաւ առաջինէն երկու շաբաթ ետք, Երկուշաբթի, 20 Փետրուարին, 6,4 աստիճան ուժգնութեամբ, որ ցնցեց հարաւային Կիլիկիոյ շրջանները, յատկապէս՝ Անտիոքը ու Ալեքսանտրէթը, հասնելով մինչեւ Սուրիա՝ Քէսայ, Հալէպ, Լաթաքիա:

Այս մէկը ամէնէն շատ վնաս հասցուց Քէսային: Ս. Աստուածածին եկեղեցին եւ տասնեակ մը տուներ անգամ մը եւս մեծ վնասներու ենթարկուեցան: Վեհափառ Հայրապետը մնայուն կապի մէջ մնաց Հալէպի ու Քէսայի հոգեւոր ու համայնքային պատասխանատուներուն հետ՝ աղօթելով, որ Աստուած հեռու պահէ յատկապէս շրջանի մեր ժողովուրդը նման չարիքներէ եւ վիրաւորներուն ու հիւանդներուն շուտափոյթ ապաքինում ու առողջութիւն պարգեւէ: Նշենք նաեւ մեր թեմերը անգամ մը եւս կանգնեցան ազգին կողքին եւ նիւթական, սնունդի, հագուստի եւ այլ օժանդակութիւններ ուղարկեցին գաղութին:

Աւելցնենք, որ Թուրքիոյ մեր հայորդիները եւս կրեցին վնասներ, որոնց շարքին հայազգի երգչուհի Զիլան Տիգրիսը: Երկրորդ մեծ երկրաշարժէն մեծապէս տուժեց նաեւ պատմական Մուսա լեռան միակ հայկական գիւղը նկատուող Վաքըֆը՝ իր եկեղեցիով: Մինչեւ 15 Փետրուար, Թուրքիոյ տարբեր քաղաքներուն մէջ մահացած են 11 հայեր:

Յայտնենք, որ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը Սուրիոյ հայ համայնքի հոգեւոր ու աշխարհական պատասխանատուներուն հետ դարձեալ մնայուն կապի մէջ եղաւ՝ մօտէն հետեւելով երկրաշարժին յառաջացուցած վնասներուն ու աւերներուն:

Ստացուած տեղեկութիւններուն համաձայն, ցարդ ունինք չորս զոհեր. յատկապէս Հալէպի մէջ բաւական նիւթական վնասներ արձանագրուած են: Լաթաքիոյ եւ Քէսայի վնասները յարաբերաբար աւելի նուազ են: Հալէպի մէջ Ազգ. Առաջնորդարանը եւ համայնքի ղեկավարութիւնը պատրաստած է եօթը յատուկ կեդրոններ, որպէսզի ժողովուրդը ապաստան գտնէ աւելի ապահով պայմաններու մէջ:

Մեր Ս. Աթոռին կողմէ, Վեհափառ Հայրապետը գումար մը յատկացուց Հալէպի հայութեան, յիշեալ կեդրոններուն մէջ ապաստան գտած մեր ժողովուրդի զաւակներուն սննդաբաշխումի աշխատանքներուն համար:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՅԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՅՏԵ
ՍՈՒՐԻՈՅ ՆԱԽԱԳԱՅ ՊԱՇԱՐ ԱԼ-ԱՍՍՏԻՆ

Երեքշաբթի, 7 Փետրուար 2023-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը, Սուրիոյ Հանրապետութեան նախագահ Պաշար Ալ-Ասատին յղած

ցաւակցագիրով, յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, իր խորագգաց վշտակցութիւնը կը յայտնէ Սուրիան հարուածած ծանր երկրաշարժին հետեւանքով ինկած զոհերուն, ինչպէս նաեւ զօրակցութիւն՝ վերապրողներուն:

Վեհափառ Հայրապետը նամակին մէջ կը գրէ, որ կսկիծով կը հետեւի աղէտին պատճառած ահաւոր ւաւերին եւ պատրաստակամութիւն կը յայտնէ օգնութեան ձեռք երկարելու Սուրիոյ ժողովուրդին: Նամակի աւարտին, Նորին Ս. Օծութիւնը աղօթք կը բարձրացնէ առ Աստուած, որպէսզի աղէտի զոհերուն հոգիները լուսաւորէ, շուտափոյթ ապաքինում պարգեւէ վիրաւորներուն եւ մխիթարութիւն՝ Սուրիոյ ժողովուրդին:

**ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ զՆԱՀԱՏԵՑ
«ԹՆՆՆՆՆՆ ԲՈՅՆ»Ի ՄԷՋ ՏԱՐՈՒՈՂ
ՍԱՐԿԱՍԻՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ**

Հինգշաբթի, 9 Փետրուար 2023-ին, «Թռչնոց Բոյն»ի խնամակալութիւնը այցելեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, գլխաւորութեամբ հաստատութեան տեսուչ Հոգջ. Տ. Տաճատ Վրդ. Աշրգեանի: Հայր սուրբն ու խնամակալութիւնը լայն զեկոյց տուին Վեհափառ Հայրապետին՝ հաստատութենէն ներս իրագործուող աշխատանքներուն եւ յառաջիկայ ծրագիրներուն մասին:

Ողջունելով տեսուչն ու խնամակալութիւնը՝ Վեհափառ Կաթողիկոսը իր բարձր գնահատանքը յայտնեց ի տես «Թռչնոց Բոյն»էն ներս կատարուող մարդասիրական աշխատանքներուն: Հայրապետը ըսաւ.- «Թռչնոց Բոյն»ը մեր ժողովուրդի հաւաքական յիշողու-

թեան մէջ կարեւոր դերակատարութիւն ունի, որովհետեւ ան նախաինամական մեծ գործ կատարած է Հայոց Յեղասպանութենէն ետք, դանիացի Մարիա Ճէքըպարնի գլխաւորութեամբ, խնամելով հազարաւոր հայ որբեր: Այդ որբերէն շատեր իրենց խնամքը ու դաստիարակութիւնը ստանալով «Թռչնոց Բոյն»էն ներս՝ գործօն ներկայութիւն դարձած են մեր կեանքին մէջ՝ կազմելով ընտանիք եւ դառնալով ուսուցիչ ու հոգեւորական, մտաւորական ու ազգային գործիչ: Այսօր նոյն դերակատարութիւնը կը շարունակէ «Թռչնոց Բոյն»ը՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան անմիջական խնամքին տակ»:

Այս առիթով Նորին Ս. Օծութիւնը իր ջերմ գնահատանքը յայտնեց «Թռչնոց Բոյն»ի բարերարներուն ու բարեկամներուն, որոնք նոյնիսկ Ամերիկայի ու Աւստրալիոյ հեռաւոր ափերէն իրենց լուման կը դնեն հաստատութեան ծառայութեան զանձանակին մէջ: Ան նաեւ գնահատեց «Թռչնոց Բոյն»ի մէջ ծառայող ուսուցիչները եւ փոքրիկները խնամող մայրիկները, որոնք հայր սուրբին գլխաւորութեամբ լծուած են նուիրական առաքելութեան:

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՍԱՍՆԱԿՅԻ
ՍՈՒՐԻՈՅ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ
ՉՕՐԱԿՑՈՂ ՀԱՄԱՔԻՆ**

Ուրբաթ, 10 Փետրուար 2023-ին, Պէյրութի մէջ տեղի ունեցաւ Սուրիոյ ժողովուրդին զօրակցող եւ արգելափակումները դատապարտող հաւաք մը, կազմակերպութեամբ Լիբանանի ազգային տեղեկատուական կառոյցին եւ իսլամ կրօնական հաստատութիւններէ-

րուն: Հաւաքին ներկայ էին Լիբանանի կրօնական եւ պետական բարձրաստիճան պատասխանատուներ, քաղաքական գործիչներ, ընկերային ծառայողներ եւ իսլամ կրօնական հաստատութիւններու ներկայացուցիչներ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին օրհնութեամբ, հաւաքին ներկայ գտնուեցան Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան եւ Հոգշ. Տ. Առաքել Աբդ. Գատեհեան: Այս առիթով, Սարգիս Վրդ.ը արարերէն լեզուով արտասանեց զօրակցական խօսք եւ ցուակցութիւն յայտնեց երկրաշարժի զոհերու ընտանիքներուն ու շուտափոյոջ ապաքինում՝ վիրաւորներուն:

**ՀՈԳԵՅԱՆԳԻՍ՝
ՎԱՍՆ ՀՈԳԻՈՅՆ ԵՐԱՆԱՇՆՈՐՀ
ՀԱՅՐԱՊԵՏԱՅՆ ՍՐԲՈՅ ԱԹՈՈՈՅԱ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ**

Հայ ժողովուրդի գոյատեւման համար ամբողջ կեանք մը նուիրած մեր կղերական հայրերուն յիշատակը անթառամ կը պահենք միշտ՝ վերյիշելով անոնց կատարած ծառայութիւններն ու սիրագործութիւնները՝ մանաւանդ արտակարգ ու աղէտալի պայմաններու տակ: Ս. Սահակ Պարթեւ հայրապետի յիշատակութեան Կիրակին, Փետրուար ամսու երկրորդ շաբաթը, երջանկայիշատակ հայրապետներու եւ լուսահոգի միաբան հայրերու հոգիներուն համար հոգեհանգիստ կը կատարուի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նստավայրին՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարի հիւսիսակողմը գտնուող Զարեհեան Յուշարձան-Դամբարանին մէջ:

Առ այդ, նախագահութեամբ Ս. Աթոռոյս Գահակալ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա.

Սրբազնագոյն Կաթողիկոսին, 12 Փետրուար 2023-ի առաւօտուն մատուցուած յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագին, Հայրապետական թափօրը ուղղուեցաւ Զարեհեան Յուշարձան-Դամբարան, ուր կատարուեցաւ հանդիսաւոր հոգեհանգստեան պաշտօն՝ վասն հանգուցեալ հոգւոցն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Հայրապետական Սրբոյ Աթոռոյս երջանկայիշատակ հայրապետացն եւ լուսահոգի միաբանիցն:

Հաւաքական այս հոգեհանգիստը առիթ կը հանդիսանայ մեր եկեղեցական դասուն՝ վերանորոգելու ազգին ու եկեղեցւոյ ծառայելու իր ուխտը եւ արծարծ պահելու եկեղեցական, մշակութային եւ ազգային գործունէութեամբ հայկական ինքնութիւնը կենդանի պահած մեր բարեյիշատակ կղերականներուն կատարած ծառայութիւնն ու առաքելութիւնը:

Յայտնենք, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմերու բոլոր եկեղեցիներէն ներս եւս կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԸՆԴՈՒՆԵՑ ՎԱՏԻԿԱՆԻ ՄՕՏ
ԼԻԲԱՆԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ**

Երկուշաբթի, 13 Փետրուար 2023-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց Վատիկանի մօտ Լիբանանի Հանրապետութեան դեսպան Ֆարիտ Էլ-Խազէնը: Հանդիպման ընթացքին անդրադարձ կատարուեցաւ Լիբանանի նախագահական ընտրութիւնը արագացնելու գործընթացին, մասնաւորաբար այս գծով վերջերս Անթիլիասի կողմէ առնուած նախաձեռնութեան լոյսին տակ:

**ՎԵՅԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ՄԻԱՑԵԱԼ ԱԶԳԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ**

Երեքշաբթի, 14 Փետրուար 2023-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց Միացեալ Ազգերու Կազմակերպութեան (Մ.Ա.Կ.) ներկայացուցիչ ղոկտ. Եռաննա Վրոնեցքան:

Հանդիպումը առիթ հանդիսացաւ ընդհանուր արժեւորում մը կատարելու Լիբանանի դիմագրաւած ներկայ մարտահրաւերներուն, Լիբանանի գրծով Փարիզի (Ֆրանսա) մէջ վերջերս կայացած հանդիպումին, որուն մասնակցած էին Ամերիկայի Միացեալ Նահանգները, Ֆրանսան, Սէուտական Արաբիան, Եգիպտոսն ու Քաթարը, Լիբանանի տնտեսական ներկայ կացութեան եւ նախագահական ընտրութեան առնչուած հարցերուն:

Յիշեալ հարցերուն գծով Մ.Ա.Կ.ի ներկայացուցիչը իր տեսակետները պարզեց Վեհափառ Հայրապետին: Նորին Ս. Օծուրիւնը իր կարգին, շեշտեց նախագահական շուտափոյթ ընտրութիւն կատարելու անհրաժեշտութիւնը, որպէսզի կարելի ըլլայ նոր կառավարութեան հաստատումով ու բարեկարգութեան մշակումով երկիրը դնել վերականգնումի ընթացքին մէջ:

**ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԷՆ
Յ.Յ.Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ
ՄԻՈՒԹԻՆՆԵՐՈՒ 100-ԱՄԵԱԿԻ ՄԵԿԱՐԿ**

Շաբաթ, 18 Փետրուար 2023-ին, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (Հ.Յ.Դ.) Լիբանանի պատանեկան միութիւններու պատանիները, ընկերակցութեամբ Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական կոմիտէի եւ հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ երեսփոխան Յակոբ Բագրատունիին,

պատանեկան միութիւններու ընդհանուր վարիչ մարմինին եւ վարիչներուն, այցելեցին Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Սրբազնագոյն Կաթողիկոսին:

Հաւաքին սկիզբը խօսք առաւ պատանեկան միութեանց ընդհանուր վարիչ մարմինի ատենապետ Զարեհ Պոյաճեան, որմէ ետք պատանիներուն իր հայրական պատգամը փոխանցեց Վեհափառ Հայրապետը: Ան իր խօսքին մէջ ընդգծեց՝ ըսելով, որ մենք ձեզմով հպարտ ու ուրախ ենք, եւ որքան շատնայ ձեր թիւը եւ ներկայութիւն դառնաք մեր եկեղեցական ու ազգային կեանքին մէջ, մեր ազգը եւ եկեղեցին այնքան աւելի կը հզօրանան: Խօսելով հայկական ու ազգային մեր ինքնութեան մասին՝ ան ըսաւ. *«Մենք ինքնութիւն ունինք, մեր արժէքներով ու իտէալներով տարբեր ենք այլ ազգերէ, եւ վստահ եմ, որ պատանեկան միութիւններուն մէջ այս բոլորին մասին կը խօսիք եւ կը քննարկէք: Այսօր մենք ունինք պատմական Հայաստանէն բաժին մը, փոքր Հայաստան մը, սակայն կը ձգտինք եւ կը պայքարինք մեծ Հայաստանին համար, որովհետեւ հայրենիքը կ'ուզենք տեսնել մեր իտէալին պատկերով՝ «ամբողջական Հայաստան, ամբողջական հայութեամբ»:*

Աւարտին, Հայրապետը նշեց, որ Թոշնոց Բոյնը Հայոց Յեղասպանութեան որբերու զարթօնքի կեդրոնն էր, ուրկէ նաեւ սկիզբ առած են պատանեկան միութիւնները, եւ այս պատկերը կը հաստատէ եկեղեցւոյ, հայ դատին եւ ազգային արժէքներու միախառնուած ըլլալու իրողութիւնը՝ միութեան գաղափարը: Նորին Ս. Օծուրիւնը մաղթեց, որ պատանեկան միութիւնները ծաւալեն իրենց աշխատանքները, անդամներուն թիւը բազմանայ եւ իրենց վստահուած առաքելութիւնը նոր թափով շարունակեն:

Ապա խօսք առաւ երեսփոխան Յակոբ Բագրատունի: Ան առաջին հերթին, ողջունելով Վեհափառ Հայրապետին զօրակցութիւնը պատանեկան միութիւններուն՝ ըսաւ, որ մենք բոլորս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պահակներն ենք: Կաթողիկոսութիւնը այն ամբոցն է, որ Սփիւռքի մէջ հայը հայ պահելու պայքարին մէջ հիմնական դերը ստանձնած է, եւ մենք բոլորս այս Ս. Աթոռին հաւատարիմ ծառաները ըլլալով՝ գիտենք, որ Կաթողիկոսարանը մեր տունն է, եւ ամէն մարդ իր տունը ամուր պահելու ճիգին մէջ է: Ապա, իր խօսքը ուղղելով պատանիներուն՝ ըսաւ, որ դուք մեր դարաւոր պատմութեան զաւակներն էք, եւ ձեր ճիտին պարտքն է այս ազգին գոյատեւումը ապահովել: Դիրին է գործ աշխատիլ, դրամ վաստկիլ եւ ոչ մէկ հետք ձգել, բայց արեան կանչին ականջ դնելով՝ պատանեկան միութիւնները երկրորդ դպրոցի վերածուած են, եւ այդ ձեւով դուք ձեր ժողովուրդի ծառայութեան ուղիին կը հետեւիք:

**ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ ԿԱՏԱՐՈՒԹՅԱՒ
ՍՈՒՄԿԱՅԻԹԻ ԶԱՐԴԵՐՈՒՆ ԶՈՅՈՒՄՑ
ՀԱՅՈՐԴԻՆԵՐՈՒ ՀՈԳԵՅԱՆԳԻՍ**

Նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ.
Արամ Ա. Վեհափառ Հայրապետին,

Սումկայիթի ջարդերուն զոհուած ու նահատակուած հայորդիներու հոգիներուն համար հոգեհանգստեան արարողութիւն կատարուեցաւ Կիրակի, 26 Փետրուար 2023-ին, Անթիլիասի Մայրավանքի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ:

Այս տարի 35-ամեակն է 27 Փետրուար 1988-ին Ազրպէյճանի իշխանութեան կողմէ ծրագրուած Սումկայիթի ջարդերուն: Արդարեւ, 35 տարիներ ետք Ազրպէյճանը կը շարունակէ տարբեր լծակներով սպանոյի ենթարկել հայ ժողովուրդը՝ դիմելով անհաբեկչական խմբաւորումներու ու ծաւալապաշտ պետութիւններու, ի մասնաւորի Թուրքիոյ, բանեցնելով ճնշումներ եւ շրջափակելով Արցախը: Տասնամեակներ առաջ Արցախի ազատատենչ ժողովուրդը իր սեփական ուժերով ազատագրեց իր ծննդեան իրաւունք հայրենի հողերը, սակայն Ազրպէյճան անմարդկային ու «վայրի արջի ցեղի» մշակոյթով դարձեալ խլեց ու աւերեց մեր «աւերուած, բայց սուրբ եւ հին» երկիրը: Այսօր, յիշատակելով Սումկայիթի ջարդերը եւ աղօթելով զոհերուն հոգիներուն համար, կու գանք, որպէս եկեղեցի, վերանորոգելու արդարութեան համար անխոնջ պայքար մղելու մեր ուխտը, մինչեւ որ այս երկրի վրայ ալ յաղթէ արդարութիւնը:

ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈԶ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ

ԿԻՐԱԿԻ, 1 ՅՈՒՆՈՒԱՐ 2023: Գ. ՕՐ ՊԱՀՈՑ ԾՆՆԴԵԱՆ: ԿԱՂԱՆԴ ԵՒ ՏԱՐԵՄՈՒՏ 2023 ԹՈՒԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ (ԸՍՏ ՆՈՐ ՏՈՄԱՐԻ):

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեան:

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 5 ՅՈՒՆՈՒԱՐ 2023: ՃՐԱԳԱԼՈՅՑ Ս. ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Հոգշ. Տ. Տաճատ Վրդ. Աշըգեան:

ՈՒՐԲԱԹ, 6 ՅՈՒՆՈՒԱՐ 2023: ՏՕՆ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԾՆՆԴԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ իր Հայրապետական պատգամը փոխանցեց՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ:

ՇԱԲԱԹ, 7 ՅՈՒՆՈՒԱՐ 2023: Բ. ՕՐ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ: ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՅ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Հոգշ. Տ. Եսայի Աբղ. Էօրտէքեան:

ԿԻՐԱԿԻ, 8 ՅՈՒՆՈՒԱՐ 2023: Գ. ՕՐ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Գերպ. Տ. Հրանդ Ծ. Վրդ. Թահանեան: Յընթացս Ս. եւ Անմահ Պատարագին, Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին 2023 թուականը «Սփիւռքի Տարի-2» հռչակող Հայրապետական Հռչակագիրը:

ԿԻՐԱԿԻ, 15 ՅՈՒՆՈՒԱՐ 2023: Ա. ԶԿՆԻ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերպ. Տ. Շնորհք Ծ. Վրդ. Աշըգեան:

ԿԻՐԱԿԻ, 22 ՅՈՒՆՈՒՄԱՐ 2023: Բ. ԶԿՆԻ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Աւետիք Վրդ. Տէր Կարապետեան:

ԿԻՐԱԿԻ, 29 ՅՈՒՆՈՒՄԱՐ 2023: ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ԱՌԱՋԱԻՈՐԱՑ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Վիգէն Վրդ. Տալգլըճեան:

ԿԻՐԱԿԻ, 5 ՓԵՏՐՈՒՄԱՐ 2023:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Յովակիմ Վրդ. Բանճարճեան:

ԿԻՐԱԿԻ, 12 ՓԵՏՐՈՒՄԱՐ 2023:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերպ. Տ. Ստեփանոս Ծ. Վրդ. Փաշայեան:

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 16 ՓԵՏՐՈՒՄԱՐ 2023: ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԶՕՐԱՎԱՐԱՑՆ ՄԵՐՈՑ, ՀԱԶԱՐ ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ՎԵՑ ՎԿԱՅԻՑՆ, ՈՐՔ ԿԱՏԱՐԵՑԱՆ Ի ՄԵԾԻ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Օշին Վրդ. Զուալերթեան:

ԿԻՐԱԿԻ, 19 ՓԵՏՐՈՒՄԱՐ 2023: Ա. ՔԱՌԱՍՆՈՐԴԱՑ: ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան:

ԿԻՐԱԿԻ, 26 ՓԵՏՐՈՒՄԱՐ 2023: Է. ՕՐ ՄԵԾԻ ՊԱՀՈՑ: Բ. ՔԱՌԱՍՆՈՐԴԱՑ: ԱՐՏԱՔՍՄԱՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Գարակէօզեան: